

9(47.925)

lx-30

235 g.

762

Beobachtung

1. April 1881

Handwritten notes on a small piece of paper, including the word "Beobachtung" and the date "1. April 1881".

5125

9(47.925)

2011-09

24 JAN 2006


U-30

ԱՐԺԱՆԱՑԱԾ ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄՐՑԱՆԱԳԻ

Ա.Մ.

ՄՈՆՂՈԼՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԱՐՇԱԽԱՆՔՆԵՐԸ

ԺԳ. ԴԱՐՈՒՄ




ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

Գրեց

ԳԷՈՐԳ ԱԼԹՈՒՆԵԱՆ

Դասախօս Գեորգեան Ճեմարանի



1913

Վաղարշապատ

Եկեղեցաշարի տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1004
17562

95

- 4 FEB 2013

8005 KAL AS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՍԿՈՂԱՐ ՔԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՔԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ



ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՆԻՆ



Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Բ. Ա. Ն.

Ներկայ աշխատանքը իւր բովանդակութեան և բնա-
ւորութեան կողմից երկու գլխաւոր մասերից է բաղկա-
նում, առաջին մասում քննութեան է առնուում մոնղոլական
մեծ արշաւանքը կովկասեան և փոքր ասիական երկիրնե-
րում, քաղաքական այն նուաճումները, որ ձեռնարկեցին
ու գլուխ բերին թաթարական զօրապետները այդքան փայ-
լուն ու յաջողակ կերպով: Երկրորդ մասը մի փորձ է՝ ցոյց
տալու և նկարագրելու մոնղոլներին այնպէս և այն լոյսի
մէջ, ինչպէս որ նրանք հայերին ու ժամանակակից հայ
պատմագիրներին պատկերացել են. այս մասում ինկատի
են առնուում նրանց արտաքին տեսքն ու բովանդակ երե-
ւոյթը, բարքերն ու սովորոյթները, նրանց կրօնական
մտապատկերներն ու կենցաղավարութիւնը, նրանց պա-
տերազմական արուեստն ու ռազմական գործելակերպը:
Բայց այդ երկու՝ իրարից ըստ երևոյթին տարբեր, սակայն
իրօք իրար ամբողջացնող մասերը մի նպատակ ունեն.
ըստ կարելւոյն լիակատար մի նկարագիր տալ, թէ ովքեր
էին մոնղոլները, որտեղից էին գալիս և թէ Հայաստանում
և հարևան երկիրներում ինչ յեղաշրջումներ կատարեցին:
Մեր նպատակից դուրս է այստեղ ուսումնասիրութեան
նիւթ շինել մոնղոլական տիրապետութիւնը և մոնղոլների
օրով Հայաստանում ու հարևան երկիրներում եղած հա-
սարակական վիճակը: Դա ի հարկէ մի յատուկ շարադրու-
թեան լաւ նիւթ կըլինէր և կարող էր թերեւ մի շարք կա-
րեւոր հարցեր առաջ քաշել ու լուսաբանել, սակայն այս
աշխատանքի ծրագրի մէջ դժբախտաբար տեղ բռնել չէ
կարող:

Ուսումնասիրութեանս թէ առաջին և թէ երկրորդ
մասերի համար իբրև աղբիւր ծառայել են գլխաւորա-
պէս հայ աղբիւրները: Հայ պատմագրերը լիակատար հնա-
րաւորութիւն ունէին թաթարներին իրանց բնիկ երկրում

ուսումնասիրելու: Այդ է պատճառը, որ նրանք թաթար-
ների պատմութեան համար խիստ արժէքաւոր և լրացու-
ցիչ տեղեկութիւններ են տալիս, որոնք հարեան ժողո-
վուրդները պատմագրերի կողմից համարեա լիովին ճշտ-
վում և հաստատուում են: Ուստի հայկական աղբիւրները
աշխատանքի նիւթի տեսակետից բոլորովին վստահելի,
միեւնոյն ժամանակ անփոխարինելի պէտք է համարել:

Սակայն, ի հարկէ, մենք անտես չենք առնում նաեւ
հարեան երկրների համապատասխան գրականութիւնը, չէ՞
որ այդ երկիրներն ևս մոնղոլական արշաւանքներից նոյն-
քան և աւելի ազդուել ու փրկուել են: Շատ տեղերում
մենք կարեւոր ենք համարել համապատասխան առարկա-
ների նկատմամբ մեր աղբիւրները համեմատել մահմե-
տական աղբիւրների հետ, մէկը միւսով լրացնել և ստուգ-
գել: Արեւելեան և արեւմտեան ճանապարհորդների ու վա-
նականների նկարագրութիւններից այն չափով ենք օգտ-
ուել, ինչ չափով որ դրանց հեղինակները ժամանակով
հեռու չեն եղել այս մեծ նուաճումների դարաշրջանից և
իրանց տեղեկութիւնների մէջ վստահելի և փորձուած են
երեւցել: Բացի դրանցից, իրերի ամբողջական կապակե-
ցութիւնը ըստ կարելոյն լիակատար հասկանալու համար,
ստիպուած ենք եղել դիմել այն տեսակ երկերի, որոնք
մողոլների ընդհանուր պատմութեան համար նրանց ժա-
մանակը ըմբռնելու գործում կարեւոր ծառայութիւն կա-
րող էին մատուցանել:

— ❧ —

Թ Ա Թ Ա Ր Ն Ե Ր Ի Ա Ր Շ Ա Ի Ա Ն Ք Ը

Ն Ե ր ա ծ ու թ իւ ն

Ընդհանուր նայեացք արեւելեան պատմութեան վրայ
միջին դարում:

Նոր ժամանակը իւր մողեոն մտածելակերպով ու զգաց-
մունքներով, իւր իդէալներով և հեռանկարներով, որոնք
Եւրոպայի համար արդէն մի քանի դար է պատմական իրո-
ղութիւն են, արեւելեան-ասիական ազգերի համար դժբախ-
տաբար դեռ շատ հեռու են ոչ միայն լիակատար, այլև
կիսով չափ իրողութիւն լինելուց: Արեւելքում-Պարսկաս-
տանում, Տաճկաստանում, Խորին Ասիայում-ժողովուրդ-
ների իրական ուժերն ու յարաբերութիւնները, շարժիչ
պատճառներն ու իդէաները, պատմական դարաշրջանների
բնոյթը, մնացել են նոյնը, ինչ որ արեւմտեան Եւրոպայում
միջին դարում սովորական ու գերակշռող էին: Տնտեսա-
կան և սոցիալական հիմունքները այստեղ զգալի փոփո-
խութեան չեն ենթարկուել: Պարսկաստանում, Տաճկաս-
տանում, Օսմանեան պետութեան հարաւ-արեւելեան գաւա-
ռամասերում տիրում են դեռ ևս այն աւատական յարա-
բերութիւնները հասարակութեան զանազան խաւերի մէջ,
ինչպէս որ միջին դարում: Հասարակութիւնը այստեղ այն-
պէս մոլեռանդ է, այնպէս անտախտապաշտ ու սահմանափակ,
ինչպէս միջնադարեան Եւրոպայում էր: Կրօնական տարրը,
որ Արեւելքում առանց այն էլ միշտ սանձարձակ և խաւար
մողեռանդութեամբ է հանդէս գալիս, այս երկիրների սո-
ցիալական կեանքի մէջ ամենագորեղ շարժիչ ուժերից
մէկն է: Ազատ մտածողութիւնը ինքնաբերուղի ու անկաշկանդ
գործը այստեղ իդէալներ են, որոնց դեռ երկար պէտք է
ձգտեն Արեւելքում:

Ի հարկէ արեւելեան-ասիական հասարակութիւնն ևս

ունեցել է իւր վերին շերտերը, որտեղ դրուծիւնն այլ կերպ է եղել: Անշուշտ այստեղ ևս շատ գծեր թուլացել են, շատ ստուերներ չքացել, մոայլ կետեր ջնջուել: Արեւմտեան ազդեցութիւնը շատ տեղերում բաւականին զօրեղ է եղել և ակնյայտնի կերպով հոգեկան այս անշարժ կեանքում ալիքներ ու յեղաշրջումներ հանդէս է բերել: Սակայն այս փոփոխութիւններն ու յեղաշրջումները Բարձր և Խորին Ասիական ժողովուրդների հոգեկան մթնոլորդի համատարած խաւարի մէջ լուսաւոր կետեր են լուի: Ուստի սխալ չէր լինի թերեւ եթէ պնդէինք, որ Արեւելքում մտածելու, զգալու, ըմբռնելու և կամենալու տեսակետով և ընդհանրապէս ամբողջ կեանքով ընդհանուր առմամբ դեռ միջնադարն է իշխում:

Այն օրից, երբ Արաբները իրանց հսկայական պետութիւնը պարսկական և արեւելահռոմէական պետութիւնների աւերակների վրայ հիմնեցին— Առաջաւոր Ասիայի համար մի քանի դար համեմատաբար հանգիստ օրեր սկսուեցին, որոնք թերեւ ամենաարդիւնաւէտ ու խաղաղ օրեր էին, որ Ասիան մինչև այդ տեսել էր և դրանից էլ դեռ երկար յետոյ պէտք է տեսնէր: Երբ արաբական հսկայ պետութիւնը 9-րդ դարից արդէն բազմաթիւ յարձակումների պատճառով թուլացել և բաժան բաժան եղել, իւր հեղինակութիւնն ու յարձակողական ուժը կորցրել էր, բարձր ասիական ցեղերի համար նորից բացուում են հարուստ աւարի դռները: Արդէն 10-րդ դարից մեզ լուրեր են հասնում անթիւ անհամար ժողովրդական մասսաների մշտական ահռելի տեղափոխութիւնների մասին— որոնք իրանց արօտատեղերից ու բնակավայրերից պոկուած— ահապէս խմբերով դէպի Արեւմուտք են դիմում— այս տեղ ուղղելով իրանց անկուշտ հայեացքն ու սպանիչ զէնքը և մի սարսափելի անդուսպ հեղեղի նման բարդ առ բարդ անպարպելի եռանդով ու թարմ ուժով թափուում են փարթամ ու հարուստ Արեւմուտքի վրայ— ճանապարհին ամեն բան կրակի և աւերածի զոհ դարձնելով: Պարսկական, Խվարեզմի, արաբական կուլտուրաների ամենագեղեցիկ ու ճոխ

քաղաքներն ու յիշատակները մէկը միւսի յետեից զոհ են դառնում այս բարբարոսներին. իրար յետեից եկող այս մասսաների ուժգին գրոհի տակ ծանր կերպով փասուում, կուչ է գալիս արեւմտեան Ասիան: Սյդ եկւորները թիւրքական ցեղերից էին և արդէն 11-րդ դարում Սելջուկ անունն էին կրում:

Հազարաւոր տարիներից ի վեր թափառում էին այս ցեղերը Կասպից ծովից դէպի արեւելք ձգող անվերջ ու անեղր դաշտերի, անապատների վրայ: Ինչպէս բոլոր հովիւ ժողովուրդները, այնպէս էլ սրանք թափառական կեանք էին վարում. միշտ նոր արօտատեղի ու բնակավայր ունենալու հոգսը նրանց կեանքի էական բովանդակութիւնն էր: Բայց որովհետեւ զօրեղ բազմացման պատճառով երկիրն ու արօտատեղերը շուտով բաւականութիւն չեն տալիս նրանց, ուստի թողնում են իրանց սահմանները ազահութեամբ ընկնում են արաբական պետութեան փարթամ հարուստ աշխարհների վրայ: Շուտով ընդունում են նաև մահմեդականութիւն և արաբական զօրքի մէջ ծառայութեան են մտնում որպէս վարձկաններ: Ու ճիշտ այնպէս, ինչպէս երբեմն գերմանական եկւորները սկզբում որպէս վարձկան մտան հռոմէական զօրքի մէջ, ապա հետզհետէ զօրեղանալով մեծ ազդեցութիւն ձեռք բերին և վերջն էլ հռոմէական տէրութեան անկման պատճառ դարձան, ճիշտ այդպէս էլ այս թիւրքական ցեղերը լաւ հասկացան քաղաքական նպաստաւոր մոմենտը օգտագործել և այն օրերին, երբ արաբական պետութիւնը քայքայուած ու բաժան-բաժան էր եղել ու պետութեան սահմաններում սկսել էին երևան գալ քաղաքական կիսանկախ օրգանիզմներ— կարողացան խալիֆաների մօտ բարձր ու կարող դիրքի հասնել: Շատ շուտով արաբ խալիֆաների կողքին սելջուկ սուլթանները պետութեան իսկական կրողն ու տէր են դառնում:

Սելջուկների նկատմամբ դժուար կրկնէր մի որ և է բարձր կուլտուրայի մասին խօսել. նոցա զօրութիւնը կրակի և արեան, սրի և աղեղի վրայ էր հիմնուած: Արաբական ու պարսկական կուլտուրայի յիշատակարանները իրար յե-

տեղից գոհ էին դառնում այս բարբարոսների վանդալական վերաբերմունքին: Կուլտուրայի կործանիչ և թշնամի էին: Տնտեսական օգուտն էր նրանց միակ նպատակը և այդ կողմից հիւժուով էին ժողովուրդներն ու երկիրները մինչև ուժասպառ լինելու աստիճան:

Այս վայրենի ու անխիղճ կառավարութեան օրով պէտք է ամբողջ արեւելեան Պարսկաստանը, Միջագետքը, Հայաստանը, փոքր Ասիան, մինչև Ասորիքն ու Պաղեստինը կուշ գար ու ամօթահար կեանք վարէր:

Սելջուկների իշխանութեան կենդրոնատեղին առաջաւոր Ասիայումն էր, միջին Ասիայում ընդհակառակը նրանց ուժը շատ թույլ էր, հէնց այդ է պատճառը, որ այս կողմերում անկախ տէրութիւն կազմելու հնարաւորութիւնը այնքան էլ հեռու չէր: 11-երորդ դարի վերջին տասնամեակներից սկսած Անգրկասպեան երկրներում մի նոր քաղաքական բաւականին սպառնալի ոյժ է հանդէս գալիս, Խվարեզմի շահերի ոյժը: Արդէն 12-երորդ դարի կէսերին Խվարեզմի շահը աէր էր ամբողջ Անգրկասպեան երկրին ու ծրագրում էր նորանոր յարձակումներ ձեռնարկել գէպի Արեւմուտք. նրա երկիրը մի կողմից հասնում էր մոնղոլներին աշխարհին, իսկ հարաւից ու արեւմուտքից սահմանակցում էր սելջուկների պետութեանը և Կասպից ծովին:

Նուաճելու մոլութեամբ բռնուած Խվարեզմի շահերը շուտով ստանձնում են սելջուկների գերը: Սելջուկների վերջին մեծ Տուղրիլ Սուլթանի գլուխը ընծայ է գնում Խվարեզմի Տակաշ շահի կողմից արաբական խալիֆային և Տուղրիլի մահով Խվարեզմի շահը արեւմտեան Ասիայի իսկական տէրն է դառնում. որովհետեւ Բաղդատի խալիֆաները արդէն վաղուց դադարել էին պետութեան մէջ որ և է էական գեր խաղալուց և համարեա միշտ իրանց ժամանակը անց էին կացնում մայրաքաղաքի պալատական ինտրիգներով ու մեքենայութիւններով: Տակաշն և իւր յաջորդը անկոչ իշխաններ էին, երբեմն այնքան զօրաւոր ու կարող, բայց այժմ խղճուկ ու թուլացած արաբական տան մէջ: Բայց երբ Խվարեզմի շահերի ճնշումը սկսեց անտանելի

դառնալ և խալիֆան այս օտարների ինքնիշխան ու սանձարձակ կառավարութիւնը իւր իսկ սեփական պետութեան մէջ անկարող եղաւ այլ ևս տանել, այդ ժամանակ դիմեց նա հեռաւոր մոնղոլների խանի օգնութեանը: Բայց դրանով ոչ թէ ազատիչ առաջ քաշեց, այլ այնպիսի թշնամի վատտակեց, որի ոտների առաջ իբրեւ աւար փռուելու էր ամբողջ Ասիան և Արեւելեան Եւրոպան. ահա այս կերպ թաթարները հրաւէր ստացան Արեւմտեան Ասիայի երկրները նուաճելու և տիրապետելու: Բայց եթէ արաբական խալիֆան թաթարներին հրաւիրած էր չը լինէր, յամենայն գէպս նրանք կը գային, որովհետեւ աշխարհակալը հրաւէրի չի սպասի, այլ ինկատի կունենայ իւր զօրութիւնը և շրջապատող աշխարհների վիճակը:

Արեւելքի քաղաքական հորիզոնի վրայ թուրք-թաթարական ցեղերի յարձակումները երբէք նորութիւն չէին, բայց թաթարները այդ բոլորից ամենասոսկալիներն էին: Նրանք բոլորովին ոչնչացրին այն կուլտուրայի և քաղաքակրթութեան ազատ մնացորդները, որ սելջուկների բարբարոսութիւնից գերծ էին մնացել, միջին և առաջաւոր Ասիան նրանց կարող և խորտակիչ սրի տակ Խուր աւերակների մի շեղձակոյտ դարձաւ լոկ: Արեւելքը կարծես ամայացել էր. վաճառաշահ հարուստ և փարթամ շահաստանները կողոպտուեցին, հոյակապ ու հաստահողոյս շէնքերը խորտակուեցին: Մոնղոլների հասցրած հարուածները գլուխը կորցրած՝ Արեւելքը դեռ շատ դարեր չալիսի կարողանար ուշքի գալ և այն ժամանակուայ շատ ծաղկած երկրներ երբէք չը տեսան այնպիսի մի ծաղկած կուլտուրայ, ինչպիսին այն ժամանակ ունէին: Այս կարճահասակ և գաճաճ մոնղոլները Արեւելքի կուլտուրայի ընթացքը երկար ժամանակով կասեցրին:

Եթէ երբեմնեան այն փառաւոր ու մեծ տէրութիւնները, ինչպէս Պարսկաստանը, Խվարեզմի իշխանութիւնը, արաբական խալիֆայութիւնը հող ու մոխիր էին դարձել — այդ թշուառ ու ողորմելի դրութիւնը Հայաստանում աւելի ևս զգալի պիտի լինէր ու երկար դարերով անդարմանելի:

տեից զոն էին դառնում այս բարբարոսների վանդալական վերաբերմունքին: Կուլտուրայի կործանիչ և թշնամի էին: Տնտեսական օգուտն էր նրանց միակ նպատակը և այդ կողմից հիւժւում էին ժողովուրդներն ու երկիրները մինչև ուժասպառ լինելու աստիճան:

Այս վայրենի ու անխիղճ կառավարութեան օրով պէտք է ամբողջ արևելեան Պարսկաստանը, Միջագետքը, Հայաստանը, փոքր Ասիան, մինչև Ասորիքն ու Պաղեստինը կուշ գար ու ամօթահար կեանք վարէր:

Սելջուկների իշխանութեան կենդրոնատեղին առաջաւոր Ասիայում էր, միջին Ասիայում ընդհակառակը նրանց ուժը շատ թույլ էր, հէնց այդ է պատճառը, որ այս կողմերում անկախ տէրութիւն կազմելու հնարաւորութիւնը այնքան էլ հեռու չէր: 11-երորդ դարի վերջին տասնամեակներից սկսած Անգրկասպեան երկրներում մի նոր քաղաքական բաւականին սպառնալի ոյժ է հանդէս գալիս, Խվարեզմի շահերի ոյժը: Արդէն 12-երորդ դարի կէսերին Խվարեզմի շահը տէր էր ամբողջ Անգրկասպեան երկրին ու ծրագրում էր նորանոր յարձակումներ ձեռնարկել գէպի Արևմուտք. նրա երկիրը մի կողմից հասնում էր մոնղոլների աշխարհին, իսկ հարաւից ու արևմուտքից սահմանակցում էր սելջուկների պետութեանը և Կասպից ծովին:

Նուաճելու մօլութեամբ բռնուած Խվարեզմի շահերը շուտով ստանձնում են սելջուկների դերը: Սելջուկների վերջին մեծ Տուղրիլ Սուլթանի գլուխը բնծայ է գնում Խվարեզմի Տակաշ շահի կողմից արաբական խալիֆային և Տուղրիլի մահով Խվարեզմի շահը արևմտեան Ասիայի իսկական տէրն է դառնում. որովհետև Բաղդատի խալիֆաները արդէն վաղուց դադարել էին պետութեան մէջ որ և է էական դեր խաղալուց և համարեա միշտ իրանց ժամանակը անց էին կացնում մայրաքաղաքի պալատական ինտրիգներով ու մեքենայութիւններով. Տակաշն և իւր յաջորդը անկոչ իշխաններ էին, երբեմն այնքան զօրաւոր ու կարող, բայց այժմ խղճուկ ու թուլացած արաբական տան մէջ: Բայց երբ Խվարեզմի շահերի ճնշումը սկսեց անտանելի

դառնալ և խալիֆան այս օտարների ինքնիշխան ու սանձարձակ կառավարութիւնը իւր իսկ սեփական պետութեան մէջ անկարող եղաւ այլ ևս տանել, այդ ժամանակ դիմեց նա հեռաւոր մոնղոլների խանի օգնութեանը: Բայց դրանով ոչ թէ ազատիչ առաջ քաշեց, այլ այնպիսի թշնամի վատտակեց, որի ոտների առաջ իբրև աւար փռուելու էր ամբողջ Ասիան և Արևելեան Եւրոպան. ահա այս կերպ թաթարները հրաւէր ստացան Արևմտեան Ասիայի երկրները նուաճելու և տիրապետելու: Բայց եթէ արաբական խալիֆան թաթարներին հրաւիրած էլ չը լինէր, յամենայն դէպս նրանք կը գային, որովհետև աշխարհակալը հրաւէրի չի սպասի, այլ ի նկատի կունենայ իւր զօրութիւնը և շրջապատող աշխարհների վիճակը:

Արևելքի քաղաքական հորիզոնի վրայ թուրք-թաթարական ցեղերի յարձակումները երբեք նորութիւն չէին, բայց թաթարները այդ բոլորից ամենասոսկալիներն էին: Նրանք բոլորովին ոչնչացրին այն կուլտուրայի և քաղաքակրթութեան ազատ մնացորդները, որ սելջուկների բարբարոսութիւնից զերծ էին մնացել, միջին և առաջաւոր Ասիան նրանց կարող և խորատկիչ սրի տակ ախուր աւերակների մի շեղջակոյտ դարձաւ լոկ: Արևելքը կարծես ամայացել էր. վաճառաշահ հարուստ և փարթամ շահաստանները կողոպտուեցին, հոյակապ ու հաստահեղոյս շէնքերը խորատկուեցին: Մոնղոլների հասցրած հարուածներից գլուխը կորցրած՝ Արևելքը դեռ շատ դարեր չպիտի կարողանար ուշքի գալ և այն ժամանակուայ շատ ծաղկած երկրներ երբեք չը տեսան այնպիսի մի ծաղկած կուլտուրայ, ինչպիսին այն ժամանակ ունէին: Այս կարճահասակ և գաճաճ մոնղոլները Արևելքի կուլտուրայի ընթացքը երկար ժամանակով կասեցրին:

Եթէ երբեմնեան այն փառաւոր ու մեծ տէրութիւնները, ինչպէս Պարսկաստանը, Խվարեզմի իշխանութիւնը, արաբական խալիֆայութիւնը հող ու մոխիր էին դարձել — այդ թշուառ ու ողորմելի դրութիւնը Հայաստանում աւելի ևս զգալի պիտի լինէր ու երկար դարերով անդարմանելի:

Թիւրք-մոնղոլական ցեղերի ձգտումների նպատակը առաջաւոր Ասիայի հարուստ երկիրներն էին, իսկ Հայաստանն էլ ուղղակի այն ճանապարհին էր ընկած, որով աշխարհակալներն անցնում էին: Գտնուելով Արեւելքի և Արեւմուտքի մէջ—ամեն անգամ նա կրելու էր իւրաքանչիւր աշխարհակալութեան աւերիչ հետեւանքները: Թաթարները վերջին մեծ ու հզօր եկւորներն են, որոնք մեր երկիրն եկան այդպիսի բռնութեամբ ու թափով: Գրանից յետոյ Հայաստանն այլ ևս չտեսաւ աւերումների ու նուաճումների այդպիսի ուժգին թափ և այդպէս ընդարձակ չափերով: Բայց դժբախտութիւնը դրանով պակաս հսկայական չէր և երկրի պարբերական ամայացումը առաջ էր գնում անընդհատ ընթացքով, որովհետեւ թաթարներն այնուհետեւ չթողին մեր երկիրը:

Համեմատաբար կարճ ժամանակում հասկացան մոնղոլները մի հսկայական տէրութիւն հիմնել, մի ահագին իշխանութիւն, որը թերեւ կարելի լինէր համեմատել հին հռոմէական կամ արդի մեծ բրիտանական և կամ ուսսական պետութեան հետ: Խիվայի մեծ իշխանութիւնը, միջին Սիբիրից մինչև հնդկական ովկիանոսը ձգող երկիրները, Աւղանստանը, Խվարեզմի ահագին իշխանութիւնը, Պարսկաստանը, արաբական խալիֆայութիւնը, Հայաստանն ու փոքր Ասիան, Վրաստանն ու Կովկասեան միւս երկիրներները, Հարաւային ու միջին Ռուսաստանը մինչև Նովգորդի հասարակապետութիւնը և մինչև Լեհաստանն ու Հունգարեան—ահա մոնղոլների վիթխարի տէրութիւնը մօտաւորապէս 1300 թուին: Այս հսկայական իշխանութեան անօրինակ արագ ու ընդարձակ ծաւալումը պայմանաւորւում է մի կողմից մոնղոլների բնածին ռազմական յատկութիւններով ու նրանց սոցիալական—անհատական բնաւորութեան յատուկ նկարագրով, իսկ միւս կողմից նուաճող ազգերի և աշխարհների քաղաքական ընդհանուր կացութեամբ:

Ընդհանուր պատմութեան գրականութիւնը չունի մինչև այժմ մի քննական, ամբողջական աշխատութիւն այս

հսկայական պետութեան: Հեշտ էլ չէ գրել այդպիսի մի գործ, քանի որ պակասում են մասնակի, առանձին աշխատութիւններ, որոնք միայն կարող են այդպիսի մի ամբողջացնող աշխատաքի ճանապարհը հարթել: Դեռ մինչև նորեւա եւրոպական համարեա բոլոր պատմագիրները Արեւմտեան Ասիայի պատմութեան վրայ խորթ էին նայում և չափազանց քիչ ուշադրութիւն նուիրում դրան: Այսօր, թէև էլի դեռ ոչ բոլոր կողմերից և ոչ հաւասար չափով, յամենայն դէպս մի քանի կողմերից շեշտւում է, որ ընդհանուր պատմութեան մէջ անտեղի են մի անգամայն այս կամ այն ժողովրդի համար սէր կամ ատելութիւն: Այսպիսով կարելի է յուսալ, որ Ասիայի պատմութիւնը, յատկապէս նրա երկար միջին դարը եւրոպայի գիտնականների անխոնջ եռանդի ու մարզուած մեթոդի շնորհիւ շուտով աւելի մեծ չափերով ուսումնասիրութեան ասպարէզ կը քաշուի քան այդ մինչև օրս տեղի էր ունենում: Բազմաթիւ այսպիսի մասնակի ուսումնասիրութիւններից յետոյ անշուշտ կը գտնուի նաև հարկաւոր մարդը, որ այդ աշխատանքների արդիւնքները կը միացնի ու լոյս աշխարհ կը բերի մոնղոլների ընդհանուր պատմութիւնը: Առ այժմ սակայն միայն մասնակի, դիտող աշխատանքներով կարելի է հանդէս գալ:

1. Թաթարական առաջապահը Հայաստանում եւ Վրաստանում.

Հայ պատմագիրների տեղեկութիւնների համաձայն մոնղոլների իսկական հայրենիքը հեռաւոր Արեւելքում էր գտնւում և կոչւում էր Չին-Մա-Չին: Այդ անուան հետ սակայն հաւանօրէն չէր կապւում աշխարհագրական մի որոշ մտապատկեր, թերեւ միայն այն, որ այդ երկիրը շատ հեռւում պէտք է լինի և գուցէ նաև այն, որ Արեւելքում պէտք է ընկած լինի¹⁾: Մոնղոլների տիրապետութեան

1) Վարդան 14, Օրբէլեան 295, Паткановъ, «Исторія Монголовъ по армянскимъ источникамъ I часть ст. 68 примѣчаніе»

Թիւրք-մոնղոլական ցեղերի ձգտումների նպատակը առաջաւոր Ասիայի հարուստ երկիրներն էին, իսկ Հայաստանն էլ ուղղակի այն ճանապարհին էր ընկած, որով աշխարհակալներն անցնում էին: Գտնուելով Արևելքի և Արևմուտքի մէջ—ամեն անգամ նա կրելու էր իւրաքանչիւր աշխարհակալութեան աւերիչ հետեանքները: Թաթարները վերջին մեծ ու հզօր եկւորներն են, որոնք մեր երկիրն եկան այդպիսի բռնութեամբ ու թափով: Դրանից յետոյ Հայաստանն այլ ևս չտեսաւ աւերումների ու նուաճումների այդպիսի ուժգին թափ և այդպէս ընդարձակ չափերով: Բայց դժբախտութիւնը դրանով պակաս հսկայական չէր և երկրի պարբերական ամայացումը առաջ էր դնում անընդհատ ընթացքով, որովհետև թաթարներն այնուհետև չթողին մեր երկիրը:

Համեմատաբար կարճ ժամանակում հասկացան մոնղոլները մի հսկայական տէրութիւն հիմնել, մի ահագին իշխանութիւն, որը թերևս կարելի լինէր համեմատել հին հռոմէական կամ արդի մեծ բրիտանական և կամ ռուսական պետութեան հետ: Խիվայի մեծ իշխանութիւնը, միջին Սիբիրից մինչև հնդկական ովկիանոսը ձգւող երկիրները, Աւղանստանը, Խվարեզմի ահագին իշխանութիւնը, Պարսկաստանը, արաբական խալիֆայութիւնը, Հայաստանն ու փոքր Ասիան, Վրաստանն ու Կովկասեան միւս երկիրներները, Հարաւային ու միջին Ռուսաստանը մինչև Նովգորդի հասարակապետութիւնը և մինչև Լեհաստանն ու Հունգարեան—ահա մոնղոլների վիթխարի տէրութիւնը մօտաւորապէս 1300 թուին: Այս հսկայական իշխանութեան անօրինակ արագ ու ընդարձակ ծաւալումը պայմանաւորւում է մի կողմից մոնղոլների բնածին ռազմական յատկութիւններով ու նրանց սոցիալական—անհատական բնաւորութեան յատուկ նկարագրով, իսկ միւս կողմից նուաճւող ազգերի և աշխարհների քաղաքական ընդհանուր կացութեամբ:

Ընդհանուր պատմութեան գրականութիւնը չունի մինչև այժմ մի քննական, ամբողջական աշխատութիւն այս

հսկայական պետութեան: Հեշտ էլ չէ գրել այդպիսի մի գործ, քանի որ պակասում են մասնակի, առանձին աշխատութիւններ, որոնք միայն կարող են այդպիսի մի ամբողջացնող աշխատաքի ճանապարհը հարթել: Դեռ մինչև նորերս եւրոպական համարեա բոլոր պատմագիրները Արևմտեան Ասիայի պատմութեան վրայ խորթ էին նայում և չափազանց քիչ ուշադրութիւն նուիրում դրան: Այսօր, թէև էլի դեռ ոչ բոլոր կողմերից և ոչ հաւասար չափով, յամենայն դէպս մի քանի կողմերից շեշտւում է, որ ընդհանուր պատմութեան մէջ անտեղի են մի անգամայն այս կամ այն ժողովրդի համար սէր կամ ատելութիւն: Այսպիսով կարելի է յուսալ, որ Ասիայի պատմութիւնը, յատկապէս նրա երկար միջին դարը Եւրոպայի գիտնականների անխոնջ եռանդի ու մարզուած մեթոդի շնորհիւ շուտով աւելի մեծ չափերով ուսումնասիրութեան ասպարէզ կը քաշուի քան այդ մինչև օրս տեղի էր ունենում: Բազմաթիւ այսպիսի մասնակի ուսումնասիրութիւններից յետոյ անշուշտ կը գտնուի նաև հարկաւոր մարդը, որ այդ աշխատանքների արդիւնքները կը միացնի ու լոյս աշխարհ կը բերի մոնղոլների ընդհանուր պատմութիւնը: Առ այժմս սակայն միայն մասնակի, դիտող աշխատանքներով կարելի է հանդէս գալ:

1. Թաթարական առաջապահը Հայաստանում եւ Վրաստանում.

Հայ պատմագիրների տեղեկութիւնների համաձայն մոնղոլների իսկական հայրենիքը հեռաւոր Արևելքում էր գտնւում և կոչւում էր Չին—Մա—Չին: Այդ անուան հետ սակայն հաւանօրէն չէր կապւում աշխարհադրական մի որոշ մտապատկեր, թերևս միայն այն, որ այդ երկիրը շատ հեռւում պէտք է լինի և գուցէ նաև այն, որ Արևելքում պէտք է ընկած լինի¹⁾: Մոնղոլների տիրապետութեան

1) Վարդան 14, Օրբէլեան 295, Паткановъ, «Исторія Монголовъ по армянскимъ источникамъ I часть ст. 68 примѣчаніе

կենդանւոյն շարադրում-կարակորում էր կոչուում²⁾։ Այստեղ հեռաւոր Արեւելքում, բարձր ասիական գաշտերի և տափաստանների վրայ թափառում էին թաթարական կամ մոնղոլական զանազան ցեղեր յաւիտենական թշնամութեամբ բռնուած, մինչև որ մի կարող ձեռք նրանց նուաճեց և մոնղոլական հզօր իշխանութեանը հիմք դրեց։ Հայկական բոլոր աղբիւրները միահամուռ կերպով բոլորովին պարզ գրում են որ Չինգիզխանը իւր իշխանութիւնը հիմնել է իրանց հարևան ցեղերին յաղթելով և ստրկացնելով։ Հայ հեղինակների մօտ այդ ցեղերը կրում են մի ընդհանուր անուն թաթար կամ Մոնղոլ կամ Մուղուլ³⁾։

2-00: Մա-Չին խօսքը Ռէշիդ-էլլինն էլ է յիշում. բայց այստեղ այդ անունը գործ է ածւում մի շատ որոշ երկրի համար, որը Հինգուստանին սահմանակցում է։ (I—129) Չին-մա-Չին անունը գտնում ենք նաև պարսիկ պատմագիր Aboul-Ghâzi-ի մօտ, որ դրանով Չինաստանն է հասկանում II—155)։ Վրացի պատմագիրը մոնղոլների հայրենիքը անուանում է «Չին մա-Չին, մի աշխարհ, որ ընկած է արևելեան կողմը»։ Brosset. Histoire de la Géorgie I 485.

2) Կիրակոս 121, Օրբելեան 299. Արու-Ղազին II 179. առաջին Մեծխանի՝ Օգոդայանի յաջորդն ու որդին քաղաքը ընդարձակել և դեղինիկ մեծ շինութիւններով շատ պալատներով և արքունիքներով ձոխացրել է, բայց ոչ նոր հիմնել, ինչպէս Բրուսէն քունիքներով ձոխացրել է, բայց ոչ նոր հիմնել, ինչպէս Բրուսէն կարծում է (I 485. ծանօթ 4.) այս քաղաքի տեղագրութիւնը հետեւեալ կերպով որոշում աշխարհագրագետ Րիտտէրը. «այժմուայ Ուրգայի և Ուլխասուտայի մէջ Օրգուն գետի ափին»։ (Աշխարագրական բառարան մաս I 947)։ Կարակորումի մասին մի ընդարձակ նկարագրութիւն ենք գտնում, Rubrâck-ի մօտ 207. համեմատել նաև S. Mariin, Memoires II 278.

3) Կիրակոսը անուանում է նրանց մեծ մասամբ թաթար (56, 95, 102) Օրբելեանը մուղուլ է կոչում և նրա կարծիքով գիւղացիներն են միայն, որ մուղուլներին թաթար անունն են տալիս. ըստ Օրբելեանի ուրեմն թաթար անունը մոնղոլ բառի առմէական ձևն է. (293) վրացի պատմաբանը գրում է «իրանք իրանց մոնղուլ են կոչում և մենք վրացիներս նրանց անուանում ենք թաթար»։ (Brosset 488)։—Այդ երկու անուաներից նորը առաջինն էր և Չինգիզխանի ժամանակ գործածութեան մէջ մտած, իսկ թաթար անունը այս ցեղերի համար օրպէս մի ընդհանուր անուն վաղուց ի վեր տարածուած էր (հմտ. Barthold—Turkestan II, 140,

երբ Չինգիզ խանն այս տեղերը իւր հրամանին ենթարկեց, մոնղոլական մասսաները տարածուեցին, ցրուեցին ամեն կողմ, նուաճեցին հարևան երկիրները և բնականաբար պատահեցին այն ժամանակուայ ասիական ժողովուրդների քաղաքական մեծ մարմիններին, որոնք են Չինաստանը, Հնդկաստանը, Խվարեզմը, Պարսկաստանը և արաբական խալիֆայութիւնը։ Թաթարական լրտեսներն ու

Schmidt—Forschungen 6). Մաղաքիս արեղան փորձում է թաթար բառի բացատրութիւնը տալ. նրա կարծիքով թաթար նշանակում է «սուր և թեթև» (3). Արու-Ղազին գրում է. «Մոգոլ խօսքի արմատը մունգ-ու է. ժողովուրդը ազաւաղելով այս խօսքի իսկական արտասանութիւնը վերջ ի վերջոյ կոչել է մոնգոլ։ Բոլոր թուրքերն հասկանում էին մունգ բառի նշանակութիւնը, որ է տխուր (quaighon). ու նշանակում է սրտաբաց, անկեղծ, ազատ (sâ de die). ուրեմն մունգ-ու նշանակում է տխուր-ազատ» II, 12. բոլորովին նոյն կերպ բացատրում է այդ բառը նաև Ռաշիդ-էլլինը II, 95. Purgstell-ը սակայն այլ մեկնութիւն է տալիս. նրա կարծիքով մոնգ բառը բոլորովին հակառակ նշանակութիւն ունի—անվիհեր, յամառ։ Նա ի միջի այլոց մատնանիշ է անում նաև այն հանգամանքը, որ սկզբնապէս թաթար բառը շատ օտար աղբիւրների մօտ բոլորովին խեղաթիւրուած է հանդէս գալիս. այսպէս եւրոպացիք ասում են թաթար, բիւզանդացիք ասել են տոզառ և աթառ, օսմանցիք՝ զոդառ։ XIII դարում եւրոպացիք անուանում էին սրանց մօալ, մինչդեռ միւսները կոչում էին մունգու. ուստի սակայն Նիկոն ժամանակագիրը թաթար անունը պոլովցիներին է վերագրում (II, 151). զաղափարների այս ընդհանուր շփոթութեան գիմաց հայ պատմագիրները միահամուռ ներդաշնակութեամբ կատարելապէս ճիշտ և միատեսակ են գրել այս անունը, որ իրանց ևս նոյնքան օտար էր, ինչպէս և վրացիներին, ռուսներին, լեհներին ու այլոց։

Թաթար անունը առիթ է տուել Արևմտեան-եւրոպական ժամանակագիրներին բառախաղ անել։ Նրանք կարծել են, թէ թաթարները ստորերկրեայ Տարտարոսից են դուրս եկել, ուստի և կոչել են նրանց թարթար. դրանով նրանք արտայայտել են իրանց ատելութիւնն ու դժկամակութիւնը դէպի այս ժողովուրդը։ Այդ անունը, որ սկզբում օրպէս գիտական մի բառախաղ է գործածուել, յետոյ կորցնելով իւր զաւեշտային կողմը, հետզհետէ ընդհանրացել է Արևմուտքում նշանակելու համար այդ ժողովուրդների անունը. Rémusat, Memoires 15, 16.

խուզարկու գնդերը հետևում էին ամեն կողմ շրջապատից հեղեղին ու ժողովուրդներին և իրանց լրտեսութեան արդիւնքը մոնղոլների մեծ խանին բերում էին ի գիտութիւն:

Ահա այսպիսի մի խուզարկու գոնդ էլ Չինգիզ խանի յատուկ հրամանով Արեւմուտք է անցնում Խվարեզմի շահին հալածելու: Թաթարները մտել էին արդէն այս միապետի տէրութիւնը—այժմուայ Անդրկասպեան աշխարհը և նրա Մոհամմեդ շահին փախցրել: Հիմա Չինգիզ խանն ուղարկում է վերոյիշեալ գոնդը, որպէս թաթարական մեծ բանակի առաջապահ: Այս գոնդն էր անա, որ առաջին անգամ հայկական հողի վրայ ոտք դրեց, նա էր, որ նուաճեց Պարսկաստանն և հիմք դրեց Ռուսաստանում մոնղոլական տիրապետութեանը: Այդ իսկ պատճառով մեզ անհրաժեշտ է թուում այս գնդի ճանապարհն ու գալու ժամանակը աւելի ճշտօրէն որոշել համաձայն այն տեղեկութիւնների, որ տալիս են ժամանակակից հայ և օտար պատմիչները:

Խուզարկու գնդի առաջնորդները կոչւում էին Ջապանոն և Սաբատա-Բահադուր⁴⁾: Պարսկաստանը նուաճելուց յետոյ գրոհ տուին նրանք դէպի Ատրպատական, պաշարեցին ու վերցրին Դիլման և Մարաղա ամուր և հարուստ քաղաքները և Ուրմիա լճի արևելեան ափին՝ Սոֆտիշայի վրայ բանակ դրին: Դեռ ճանապարհից մարդ էին զրկել նրանք մեծ խանի մօտ և թոյլտուութիւն խնդրել Ատրպատականից Կովկասեան երկիրներն անցնել և երկաթէ պա-

4) Միայն Մխիթար Այրիվանեցին է, որ այդ երկու անուններն իրար հետ յիշում է (86). Կիրակոսը միայն Սաբադա-Բահադուրին է յիշում (104). Վարդանն (174—75) ու Մաղաքեան (6—7) թէև ակնարկում են այս առաջապահի գնդի մասին, բայց չեն տալիս ոչ մի մանրամասն նկարագրութիւն, ոչ էլ յիշում են առաջնորդների անունները: Իսկ Օրբելեանը բոլորովին լռում է այդ մասին: Վրացի ժամանակագիրը յիշում է Jama և Salpian անունները աւելացնելով «որ է վրացերէն Սուբա և Ջերա» (Brosset I, 492). Բայց դրանք ոչ թէ վրացերէն անուններ են, այլ իսկական մոնղոլական: Նոյն այդ անունները գտնուում ենք նաև մահմեդական պատմագիրների (օրինակ Aboul-Ghazi II 70, 125, 129) և ռուս տարեգիրների մօտ:

հակի միջով (Չորայ պահակն է, Դերբենտի անցքը) արևմտեան Կիպչակ անցնել: Այժմ, Ուրմիա լճի ափերում ստանալով խնդրած թոյլտուութիւնը, առաջ խաղացին դէպի հիւսիս: Կասպից ծովի արևմտեան ափերով և Դերբենտի անցքով Վրաստան և Աւղանստան մտան: Արագութեամբ հասան վրացոց Թիֆլիզ մայրաքաղաքին և յետ դառնալով բանակեցան Պարտաւ և Բելուկում քաղաքների մէջ. այդտեղից անա ասպատակում էին Վրաստանն ու Աղուանքը և իսկական Հայաստանի հիւսիսային գաւառները: Վրացոց Հաշա թագաւորը դուրս եկաւ նրանց դէմ և իւր Իւանէ զօրապետի հետ մի ճակատամարտ տուեց նրանց Սոնան գաշտի վրայ, Կոտման գետի ափին: Երկուստէք կռոււմ էին փոփոխակի բախտով, վերջապէս թաթարները յաղթեցին: Վրացոց թագաւորը փախուստի դիմեց, պատերազմի դաշտում թողնելով բազմաթիւ ընկածներ⁵⁾: Մոնղոլների և վրացիների այս ընդհարումն ի հարկէ վճռական ճակատամարտ չէր, սակայն դրա նախերգանքն էր:

Այս խուզարկու գնդի մուտքի ժամանակը դժուար չէ հաստատապէս որոշել: Չինգիզ խանը Սաբատային և Ջեպէին հրամայել էր այս երկիրները հետախուզել, աչքի անցկացնել և 3—4 տարուայ ընթացքում կրկին իւր մօտ դառնալ:

5) Թաթարական առաջին գնդերի պատերազմական դործողութիւնների նկատմամբ տեղագրական հանգամանքների և վիճակի ծանօթութեան համար անհրաժեշտ է աշխատակալական մի քանի անուններ աւելի ճիշտ որոշել: Բեղամէջը գտնուում է Արաքսի և Կուրի միացման կէտում, սկսուելով Թարթար գետից, որի վրայ դեռ այսօր Պարտա գիւղը կայ, հին Պարտաւը: Բելուկումը կամ Բելուզանը Պարտաւից այնքան էլ հեռու չէ: Այս քաղաքը թաթարների կողմից մի քանի անգամ տւերածի է ենթարկուել (Паткановъ II 110. прим. 3, նոյնպէս Կիրակոսի հրատարակչի ծանօթութիւնը Klaproth-Aperque 8). Սոնանը կամ Սոնանը գտնուում է Թիֆլիզից հարաւ, Հայաստանի, Վրաստանի ու Աղուանքի սահմանում: Կլապրոտը այցելել է այդ վայրը, որն այժմ Թափառական ցեղերը Կիզ-Կալա (Ղըզ-Ղալա) են կոչում: Կոտմանն անշուշտ Կուրի բազուկներից մէկն է, Թերեա Գուրան-Հայը լինի (Паткановъ, русс. перев. Малакин прим. 8—նոյնպէս և Մխիթար Այրիվանեցու ֆրանսիական թարգմանութիւնը, Brosset, 105.)

զօրապետները Պարսկաստանից դուրս եկան 1218—20 թուին և մտան Ստրպատական ու Հայաստան 1220—21: Ժամանակի համարեա բոլոր պատմաբանները համաձայն են դրան: Ըստ Վարդանի թաթարների գալուստը եղել է 1221 թուականի սկզբում, ըստ Կիրակոսի 1220-ի վերջին: 1221-ին Սաբատան ջարդել էր արդէն Լաշային և գէպի հարաւ քաշուել: այստեղ սպասում էր նա Մեծ խանից օժանդակութիւն և թոյլտուութիւն ստանալու Կիպչակ զնալու համար⁶⁾:

Նրա զինւորները թիւը չէր կարող սկզբում մեծ եղած լինել: Թեթե զինաւորումն, փոքրիկ քոչ—այս բոլորը ենթադրել են տալիս որ Սաբատայի գունդը դուրս է եկել թեթե զործողութիւնների, թուլացիկ էքսկուրսեաների և պատերազմական լրտեսութեան համար⁷⁾: Այս գունդը կարող էր ամենաշատը 20—25000 մարդ լինել: Սրանից աւելի մեծ մի բանակը դժուար թէ կարողանար այնպիսի արագ ու ծանր մարշերը կատարել, ինչ որ Սաբատան էր արել: Այս կողմերի խոր ձորերը, վատ ճանապարհները, նեղ

6) Հայկական աղբիւրների հետ միանգամայն համապատասխան տեղեկացում է նաև վրացի պատմագիրը. նրա համաձայն ևս թաթարների գալուստը և ճակատամարտը տեղի է ունեցել 1220—21 թուին (Brosset 492) Սաբատայի արշաւանքը II. Purgstall-ի համաձայն երեք տարի է տեղի (89) Wolff-ը (Geschichte der Mongolen 108) այս արշաւանքի մասին մի տեղեկութիւն է բերում չինական աղբիւրներից: Հայկական աղբիւրները հաստատութիւն են գտնում նաև մի այլ օտար պատմիչի Աբուլ-Ղազինի կողմից (Aboul—Ghâzi 125).

7) Մեր ասածներին կարող էր թուալ թէ հակասում է Կիրակոսի տեղեկութիւնը, որը Սաբատայի գունդը ներկայացնում է «ծանր զինուած», բայց նոյն Կիրակոսի առաջ բերած այս մոնղոլների ամբողջ նկարագրութիւնը և կատարուած զործերի յետագայ ծաւալումը ուղղակի հակառակն են հաստատում, որ Սաբատայի գունդը թեթեակի զինուած և ոչ այնքան բազմաթիւ մի զօրամաս էր: Վրացի ժամանակագիրը բոլորովին պարզ կերպով գրում է. «Սրանք դուրս եկան 12000 ձիաւորով, առանց պաշարի և պատերազմական պատրաստութեան—վերցնելով իրանց հետ իրանց նետ աղեղն ու նիզակները»—Brosset I 492.

անցքերը այնքան էլ յարմար չէին մեծ բանակի գործողութիւնների համար:

Սաբատան շուտով օժանդակութիւն է ստանում և վրձնում է Կասպից ծովի արեւմտեան ափերով դէպի հիւսիս բարձրանալ: Թաթարները Թաւրիզի վրայով և Ղարաբաղի ու Մուղանի հարուստ դաշտի միջով առաջ են խաղում, մանում են Շիրվան, պաշարում նրա Շամախի մայրաքաղաքը, աւերում են ու նրա թագաւորին ստիպում իրանց 10 առաջնորդ տալ Կովկասի անցքերից դուրս գալու համար: Թագաւորը իւր արքունիքից տուեց 10 բնաւոր պալատականներ: Մոնղոլ զօրապետները դրանցից մէկի գլուխը կտրեցին իբրև զգուշացնող օրինակ միւս 9-ի համար, որոնք նոյն վիճակին էին ենթարկուելու, եթէ որ մոնղոլական զնդին մոլորեցնէին: Բայց և այնպէս այդ իննը առաջնորդները մոլորեցրին թաթարներին նեղ կրճերի մէջ, որտեղ նրանք Կովկասեան մի քանի ցեղերի յարձակումներին ենթարկուեցին: Վերջապէս ռազմագիտական հաստատուն շրջահայեցողութեամբ և խորամանկութեամբ թաթարները Դերբենդի անցքին հասան և դրա միջով ազատուեցին Կովկասի սար ու ձորերից⁸⁾: Այստեղ, հարաւային Ռուսաստանում տեղի ունեցաւ այն ճակատամարտը, որտեղ մոնղոլները ռուսական միացեալ ուժերի դէմ յաղթող հանդիսացան: Կալկայի այդ ճակատամարտը 1224⁹⁾ թուին Ռուսաստանի բախտի մի նախերգանքն էր, դարեր շարունակ ող թաթարական լծի հպարտ սկիզբը¹⁰⁾: Պարսկաստանն ու

8) Կիրակոսի համաձայն (104) թաթարները ստիպուած էին Կովկասեան լեռնաշղթան անցնել, որպէս զի տեղական ցեղերից չշրջապատուէին ու չոչնչանային: Ինչ որ ունէին մօտենալը—բոլորը դէն ձգեցին, որպէս զի անցումը հեշտանայ: Աղուլ-Ղազին ևս նոյն կերպ է պատմում, ինչպէս և Կիրակոսը. II, 129.

9) Թ. Շիմանի կարծիքով Կալկայի կռիւն եղել է 1223 թուին յունիսի 16-ին. հմտ. Russland, Polen und Li land I 159 և Bericht d. Akad. d. Wiss. I և III Bd 2.

10) Հետաքրքիր է մի հայեացք նետել ռուս պատմագիրների վրայ ու տեսնել, թէ նրանք ինչպէս են պատմում այդ իրողութիւնները: Դժբախտաբար այդ տարեգիրները հարկաւոր դէպքում

դրեց մի բազմատարեան անսիրտ ու վայրագ կազմակերպուած կռուի, որը նրանով վերջացաւ, որ Չինաստանը գոռոզ մեծ խանի տոնների տակ որպէս աւար փռուեցաւ²⁾։ Թաթարները այստեղ կանգ չառան, նրանց հայեացքները դառնում են դէպի Արեւմուտք, որի մասին նրանք հարուստ կարաւանների ու ճանապարհորդների միջոցով շատ խորհրդաւոր բաներ էին լսել։ Փարթամ ու հարուստ Արեւմուտքը — Խվարեզմը, Պարսկաստանը, արաբական խալիֆայութիւնը, Փոքր Ասիան — հեծում է ասպատակութեան ու աւերածի դուրս եկած մոնղոլների լծի տակ ու նրանց խմբերը գնալով բազմանում, ուռչում են։ Կեն 1215—1220 թուերին մոնղոլական լրտեսներն ու թուուցիկ խմբերը խուզարկում, լրտեսում են բոլոր հարեան երկիրները ու մեծ խանին տեղեկութիւններ հասցնում։ Իսկ մեծ խանը հիմնուելով իրան հասած տեղեկութիւնների վրայ և առաջնորդուելով իւր առողջ բնազդով անում էր իւր ազգու և խելացի կարգադրութիւնները և աշխարհքի ամեն կողմեր ուղարկում իւր գնդերը ասպատակելու նուաճելու և մոնղոլական անունը իւր պետութեան սահմաններից շատ հեռու գործել և ահարկու դարձնելու։ Հէնց այս ժամանակ է ընկնում Զեպէ և Սաբատա Բահատուր մոնղոլների խուզարկու արշաւանքը դէպի Կովկասեան երկիրներն ու դէպի Կիպչակ։

Այդ ժամանակներում պատերազմական գործողութիւնների ծանրութեան կենդրոնը ընկնում էր Խվարեզմի տէրութեան և արեւելեան Պարսկաստանի վրայ։ Մոնղոլներն զբաղուած էին այստեղ քաղաքներ պաշարելով և առնելով, երկիրը աւերելով ու ասպատակելով։ Քաղաքական հանգամանքները աւելի քան նպաստաւոր էին։ Խվարեզմում, Պարսկաստանում, Բաղդադի խալիֆայութեան մէջ — ամենուրեք ներքին երկպառակութիւնները մոռցնել էին տուել ամեն ուրիշ հոգս։ Աշխարհներն աւերւում էին գահակա-

2) Թէ ինչ աստիճան վայրագութեամբ է մղուել այդ կռիւը, մօտաւորապէս դադարի կարող է մարդ կազմել չինական աղբիւրների տեղեկութիւնից. որ թէկուզ Չինաստանում 1211 թուից մինչև 1223 թուականը մոնղոլները սպանել են 18,470,000 մարդ. Wolff 111.

լական խառնակութիւնների և եղբայրասպանութիւնների պատճառով։ Ի հարկէ Չինգիզ խանի համար այդ հանգամանքը աւելի քան ցանկալի էր ու նա իւր կազմակերպուած, միաձուլ ու թեթեւ խմբերով հեշտութեամբ յայտնւում էր ուզած տեղը։ Զոկ ջոկ քայլով ու ամենուրեք յարձակող մոնղոլական այս զօրամասերի իսկական կազմակերպողն ու ոգին ինքը Չինգիզ խանն էր — ինչպէս վկայում են բոլոր աղբիւրները։ Նրա հրամանով է, որ քաղաքներն ու ամրոցները պաշարւում, առնւում և այրւում էին։ Նրա կամքն էին կատարում ու նրա հրահանգները, երբ նրա գններալները աւերում կամ խնայում էին նուաճուած երկիրները։ Ամենայնգոհւած ձեռնարկութիւնների ոգին էր նա ու կազմակերպողը։ Պատերազմող այդ հսկայական, վիթխարի մասսաների ընդհանուր բարձրագոյն հրամանատարութիւնն այն եղանակով էր կազմակերպուած, որ իւրաքանչիւր առանձին զօրամասի հրամանատարը նրա որդիներից մէկն էր։

Չինգիզ խանը շատ որդիներ ու կանայք ունէր, բայց քաղաքական տեսակէտից ի նկատի պէտք է առնել միայն հետեւեալ չորս որդիներին. Զուլի խան, Չագատա, Օգաթա խան և Տուլի³⁾։ Սրանցից առաջինը Արեւմուտք էր գնացել ու կասալից ծովի հիւսիսային մասն անցնելով Կիպչակն էր նուաճել և այնտեղ Սաբատայից նրա զօրամասն ընդունել։ Հօրից Կիպչակի տէրութիւնը նա որպէս ժառանգութիւն ընդունեց, նրա որդին ու յաջորդը նշանաւոր Բատուն էր, փառքալ Ռուսաստանի, Լեհաստանի և մինչև Հունգարիա ձգող աշխարհների հպարտ նուաճողը։ Չինգիզ խանի միւս որդիքը Չինաստանում, Պարսկաստանում և Խվարեզմի տէրութեան մէջ էին գործում։ Խվարեզմի շահը դեռ չէր հնազանդուել։ Պոկուած լինելով իւր մայրաքաղաքից թափառւում էր նա ու շարունակ փոփոխում իւր բնակավայրը, որպէս զի իրան հալածող մոնղոլների ձեռքը չընկնի։

Խվարեզմի տէրութեան վերջնական նուաճումը չտե-

3) Տիբեթի գործը անուանում է նրանց. Juci, Cagatai, Ugetei և Zoloi—Huth II, 28.

սաւ Զինգիգ խանը: Նա մեռաւ 1227 թուին: Երկու տարի յետոյ ազնուականների ժողովներից մէկում (կուրուլտա) նրա որդի Օգոթա խանը մեծ խան յայտարարուեց (1229 թ. հոկտ. 22-ին) և պետութեան մայրաքաղաք՝ Կարակորում հրաւիրուեց: Նոր մեծ խանը իւր հօր նուաճողական քաղաքականութիւնը ոչ միայն ձեռքից չթողեց, այլ և աւելի մեծ ծաւալով ու աւելի հզօր թափով առաջ տարաւ: Պետութեան կենդրոնից բազմաթիւ զօրամասեր ուղարկուեցին դէպի գանազան կողմեր: Օգոթա խանն ուզում էր Խվարեզմի շահին վերջնականօրէն ընկճել և նրա զօրութիւնը ընդմիջա խորտակել: Այդ նպատակի համար Չարմազան իշխանը 30,000 մարդով նրա տէրութիւնն ուղարկուեց—այնտեղ քարը քարի վրայ չթողնելու խտտագոյն հրամանով: Իսկ Խվարեզմի շահը, այժմ Զալալ-էզզինը—նրա հայրը Սուլթան Մոհամեդը Կասպից ծովի կղզիներից մէկի վրայ մեռել էր արդէն—մոնղոլներից հալածական փախչում գալիս է Հայաստան և այսպիսով մոնղոլների ուշադրութիւնը քաշում այդ երկրի վրայ:

Այս ընդհանուր նկատողութիւններից յետոյ այժմ կարող ենք նախնական աղբիւրների վրայ հիմնուած մեր ուսումնասիրութիւնն առաջ տանել:

3. Չարմազան եւ Հայաստանի ու Վրաստանի նուաճումը.

Հայաստան փախչող Զալալ-էզզին շահի դէմ դուրս եկան հայ վրացական միացեալ զինուորը, բայց յաղթուեցին: Շահն անցաւ այնուհետեւ Իկոնիոյ սուլթանի աշխարհը և սպաստակեց. բայց այստեղ նորից յարձակման ենթարկուելով Հայերի, Վրացիների և Սելջուկների կողմից, անբախտ Զալալ-էզզինը վերջապէս ընկճուեց և զիմեց դէպի հարաւ, դէպի Ամիթ (Դիարբէքիր, հին Տիրքանակերտի մօտ) որտեղ և սպանուեց¹⁾:

1) Օրբէլեան 293, Կիրակոս 117, Վարդան 175: Վերջինս պատմում է, որ առաջ Զալալ-էզզինի երկու որդիքն են Հայաստան

Զալալ-էզզինի գալստեան տարին 1225-ն է²⁾: Նրան հալածող թաթարներն ևս պէտք է որ նրա յետեից անմիջապէս Հայաստան մտած լինէին: Այդպէս չէ պատահել սակայն: Թաթարական զլխաւոր զօրաբանակը 10—11 տարի յետոյ է միայն Հայաստան եկել 1235—36 թուին³⁾: Հապառը էր նա այդքան ժամանակ: Հայկական աղբիւրները այս հարցին էլ բաւարար պատասխան են տալիս: Թաթարական զլխաւոր բանակը իւր ճանապարհին արգելուել է, որովհետեւ պէտք է անցնէր շատ ցեղերի և ժողովուրդների միջով, որոնց հարկաւոր էր միշտ նորի նորոյ նուաճել: Քաղաքական մեծ խառնակութիւններն ու շփոթը, որ այն ժամանակ տիրում էին Միջին-Ասիայում և Անդրկասպեան երկրներում—կասեցրել էին մոնղոլների ընթացքը⁴⁾:

Փախել 200,000 զօրքով: Կիրակոսի մօտ այդ մասին խօսք չկայ: Բոլորովին պարզ է, որ Խվարեզմի տէրը եթէ այդպիսի մեծ բանակի տէր լինէր, կարիք չէր ունենայ ամենին փախչելու, մանաւանդ, որ նրան հալածող թաթարները այնքան էլ բազմաթիւ չէին: Վրացի տարեգիրն ևս Զալալ-էզզինի զօրքերի թիւը բաւական մեծ է ցոյց տալիս, 140,000 (Brosset 494.) անհրաժեշտ է վրացիական այս տարեգրի մասին ինկատի ունենալ, որ մեծ զգուշութեամբ պէտք է զրանից օգտուել: Այդ և զրա նման թուերը մեզ վերին աստիճանի կասկածելի են երևում: Ըստ այդ տարեգրի օրինակ Զալալ-էզզինը Պարսկաստանում ունեցած պէտք է լինէր ոչ աւել, ոչ պակաս քան 600,000 (491): Յետոյ, Իկոնիայի Սուլթան Գայաթ-էզզինը, երբ Բաչուի հետ իւր ուժերն էր չափում, իբր թէ իւր մօտ 400,000 հեծելազօր ունէր: (518—19).

2) Վարդան 175, Օրբէլեան 293. Օրբէլեանի հայերէն տեքստի մէջ փոխանակ 647 թուականի (հայկական տարեհաշիւը, որ հաշուում է սովորաբար 551 թուին Քրիստոսից յետոյ) պէտք է 674 կարգաւ—որի վրայ աւելացրած 551-ը կըստանանք 1225. հաւանօրէն դա ոչ թէ իրա հեղինակի, այլ արտագրողի սխալն է:

3) Վարդան 1236 (177), Սամուէլ Անեցի 1236 (81), Օրբէլեան 1236 (293) Մխիթար Այրիվանեցի 1236 (81). Կիրակոսը մի որոշ ժամանակ չի յիշատակում, բայց նրա ամբողջ պատմութեանը այդ է ենթադրել տալիս: Վաստակաւոր Saint Martin-ը սխալում է, կարծելով, որ այդ անցքերը 1231-ին պէտք է ընել: Համեմատել Memoires II 260, 271.

4) Կիրակոսը (123) և Մխիթար Այրիվանեցին (8) նոյն իսկ շատ պարզ ասում են, որ Խվարեզմի իշխանին հալածող բանակը

Կիրակոս պատմագիրն է, որ մոնղոլական տիրապետութիւնների այս ամբողջ շրջանը ամենից մանրամասն ու բնորոշ կերպով է նկարագրում: Նա մոնղոլների հետ բազմազան ու սերտ յարաբերութեան մէջ էր, նոյն իսկ մոնղոլների լեզուն լաւ հասկանում էր: Այդ իսկ պատճառով Չարմաղանի քաղաքական նուաճումների գործը շարադրելիս մեր գլխաւոր աղբիւրը կը լինի Կիրակոսը, որի տուած տեղեկութիւնները մենք շարունակ ստուգելու և համեմատելու ենք հայ և օտար ժամանակակից պատմիչների հաղորդածների հետ:

Մոնղոլական բանակը — համաձայն բոլոր աղբիւրների — երեք մասի է բաժանւում: Միջին զօրամասը խելացի, ճարպիկ Չարմաղանի գլխաւոր հրամանատարութեան տակ — պէտք է նուաճէր Խվարեզմի պետութիւնը, Պարսկաստանը, ապա Հայաստանը Վրաստանը և Աղուանքը: Չարմաղանի հետ գալիս են նաև երեք ուրիշ — նոյնպէս նշանաւոր գեներալներ, որոնցից իւրաքանչիւրը դարձեալ մի զօրամաս ունէր⁵⁾: Այս բանակը մօտաւորապէս 30 — 40 հազար մարդ ունէր, շատ լաւ կազմակերպուած էր, բազմաթիւ կոխիւների մէջ եփուած էր և գործելու վերին աստիճանի ընդունակ էր⁶⁾:

շատ բան ունէր անելու: (Հարկաւոր էր «նուաճիլ Պարսիկներին, Վրկաններին, Քուշաններին, Սորասանը, Մարաստանը, Իսպահանը, Ատրպատականը և բոլորը իրար յետից նուաճելով նրանք մտան Հայաստան, Վրաստան և Աղուանք (Միխիթար Այրիվանեցի, 8): «Մոնղոլները Արևմուտք գնալու համար պէտք է այն ամենը, ինչ որ ճանապարհին պատահէր, խորտակէին քանդէին և աւերէին» Կիրակոս (123):

5) Ըստ Կիրակոսի և Ռաշիդ Էլդինի Չարմաղանի պատերազմական շտաբի մէջ հետեւալ չորս գեներալները կային. Իսրար, Ղութուն, Թութուն և Չաղատա: Վրացի տարեգրի համաձայն Չարմաղանը հետեւեալ գեներալներն ունէր որպէս օգնական Ջաղաթար (Կիրակոսի Եղատա-ն) Եօգեր (Կիրակոսի Իսրար-ը, և ոչ թէ Ասաւուրը, ինչպէս Brosset-ը սխալմամբ ենթադրում է), Բիշուի — յետագայ յայտնի Բաշուն. Brosset 511.

6) Զինգիյ խանը այս գեներալներից իւրաքանչիւրին տալիս է 10,000-անոց մի բանակ (Brosset 511). Ըստ Hammer-Purgstall ի Չարմաղանը միայն 30,000 զօրք ունէր, երբ որ նա Պարսկաստան ու Հայաստան էր գալիս (98). d'Ohiessor III 53. Ըստ Kleproth-ի 40,000 մարդ (Apergue 9), Ըստ Աբուլ-Ղադիրի՝ 30,000. I 146.

Ինչպէս Օրբելիանն է ասում — «մոնղոլները Հայաստան եկան փոթորկաւոր մըրկի նման — ճանապարհին ամեն բան աւերելով և ոչնչացնելով»: Պարսկաստանը ծանր հեռւմ էր մոնղոլական երիվարների սմբակների տակ: Սորասանն ու Ատրպատականը կորցրին իրանց փարթամ ծաղկած քաղաքները: Հիւսիսային Պարսկաստանն ու նրան սահմանակից աշխարհները նուաճելուց յետոյ, թաթարները դիմեցին դէպի Կասպից ծովի հիւսիս արեւմտեան ափերով Վրաստան և Աղուանք: Այստեղ երկար ու դժուարին մարտերից յետոյ իրանց ու իրանց երիվարներին մի առ ժամանակ հանգիստ տուին: Մուղանի մշտականաչ ու բերրի դաշտը շատ յարմար էր մոնղոլներին լաւ հանգստարան լինելու իսկ նրանց ձիերին մեծ քանակութեամբ կանաչ խոտ տալու⁷⁾:

Թաթարական միացեալ ուժերի առաջին զսիւր «Գանձակ արքայական քաղաքն էր» (ինչպէս Վարդանն է ասում — 177) — հէնց թէկուզ այն պատճառով, որ այդ քաղաքը ամբողջ երկրի ամենամեծ և կարեւոր քաղաքը լինելով — Բիւենոյն ժամանակ հաղորդակցութեան և վաճառականութեան կենդրոնավայրն էր⁸⁾: Քաղաքն առան և աւարի տուին, բնակիչներին մասամբ սպանեցին մասամբ էլ գերեվարեցին: Չորս տարի շարունակ քաղաքը աւերակների կոյտ մնաց, յետոյ թոյլ տուին նորից վերաշինելու — սակայն այս անգամ առանց պարիսպների:

Գանձակի առումից յետոյ երկրի նուաճումն արագօ-

7) Մուղանի դաշտը գտնւում է Կուր և Արաքս գետերի ստորին ջրաբաշխում: Համեմտ. Klaproth 10, Паткановъ-Малак. примѣч. 17. նոյնպէս Կիրակոս 121, 123, 141, 150, 233. Վարդան 144, 152. Օրբելիան 304. Մուղանի երբեմնեան պտղաւէտ ու արօտատեղիներով հարուստ դաշտավայրը այսօր անջրդի աւնապատ է:

8) Պէտք չէ շփոթիլ Գանձակ քաղաքը՝ Արանի մայրաքաղաքը (այսօրուայ Երևանի տարածքը) Ատրպատականում գտնուած համանուն քաղաքից: Այս վերջինի սովորական անունը Թաւրիզ էր. համեմատիր Մանանդեան 151, Թոմա-Մեծոփեցի 17—18. Չամչեան III 421, Հեթում պատմիչ 14.

բէն առաջ է ընթանում: Հայաստանը, Վրաստանն ու Ադ-
ուանքը լեռնաշխարհներ են — հարուստ իրար կտրող ձորե-
րով և խորունկ կրճերով, նեղ անցքերով, բարձր, դժուա-
րանցանքի լեռնաշղթաներով: Այդ տեսակ երկիրների մէջ
համարեա անկարելի է ահագին զօրամասերով մի կէտի
վրայ կենդրոնանալ ու գործել: Երկիրը շատ քիչ գէպե-
րում յարմար տեղեր ունէր դրա համար: Բացի դրանից
երկրի մէջ շատ մեծ ու փոքր ամրոցներ կային, որոնց
առումը ահագին աշխատանք և ջանք էր պահանջում:

Թաթարներն երկրի հետ այնքան էլ անծանօթ չէին:
Քաջ և անվեհեր կերպով գործի մտան նրանք — իրանց
նպատակն ու անելիքը շատ լաւ գիտակցելով: Վրացոց պե-
տութիւնը — դրա մէջ նաև հիւսիսային Հայաստանն ու
Ադուանքը (մօտաւորապէս այսօրուայ ուսական Հայաս-
տանը) մոնղոլական զենեքաւորների մէջ վիճակի հանուեցաւ:
Իւրաքանչիւր քիչ թէ շատ յայտնի զենեքաւոր նուաճելու
իւր բաժինն ստացաւ: Երկիրը վիճակով իրար մէջ բաժա-
նելը թաթարների համար շատ բնորոշ մի գիծ էր և երկրի
բնական բաժանուածութիւնն էլ լաւ նպաստում էր (հա-
մեմատել Վարդան 177, Կիրակոս 125, 145, Մաղաքիա 8).

Վարդանը առաջ է բերում այս վիճակահանութեան
արդիւնքը. Չաղատան ստանում է Լոռի քաղաքն ու շրջա-
կայքը, Տուխատան Կայան ամրոցը, Չարմաղանը — Սնին,
Կարսը և շրջապատը, Ղատաղա խանն ստանում է Չարեկը,
Գետաբեկսը, Վարդանաշատը. վերջապէս Մուլար-Նոինին
բաժին է ընկնում մեծ իշխան Վահրամի կալուածքները
նուաճել (Վարդան 177).

Այժմ արդէն բոլորովին պարզ յայտնի է լինում, որ երկրի
տէրերը կամ մոնղոլների ահաւոր ու ուժգին յարձակումից
յանկաճակի եկած քիչ թէ շատ զօրեղ ինքնապաշտպա-
նութեան համար ժամանակ չեն գտել, կամ թէ իրանք
անուժ ու անօգնական, նեղութիւն էլ յանձն չեն առել ա-
մենևին իրանց սեփական հողերը պահել ու պաշտպանել:
Միակ պետութիւնն այս կողմերում, որի կողմից մոն-
ղոլները գիմաղրութեան սպասել կարող էին — վրացոցն էր:

Բայց դեռ մի փոքր առաջ այնքան հզօր ու աշխարհակա-
լական ձգտումներով յղիացած այս տէրութիւնն այժմ այն
ուժն ու կարողութիւնն չունէր այլ ևս, որ նա հանդէս էր
բերում հռչակաւոր Թամարա թագուհու օրով: Պետութեան
բազմաթիւ դաւաճները, որ այս փառասէր թագուհու քաջ
զենեքաւորներն էին նուաճել ու պետութեան հետ միացրել,
այժմ իրար յետևից օտարանում էին ու անցնում թիւրք-
սելջուկ իշխանների ձեռքը: Վրացի թագաւորները հազիւ
թէ հնարաւորութիւն և կարողութիւն ունենային երկրի
հին սահմանները այս անհաւելիս, փոթորկաւոր տարրերի
առաջ պաշտպանելու, որոնք միշտ նոր ի նորոյ հարուստ
աւարի վրայ էին յարձակւում: Թագաւորների ուժը առանց
այն էլ արդէն ջլատուած էր. որովհետև իշխաններից շա-
տերն իրանց այնքան զօրեղ էին զգում, որ արքայական
իշխանութեան դէմ էին դուրս գալիս: Իշխանների և թա-
գաւորի միահամուռ գործակցութիւնն այսպիսով անկարելի
էր: Իշխաններից իւրաքանչիւրն իւր շահերն ունէր և պե-
տութեան շահը այս ընդհանուր փերեզակութեան մէջ կույ
էր գնում:

Այս էր ահա Վրաստանի և հիւսիսային Հայաստանի վի-
ճակը: Նոյն պատկերն էր նաև հարաւային Հայաստանում:
Վաղուց ի վեր այստեղ բուն էին դրած թիւրքական դա-
նազան ցեղեր, որոնք իրար և քրիստոնեաների հետ մշտական
անբաւականութեան և կռիւների մէջ էին ապրում: Միա-
համուռ գիմաղրութեան միանգամայն անընդունակ, նրանք
անկարող էին և իրանց երկիրները պաշտպանել: Այս բոլո-
րից յետոյ հեշտ է հասկանալ, որ թաթարները առանց մեծ
դժուարութեան և շատ արագութեամբ երկրին տէր դարձան:

Գուցէ այնպէս թուայ, թէ իբր թէ մեր կարծիքով
եթէ Վրաստանի և Հայաստանի իշխանները երկրի պաշ-
տպանութիւնը միահամուռ կերպով ձեռնարկած լինէին —
նրանց երկիրը թաթարների ձեռքը չէր ընկնի: Մեր ա-
սածներից այդպիսի եզրակացութիւն հանելը սակայն բո-
լորովին սխալ կըլինէր և մեր կարծիքի բոլորովին հակա-
ռակը: Ընդհանուր վիճակն էր, որ մենք վերևում ստուե-

րագծեցինք: Ընդհակառակը մենք այն կարծիքին ենք, որ Վրաստանը, Հայաստանն ու Աղուանքը թաթարներին չէին կարող երկար դէմ դնել—թէկուզ և միացեալ ուժերով: Վաղ թէ ուշ այս երկիրներին ևս պէտք է օրհասը գար, ինչպէս որ նա կախուել էր համարեա ամբողջ Ասիայի վրայ: Եթէ այն վիթխարի տէրութիւնները, ինչպիսիքն են Խվարեզմ, Չինաստան, Հնդկաստան, Պարսկաստան, արաբական խալիֆան, Ռուսաստան ու ժգնապէս իրար յետևից վաղող մոնղոլները առաջ դալարուում, կուշ են գալիս—ի՛նչ կարող էին անել խղճուկ Վրաստանն ու Հայաստանը: Մոնղոլների շարժումը մերկի նման տարերային էր և միայն համազօր հակուժի առաջ կարող էր խորտակուել⁹⁾:

Ըստ ինքեան հասկանալի էր, որ հովիտների ու ձորերի բնակչութիւնը պիտի փախչէր ամուրներն ու բերդերը, հաստ ու պինդ պատերի տակ ապաստանաւորան գտնելու: Երբ թաթարները դաշտերում և տափաստաններում ինչ որ գտան աւերեցին ու խորտակեցին—գիմեցին ապա գէպի բերդերն ու ամրոցները, որտեղ ամրացել էին իշխաններն իրանց գանձերի և հարստութեան հետ (Կիրակոս 126, 127):

Բոլոր բերդերն իրար յետևից արագութեամբ առնում են և իւրաքանչիւր գիմաղրութիւն խստիւ պատժւում է: Մուար-Նոինը, որին բաժին էր ընկել մեծ իշխան Վահրամի կալուածքների նուաճումը—յարձակմամբ վերցրեց Շամքոր քաղաքը, Տերունական, Երզնկանք, Մացնաբերդ, Տաւուշ. Կացարեա, Նորբերդ և Գագ ամրոցները¹⁰⁾: Տաւուշի մո-

9) Պիպինը Կարամզինի հետ բանակուելիս շատ ճիշտ է նկատում. «Մարդկային հասարակութեան այս շարժումը սարսափելի էր ինչպէս մի փոթորիկ, երկրաշարժ կամ հեղեղ: Պատմութեան մեծիմաստ բախտերը նշանակում է չհասկանալ, երբ մարդ կարծի, որ որ և է Իւրիի զօրութիւնը, կամ որ և է Դանիէլի խորամանկութիւնը կարող էր երկրից յետ դարձնել այդ փոթորիկը».
Исторія русс. литературы. I 213—14.

10) Այստեղ յիշուած բերդերի տեղադրութեան մասին համառօտ նկատողութիւններ կարելի է գտնել Էմինի մօտ՝ նրա Վարդանի թարգմանութեան ծանօթութեան մէջ 176. համեմտ. նաև Մաղաքիա 8.

տերքում, Լորուտ գիւղից ոչ այնքան հեռու նշանաւոր Վանական վարդապետը մի քարայրի մէջ եկեղեցի էր փորել և իւր բազմաթիւ աշակերտների հետ ապրում էր այդտեղ ու ուսուցանում նրանց: Աշակերտների մէջ էր նաև յայտնի պատմագիր Կիրակոս վարդապետը: Թաթարները Վանականի այս ապաստարանն էլ են գտնում և քար ու քանդ անում: Վանական վարդապետին և Կիրակոս պատմագրին գերի են վերցնում, յետոյ Վանականին ահագին փրկանք ստանալով արձակում են, իսկ Կիրակոսը ինքն է ծածուկ փախչում:

Ղառաղա-Նոինը վերցրեց Գարդմանը¹¹⁾, Չարիկը և Գետաբեկսը: Չաղատան պաշարեց և առաւ Լոռի հռչակաւոր բերդը, որտեղ Անիի տիրոջ՝ Շահնշահի տունն ու գանձերն էին պահուած: Նոյն գեներալը առաւ նաև Դուլմանիս և Շամշուղէ քաղաքներն ու վրացոց մայրաքաղաք Թիֆլիզը: Տուխատան կամ Իտուխատան դիմեց գէպի Կայան, որ պատկանում էր քաջ զօրապետ Իվանէի որդի իշխան Աւագին: Աւագը կամաւոր անձնատուր եղաւ, ուստի և պահեց կեանքն ու կալուածքները: Վերջապէս Չարմաղանը—այդ մեծ Նոինը և բովանդակ բանակի ընդհանուր հրամանատարը անձամբ ղեկավարեց յարձակումը Անիի ամուր պարիսպների դէմ, առաւ քաղաքն ու կողոպտուի ենթարկեց—1239 թուին¹²⁾: Կարսը կամովին անձնատուր

11) Գարդմանը հին Ուտիի յայտնի գաւառներից մէկն էր և տարածւում էր Կուր գետի ձախ ափին: Այս գաւառի գլխաւոր տեղերն էին Պարտաւ, Խաղխաղ, Շամքոր, Հունարակերտ. տես S. Martin I, 89—90.

12) XI դարում Անին 100,000 տուն բնակիչ ունէր և 1000 եկեղեցի [ոչ թէ 100,000 բնակիչ, ինչպէս H. Purgstall-ը թարգմանում է (G. d. g. Jlethane 165). S. Martin-ի տեքստում բոլորովին պարզ է—Cent mille maisons et mille «eglises»—S. Nartin, memoires I 112]. Պետերբուրգի պրոֆ. Ն. Մարրը վերջին տարիներս զրադուած է այս փառաւոր քաղաքի աւերակները բաց անելով ու հանդէս է բերել արդէն բաւական հրաշալիքներ Հայոց անցեալ կեանքից, որոնք հիմնովին փոխելու են մեր սովորական գատեւակերպը գանազան պատմական հարցերի նկատմամբ:

եղաւ, երբ Անիի գլխին եկածը լսեց: Չարմաղանի բանակից մի փոքրիկ գումարտակ պոկուելով Կարա-Բահաւունը ղեկավարութեամբ անցաւ դէպի Սուրմալու, վերցրեց Սուրբ-Մարին, այսօրուայ Իգդիրը: Բայց դրանից թաթարները վերցրին նաև շատ ուրիշ ամուր վայրեր սարերի մէջ և աւերեցին: 1240 թուին այս ամբողջ երկիրն արդէն թաթարների ձեռքն էր (Վարդան 181),

Երբ բովանդակ երկիրն նուաճուեց ու աւերուեց, ժողովուրդը մասամբ սպանուեց, մասամբ գերի տարուեց, իշխանները կամ հնազանդութեան բերուեցին կամ կապանքների զարկուեցան — թաթարները Մուղան քաղաքացան ձմեռն այնտեղ անցկացնելու: Այդպէս էին անում իւրաքանչիւր տարի: Գարնան ու ամռանը ձեռնարկում էին ասպատակելու և կողոպտելու արշաւանքները, իսկ ձմեռը քաշուում էին տաք ու հիւրընկալ Մուղանը այնտեղ հանգստանալու (Մաղաքիա 8, Կիրակոս 123—146)։

Այս բոլոր նուաճումների արդիւնքը Պարսկաստանը, Հայաստանը Վրաստանն ու Աղուանքն էր: Մնում էր դեռ փոքր-Ասիան, Սսորիքը, Միջագետքը: Սակայն Չարմաղանն այլ ևս չէր կարող այդ խնդիրը կատարել: Իւր փառաւոր կեանքի վերջին տարիներում նա կորցրել էր իւր լեզուն — տանջւում էր զօրեղ ցաւերից, որոնք և նրա մահուան պատճառ դարձան: Նրա մայրաքաղաքը Գանձակն էր, որտեղ նա ապրում էր իւր տան ու զինւորական շտաբի հետ երկիրը խաղաղեցնելուց յետոյ: Մինչև 1242 թուականը նա ապրում էր այստեղ մեծ հարստութեան մէջ և արքայական փայլով: Վերջը նա ստիպուած էր իւր բարձր պաշտօնից հրաժարուել իւր ծանր ու անբուժելի հիւանդութեան պատճառով:

4. Բաշու եւ Փոքր Ասիայի նուաճումը.

Դեռ Չարմաղանի մահուանից առաջ մեծ խանի կողմից յաջորդ էր նշանակուել Բաշու զօրապետը, հրաման ստանալով անմիջապէս Փոքրասիական պետութիւնները նուաճելու դուրս գալ: Բաշուն Չարմաղանի հետ միաժամանակ էր Արևմուտք եկել, բայց քանի որ Չարմաղանը բովանդակ բանակի հրամանատարութիւնը իւր ձեռքումն ունէր, Բաշուն լոկ մի զօրապետ էր, մէկը շատերից և ինքնիշխան կերպով ոչինչ չէր կարող ձեռնարկել: ¹⁾

Բաշուի նշանակումը կատարուեցաւ 1242-ին. նա դուրս եկաւ անմիջապէս իկատար ածելու մեծխանի հրամանը և Փոքր Ասիան նուաճելու: Դրանով նա բաց արաւ Մոնղոլական նուաճումների երկրորդ շրջանը Հայկական և Փոքրասիական երկրներում:

Առաջին բանը, որ նա արաւ, Կարին քաղաքի պաշարումն ու առումն էր (չին թէոդոսիոպօլ, արդի էրզրումը, Թուրքական Հայաստանի մայրաքաղաքը) 1242 թուին: Վաճառաշահ, ծաղկած ու գեղեցիկ քաղաքը իւր զիմադրութեան պատճառով խստիւ պատժուեցաւ, իւր անբաւ զանձերից զրկուեցաւ և նրա բնակչութիւնը սրա-

1). Այդ տեսակէտից բոլորովին անհիմն ու անճիշտ են թւում մեզ Բաշուն ուղղուած այն յանդիմանութիւնները, որ Ռաշիդ-Էլդինը Հուլաւուի բերանն է դնում. «Չարմաղանի հետ դու միաժամանակ դուրս եկար, ինչ ես արել մինչև այժմ, որ բանակին ես յաղթել, որ թշնամուն ստիպել հնազանդուելու»: I, 223. Այն էլ ասենք, որ նոյն Ռաշիդ-Էլդինը իւր գրքի մի ուրիշ տեղում հաստատում է մեր աղբիւրների այն տեղեկութիւնը, որ բովանդակ բանակի հրամանատարութիւնը սկզբում Չարմաղանի ձեռքն է եղել, նոր ապա անցել է Բաշուին: I, 137.

կոտոր եղաւ: 2) Մեծ ու հոյակապ գործի փառաւոր սկիզբն էր դա: Իկոնիայի այն ժամանակուայ Սուլթան Խիւթ-էդդինը 3) չէր կարող հարկաւ հանգիստ նայել, թէ ինչպէս սպառնացող վտանգը հետզհետէ մօտենում էր իւր պետութեանը: Նա հաւաքեց իւր ռազմական ուժերը ու դուրս եկաւ Թաթարների դէմ: Ընդհարումը տեղի ունեցաւ արևմտեան Հայաստանում— Չմանկատունը գիւղաքաղաքի մօտ, որտեղ Սուլթանը մի յուսանատական ու ուժգին պայքարից յետոյ, փառաւորապէս ջարդուեցաւ ու փախաւ: Այդ դէպքից յետոյ Թաթարները իրար յետևից վերցրին Փոքր Ասիայի բազմաթիւ քաղաքներն ու ամրոցները: Աւերեցին Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, աւարի տունին Սեբաստիան. վերցրին Ներզնկան, Իկոնիան (Փոքր-ասիական սելջուկների մայրաքաղաքը) ապա Տիւրիկէն: 4) Մոնղոլները արագ և եռանդուն կերպով նուաճեցին հարուստ ու փարթամ Փոքր Ասիան և հարուստ աւարով բեռնաւորուած 1243 թուականին դարձան դէպի իրանց ձմերանոցները—դէպի Հայաստան և Աղուանք: Բաշուն կարող էր պարծենալ, որ Փոքրասիական ամրոցների և քաղաքների ընկճողն ու նուաճողն էր. նրա առաջից փախչում էին թագաւորներն ու սուլթանները: Նոյն իսկ Իկոնիայի անբարտաւան սուլթանը՝ այս կողմերում հզօրագոյն իշխանը՝ յաղթուեցաւ և ստիպուած էր Թաթարներին

2) Բաշուն նշանակուած և Կարին քաղաքի պաշարումն ու առումը տեղի է ունեցել ըստ Վարդանի (180) և Կիրակոսի (152) 1242 թուականին: Սակայն Մաղաքիա արեղան (13) այս բոլորը դնում է 1239 թուականի մէջ. դրանով անշուշտ նա հեռանում է ճշմարտութիւնից: Հաւանական է, որ նա դրանով մի թուրքիկ խմբերից մէկի որ և է արշաւանքն է յիշում, որ այդ թուականին կարող էր տեղի ունեցած լինել:

3) Նրա ամբողջական անուն էր Խիւթա-էդդին Քայ-Սուրուէ Նա հռչակաւոր Ալա-էդդին Քայ-Քորաթի որդին էր և Իկոնիայում իշխել է 8 տարի՝ 1238—1246.

4) Կիրակոս 155, Վարդան 190: Ըստ Մաղաքիա արեղայի այդ պատահում է 1240 թուականին:

ձեռքը չընկնելու համար տեղից տեղ փախչել: Նա իւր կանանց և իւր հարստութիւնը Փոքր Հայոց Հեթում թագաւորի մօտ էր ուղարկել իբրեւ ապահովութիւն:

Կիլիկիայի Հայոց Հեթում թագաւորը բաւականաչափ խելօք էր, որ պարապ չսպասէր, որպէս զի Թաթարները գային և իւր պետութիւնը հողին հաւասարացնէին: Սա հեռատես էր և զգոյշ և հասկացել էր ժամանակին իւր պետութիւնը ուժգին փոթորկի դիմաց պաշտպանել: 5) Երբ Թաթարները Իկոնիան աւերեցին, Հեթումն այլևս ժամանակ չկորցրեց և իւր եղբայրների ու իշխանների հետ ունեցած խորհրդից յետոյ դիմեց Բաշունի մօտ ու յայտնեց նրան իւր հնազանդութիւնը: Թաթար զօրապետին խնդրեց նա իւր հետ «սիրոյ և հնազանդութեան դաշն» կապել, խոստացաւ նրան հնազանդ հպատակ լինել, այն պայմանով սակայն, որ Թաթարներն էլ նրա երկիրը ազատ պահեն իրանց արշաւանքներից: Բաշուն համար ի հարկէ Հայոց թագաւորի կամաւոր հնազանդութիւնը շատ ուրախալի էր. չէ որ Հայոց այդ իշխանութիւնը Իկոնիայի Սուլթանութեան դէմ մշտական մի պատուար էր: Բայց Բաշուն էր իւր պայմանն ունէր. Հեթումը պէտք է պարտաւորուէր Իկոնիայի սուլթանի աղջիկներին ու կանանց Թաթարների ձեռքն յանձնել: Հիւրասիրութեան օրէնքի դէմ էր անշուշտ այդ, բայց և քաղաքականօրէն միակ խելացին: Խաղաղութեան դաշն 1243 թուին կապուեցաւ և այդ ժամանակուանից սկսած Հեթումը մոնղոլների կողմից վախ չունէր այլևս: 6)

Փոքրասիական սելջուկների իշխանութիւնը խորտակելուց և Հեթումի հետ «սիրոյ և խաղաղութեան» դաշն կապելուց յետոյ Բաշուն դիմեց դէպի Վրաստան, որը

5) Այս Հեթում թագաւորին արարները Հաթիմ են ասում իսկ խաչակիրները—Հայթոն Հեթումի մասին տես նաև Hammer—Purgstall—Geschichte D. Ilch. I, 163.

6) Կիրակոս 156, Մաղաքիա 16. Վարդանի և Հեթում Պատմիչի մօտ այս դաշնադրութեան մասին ոչ մի յիշատակութիւն չկայ:

Չարմաղանի օրով մի անգամ արդէն նուաճուել էր, բայց իւր լեռնային դիրքի և դեռ բաւականաչափ զօրութեան պատճառով իրան կիսանկախ էր արել: Վրաստանում այն ժամանակ իշխում էր Լաշա թագաւորի քոյր Ռուզուզանը: Լաշայից Դաւիթ անուանով մի որդի էր մնացել, որ իւր հօրը պէտք է յաջորդէր: Բայց Ռուզուզանն աշխատում էր այդ խանգարել, ըստ որում իւր եղբօր որդի Դաւիթին Իկոնիա է դրկել տալիս, որպէս զի այնտեղ ոչնչանայ: Ռուզուզանն ինքն էլ մի որդի ունէր—նոյնպէս Դաւիթ անուանով: Ահա սրան էր կամենում նա թագաւոր դարձնել: Այս հողի վրայ Վրաստանում ծագեցին խառնակութիւններ, որ թաթարները շատ լաւ շահագործեցին: Նրանք բանն այնտեղ հասցրին, որ Վրաստանում միաժամանակ երկու թագաւորներ իշխեցին. Լաշայի որդի Դաւիթը թիֆլիզում, իսկ Ռուզուզանի որդի Դաւիթը՝ Սվանեթում: Այդ բոլորի արդիւնքն այն եղաւ, որ սկզբում թագուհին, ապա նաև Դաւիթ թագաւորը թաթարներին անձնատուր եղան: Երբ թաթարները իրանց դէմ կազմուած մի դաւադրութեան հետքերը բաց արին—շատ վրացի իշխանների և նոյն իսկ իրան՝ Դաւիթ թագաւորին դերի բռնեցին: Գերիների մեծ մասին սրախոխող արին և այս եղանակով երկիրը հանգստացրին:

Բաշուն Վրաստանից դուրս գալով մի անգամ էլ երկրի միջով անցաւ: Այս անգամ նա դէպի հարաւ դիմեց. առաւ Վանայ լճի վրայ Խլաթ կամ Ախլաթ քաղաքը. ապա անցաւ դէպի Ասորիք—Ամիթ, Ուրֆա, Շամ (= Դամասկոս), բայց մեծ արդիւնքների չհասաւ, որովհետև թաթարները անսովոր էին հարաւի տապին: Նա ստիպուած է լինում իւր գնդերը յետ քաշել առանց ռազմական շօշափելի օգուտների: Կիրակոս յատկապէս շեշտում է, որ Բաշուն յետ դարձաւ ոչ թէ այն պատճառով, որ իբր թէ նա պարտուել էր, այլ նրա համար, որովհետև թաթարները երկրի կլիման չկարողացան տանել: Մոնղոլները կրկին վերադարձան իրանց Մուղանի ձմերանոցները—Հիւսիսային Հայաստան և Աղուանք: Բաշուն այժմ կարող էր իւր գափնինների վրայ

հանգստանալ: Փոքր Ասիան Հայաստանի և Վրաստանի հետ նրա երկաթէ տիրապետութեան տակ էր: Երկրի մէջ ամենուրեք թաթարներն էին հրամայողները: Մնում էր միայն Միջագետքի արաբական խալիֆայութիւնը, որ դեռ իւր հնազանդութիւնը չէր յայտնում: Դրա նուաճումը սակայն վերապահուած էր մի այլ մոնղոլի—այս անգամ կայսերազն իշխաններից մէկին—հուսակաւոր Հուլաւու խանին: Բաշուի շրջանն, ինչպէս ասացինք—մոնղոլների արեւմտեան Ասիայում կատարած նուաճումների երկրորդ շրջանն է, որ տևում է մօտաւորապէս տաս տարի 1242—1252:

Երբ երկիրը նուաճողական գործողութիւններից և պատերազմական աղմուկից դադարեց հանգստացաւ, հեռաւոր Արևելքից՝ Կարակորումից երկու մարդ եկան—Արղուն և Բուդա, նուաճուած երկիրներում աշխարհագիր անելու և հարկեր դնելու⁷⁾: Երկիրների քաղաքական պատերազմական նուաճումից յետոյ գալիս էր այժմ անտեսական—ֆինանսական շահագործումը: Այս վերջին հանգամանքի նկատմամբ թաթարներն աւելի խիստ և անսիրտ էին: Հարկահանութեան սխտեմի անլուր խստութիւնների և դաժանութեան պատճառով շատ թագաւորներ ու իշխաններ ստիպուած էին մեծ խանի մօտ դնալ զանգատուելու և թեթևութիւն խնդրելու: Այդպէս Հայոց Հեթում

7) Հարկահանների գալուստը Վարդանը (182) նշանակում է 1253 թուին, Մաղաքիան (22) 1251-ից յետոյ, իսկ Կիրակոսը (209) 1254-ին: Հակասութիւնը լուր արտաքին է և լուծւում է անմիջապէս, երբ ի նկատի ունենանք, որ Արղունը իւր պաշտօնին նշանակուել է աւելի առաջ, քան թէ նա Հայաստան է եկել: Անհաւանական չէ, որ Մաղաքիան պաշտօնի նշանակման տարին է տալիս, իսկ Վարդանն ու Կիրակոսը նրա գալուստն թիւն են յիշատակում: S. Martin-ի այն յիշողութիւնը, թէ աշխարհագիրն ու հարկահանութիւնն 1251-ին է տեղի ունեցել, (Mem. II 282) ճիշդ չէ. ինչպէս ասացինք Արղունը սկզբում Պարսկաստանում էր և ամենայն հաւանականութեամբ 1251-ին աշխարհագիր արել է (տես նաև Ռաշիդ-Էլդին I 178) որը սակայն Հայաստանի վրայ չէ տարածուել, որովհետև Արղունը միայն Հուլաւուի հետ է Հայաստանում գործ սկսել:

Թագաւորն ևս նախ Բաշուի, և ապա մեծ խանի մօտ է գնում:

Ժամանակի մեծ խանը Մանգուսն էր, որը 1251 թուին զահ էր բարձրացել: Նրա կեանքի նպատակն էր թաթարական կալուածներն ու նուաճումները կտրացնել ու աւարտել: Արեւմուտքում գոյութիւն ունէր դեռ, ինչպէս ասացինք, արաբական խալիֆայութիւնը: Այժմ նրա ժամն էլ է հնչում. այդ մեծ գործը գլուխ բերելու համար Մանգուսն իւր եղբայր Հուլաւու խանին Արեւմուտք է ուղարկում⁸⁾:

5. Հուլաւու խանը և Բաղդադի խալիֆայութեան բարձումը.

Հուլաւուի հետ Արեւմուտք են գալիս նրա երկու որդիքը՝ Աբադան և Իսմուդը, նրա Սուլտայ եղբայրը, նրա բարեկամ Բուդա Թիմուրը, Թադուտարը, ապա երեք ազգականները՝ Բուլդային, Կուլին և Կոտարը: Հուլաւու խանը իւր եղբայր Մեծ խան Մանգուից և ազնուականների ժողով—Կուրուլտայից պաշտօնական հրաման ունէր. «Ասասիները գղեակները խորտակել, խալիֆային հնազանդութեան բերել, ամեն բանի մէջ տիկին Տոխթու—խանումի հետ խորհրակցել»: Իւր բնակավայր ընտրում է նա արդէն

8) Հուլաւուի գալստեան թուականը հայ պատմիչների կողմից համարեա բոլորովին միատեսակ է տրւում. ըստ Հեթում Պատմիչի—Հայոց Հեթում թագաւորը 1253—54-ին մեծխանի մօտ է գնացել, այնտեղ մօտաւորապէս 9 ամիս մնացել և Հուլաւուի հետ յետ դարձել: Այսպիսով զուրա է գալիս 1255 թուականը կամ 1256-ի սկիզբը: Հեթում Պատմիչ (42), Վարդան (182) Կիրակոս (217). Օրբելիանը խօսքի կողմից շատ ժլատ է: Ուրիշ բան է ասում Մաղաբիան, ըստ նրա տեղեկութեան, (25) Հուլաւուն իբր թէ 1257-ին է եկել. բայց Մաղաբիան այստեղ ապահովաբար ոչ թէ Հուլաւուի գալստեան տարեթիւն է տալիս, այլ Բաղդադի դէմ սկսուած պատերազմական գործողութիւնների սկիզբը: Ռաշիդ—էլլէինն (I, 149) ու վրացիական տարեգիրն էլ (Brossset, I, 539) հայ աղբիւրների հետ բոլորովին համաձայն են. համեմատել նաև Hammer-Purgstall Geschichte d. Ilchane I, 87.

յայտնի և թաթարների կողմից երկար տարիներ յաճախած Մուղանը, որտեղ Բաշուն էր ապրում: Այժմ սա ստիպուած էր Հուլաւուի հրամանի առաջ տեղի տալ և իր անով ու զօրքով Փոքր Ասիա անցնել:

Հուլաւուն Հայաստան գալուց առաջ մեծխանի կողմից իր վրայ դրած պարտականութեան առաջին մասը ի կատար ածեց, այսինքն ասասիների իշխանութեանը վերջ դրեց: Այս հետաքրքիր օրդենի վարպետը Ալաէդդինն էր, որ 1255 թ. սպանւում է: Նրա որդի Ռուկու—էդդինը 1256 թ. հպատակւում է Հուլաւուին: Այդ արիւնարբու և պատերազմող օրդենի գլխաւոր ամրութիւնները գտնւում էին մեծ մասամբ Խուժաստանում և յապկապէս Մազանդարանի սարերի մէջ: Ամենանշանաւոր ամրութիւնը Ալամու բերդն էր, մի բարձր թեք բլուրի վրայ Ղազուինից հիւսիսարեւելք, շրջապատուած մի շարք ամրոցներով: Այդ ամրոցի առումից յետոյ ասասիների իշխանութիւնը բոլորովին խորտակւում է և նոցա կարգը վերանում¹⁾:

Հուլաւու խանը այժմ սկսեց պատրաստութիւններ տեսնել խալիֆաների մայրաքաղաք Բաղդադը պաշարելու և ամուր օղակների մէջ փակելու: Նա հրամայում է իւր պատերազմական բոլոր ուժերին կենտրոնանալ և զանազան կողմերից գէպի Բաղդադ քայլել: Բաշուն և Հայոց թագաւոր Հեթումը պէտք է արեւմուտքից ճանապարհը փակէին և պահպանութիւն անէին Տիգրիսի ափերին, որպէս զի արաբները քաղաքից փախչել չփորձէին: Հուլաւու խանը Բաղդադի մասին մեծ կարծիք ունէր: Մոնղոլների առաջին իշխաններն ու զօրապետները ընդհանուր առմամբ չափազանցում էին Բաղդադի խալիֆաների ուժն ու զօրութիւնը, եթէ ոչ վաղուց արդէն փորձած կրկնէին այս քաղաքի վրայ յարձակուել: Դրա համար նրանք բաւականին ուժեղ էին, բայց սիրտ չէին անում յարձակուել, որով—

1) Կիրակոս 219—20. Հեթում պատմիչը ասասիների մայրաքաղաքը Դիկատոն է կոչում (44): Ասասիների մասին մանրամասն պատմում է Marco-Polo I, Cap. համեմատել 41—43. Նոյնպէս H.-Purgstall, G. d. Ilch, 103.

հետև չէին ուզում իրանց յաղթական անունն ու հպարտ համբաւը վտանգի ենթարկել: Դրանով պիտի բացատրել, որ Հուլաւու խանն այժմ իւր բոլոր ուժերը, որոնք Արեւմտեան Ասիայումն էին գործում, Բաղդադի պաշարման համար առաջ է քաշում²⁾: Քաղաքը պաշարւում է 1258 թուին և նոյն տարում էլ առնւում է: Մուստասար խալիֆայի մահով, որ մեռնում է Հուլաւուի սեփական ձեռքով—Բաղդադի խալիֆայութիւնը դադարում է գոյութիւն ունենալուց, 515 տարի ապրելուց յետոյ³⁾:

Ասորիքի բախան էլ այդ օրերին վճռուեց: Հուլաւու խանը նոյն տարին յանձնարարում է իւր կրտսեր որդի Իսմուդին Մադաիրոսաց քաղաքը — Մուֆարդինը պաշարել: Քաղաքի ամուր պարիսպները և բնակիչների վճռական արիութիւնը երկար ժամանակ քաղաքը պաշտպանեցին մոնղոլների յարձակումների դէմ: Բայց վերջապէս 1260 թուին սովից նեղուած ստիպուած էր անձնատուր լինել թշնամուն, որն և վարուեց քաղաքի հետ առանց խնայելու⁴⁾:

2) Բաշուն այդ միտքը հետեւեալ կերպով է արտայայտում (Հուլաւու խանին տուած իւր պատասխանի մէջ). En effet, cette ville à raison de son immense population, de ses armées nombreuses, de la quantité d'armes et munitions qu'elle renferme, des chemins étroits et difficiles, qu'il faut franchir pour y arriver, ne peut que difficilement être envahie par une armée. Rachid-Eldin I, 225.

3) Բաղդադի խալիֆայութեան կործանումն ու քաղաքի առումը բաւականին մանրամասն պատմուած են հայ պատմագիրների կողմից: Ամենից ընդարձակ կանգ է առնում Կիրակոսը (220—224), որը աւանտեսի պատմութիւնից է քաղում: Խալիֆայութեան վերջին օրերը հետաքրքիր կերպով պատմուած են Կիրակոսի, Հեթում պատմիչի (45—46) Վարդանի (184) Մաղաքիայի (26) մօտ: Շատ բան կայ այդ մասին նաև Marco-Polo-ի մօտ I Cap. XXV հր. 33—36.

4) Բաղդադի պաշարումն ու առումը ձմեռան է տեղի ունեցել, ըստ Կիրակոսի: Հետեւեալ դարնանն արդէն Իսմուդը Մուֆարդին քաղաքի պարիսպների առաջ էր, այսինքն 1259-ի դարնանը. ապա գալիս է բաւականին երկարատև պաշարումը, որից յետոյ 1260 թուին քաղաքը առնւում է: Դրան համաձայն են Մաղաքիա (27), Վարդան (184), Raschid-Eldin (I, 375): Մուֆարդինը

Հուլաւու խանն այդ միջոցին պարապ չէր: Միջագետքի և Ասորիքի արեւմտեան մասերը մինչև այժմ շատ ազատ էին մնացել կամ հարեանցի էին ենթարկուել մոնղոլների ասպատակութիւններին: Այժմ նրանց հերթն էլ է հասնում: Դաշնակից թագաւորների և իշխանների խմբերով շրջապատուած՝ նա շարժւում է դէպի ասորական Միջագետք: Այս անգամ նրա զլխաւոր նպատակը Հալեպի Սուլթանի մայրաքաղաքն էր, որ և անմիջապէս պաշարւում է: Նոյն վիճակին են ենթարկւում շուտով այս կողմերի մեծ քաղաքները, Դամասկոս, Խառան, Ուրֆա, Ամիթ, Մերդին: Ահաւոր թշնամու յանկարծակի յարձակումը զրկել էր հակառակորդին որ և է դիմադրութիւնից: Ասորական Միջագետքը բոլորովին լուռ և անխօս իւր կործանմանն է դիմում: Երկրի նուաճումից յետոյ Հուլաւու խանը իւր գեներալներից մէկին՝ Քիթ-Բուղային տեղապահ և գլխաւոր հրամանատար է կարգում այդ կողմերում եղած մոնղոլական զօրքերի վրայ, իսկ ինքը դառնում է Հայաստան և Աղուանք, դէպի իւր ձմեռանոցը:

Միջագետքի նուաճումը համերաշխ կերպով չի պատմւում հայ աղբիւրների մէջ: Կիրակոսից և Վարդանից տարբեր են պատմում Մաղաքիան և Հեթում Պատմիչը: Ըստ Հեթումի այս նշանաւոր արշաւանքի կազմակերպիչն ու ծրագրողը հայոց Հեթում թագաւորն էր: Հուլաւուն ցանկանում էր Երուսաղէմ դիմել, բայց Հեթումը նրան դիտել է տալիս, որ Երուսաղէմի նախադուռը Հալեպ քաղաքն է, ուստի և Հուլաւու խանը պէտք է որ նախ այս քաղաքը նուաճի, զրա հետ ամբողջ Միջագետքը և ապա միայն Երուսաղէմը (47): Հեթում թագաւորը այնպէս խելօք է և թաթարների հետ այնքան բարեկամ, որ նոյն իսկ Մանգու մեծ խանին խորհուրդներ է տալիս. և որ ամենից զարմանալին է, նա պայմաններ է առաջարկում

գտնւում էր Հին Սոֆեն գաւառում, Նիմֆիսս գետի ափին, որը հռոմէացոց և պարսիկների սահմանն էր կազմում: Այդ քաղաքի պատմութեան մասին տես Quatremère, Raschid-Eldin 360, ծանօթ. 160. Saint Martin, Mémoires I, 86.

Մանգուլին մի այնպիսի ժամանակ երբ նա նրա մօտ որ-
պէս խնդրատու է գտնում մեծխանի միջոցով վերցնելու
դաժան և խիստ հարկահանութիւնը: Այդ պայմանները
այնքան բնորոշ են թէ պատմագիր և թէ ժամանակի հա-
մար, որ մենք առաջ ենք բերում: Հայոց թագաւորը Ման-
գու մեծխանին խնդրում էր, առաջին որ նա իւր ընտա-
նիքով քրիստոնիայ դառնայ և մկրտուի. երկրորդ, խաղա-
ղութիւն լինի և յաւիտենական բարեկամութիւն նրա և
մեծխանի միջև. երրորդ, մեծխանը պէտք է թոյլ տար
նուաճած բոլոր երկրներում եկեղեցիներ շինելու և հայերը
ազատ պէտք է լինէին ամեն տեսակ հարկերից և ձրի
աշխատանքներից, չորրորդ, մեծխանը պէտք է Սուրբ եր-
կիրը և Սուրբ գերեզմանը անհաւատներից առնէր և քրիս-
տոնեաներին տար. հինգերորդ, նա պէտք է Բաղդադի
արաբական խալիֆայութեանը վերջ տար. վեցերորդ, բո-
լոր թաթարները պէտք է պատրաստ լինէին Հայոց թա-
գաւորին զէնքով և զօրքով օգնելու, երբ այդ կարևոր հա-
մարուէր Հայոց թագաւորի կողմից. և վերջապէս եօթեր-
որդ, հայկական աշխարհում թաթարների նուաճած բոլոր
գաւառները պէտք է յետ տրուէին Հայոց թագաւորին:
Մեծխանը ընդունում է այս պայմանները և Հայոց թա-
գաւորի հետ յարձակողական և պաշտպանողական մի դաշն
է կապում:

Բոլորովին պարզ է, ի հարկէ, որ մեր առաջ պալա-
տական մի պատմագիր ունենք, որի հազօրդած տեղեկու-
թիւնները հարկաւոր է մեծ գգուշութեամբ և վերապա-
հութեամբ ընդունել: Մեզ թւում է, թէ պատմական ճշ-
մարտութիւնը այստեղ այն է, որ Հեթում թագաւորը որ-
պէս աւատական մի իշխան ամեն տեղ հետևում էր թա-
թարներին, երբ որոնք նրա պետութեան սահմաններում
էին երևում, և որ նա որպէս տեղեակ և հաւատարիմ
հպատակ շատ անգամ օգնական է եղել թաթարներին այն
բազմաթիւ գժուարութիւնների յաղթութեան մէջ, որ եր-
կիրը հանդէս էր բերում:

Ասորական Նզիպտոսի և Բաղդադի նուաճումից յետոյ

թաթարների ձեռքում գտնուում էին Հայաստանը, Վրաս-
տանը, Աղուանքը, Պարսկաստանը, Փոքր Ասիան, Միջա-
գետքը, Ասորիքն ու Պաղեստինը — մի խօսքով ամբողջ
հարաւարեմտեան Ասիան: Եւ այդ կողմերում Հուլաւու
խանը ամենազօրաւոր իշխանն էր: Նրա զինւորական ձիր-
քերը, քաջութիւնն ու վճռականութիւնը, բայց ամենից
առաջ նրա արքայական ծագումը ամբողջ արեւմտեան
Ասիայում նրան ստեղծել էին բարձրագոյն գիրքը, որ կա-
րող էր լինել: Բայց հակառակութիւններն էլ պակաս չէին:
Մենակ նա չէր արքայական ծագումից: Նրա գօրապետ-
ների մէջ շատերը կային, որոնք պարծենում էին նոյն-
պիսի ծագումով: Այժմ, երբ արդէն դադարել էր ռազմի
ազմուկը, սկսում են իրանց գլուխը բարձրացնել ներքին
երկպառակութիւններն ու իշխանական ձգտումները: Ինչ-
պէս արդէն յիշուեց, Հուլաւու խանի հետ վեց ար-
քայական իշխաններ էին եկել (Մաղաք. 23): Նո-
յանից իւրաքանչիւրը այժմ պահանջներ է յայտնում ու
յուրաքանչիւրը իշխանաւոր դառնալ: Այդ անհանգիստ տար-
րերին օգնում էր հիւսիսից Բարկան (= Բերկա), Բաթուի
և Սարդանի նախորդը, հզօր հրամայողը բոլոր ուժերի,
որոնք գտնուում էին Կովկասեան սարերից այն կողմը,
Կասպից ծովի հիւսիսային ափին և Վոլգայի գետաբերանին:

Հուլաւու խանն սախաւած էր իւրայինների այս բոլոր
ոսնձղութիւնների զէմ կռուել: Նա հրամայում է բոլոր
արքայազն իշխաններին սպանել, որոնք իր բանակում էին
գտնուում: Ապա մի մեծ ճակատամարտ է տեղի ունենում
Բարկայի հետ Վոլգայի ափին, որը սակայն վճռող նշա-
նակութիւն չի ունենում, որովհետեւ գետի սառույցը կո-
տրում է և երկու կողմերից շատ ռազմիկներ ջուրն են
ընկնում ու խեղդւում: Հակառակորդ բանակների այս
թշնամական յարձակումները հինգ տարի են տևում մինչև
1260 թիւը, երբ Հուլաւուն արդէն մեռած էր:

Հարաւի և Հիւսիսի թշնամական գործողութիւնների
հիմքը ըստ մեր աղբիւրների կրօնական համակրութիւն-
ների տարբերութիւնն էր: Ինքը Հուլաւու խանը հետևեալ

Մանգուին մի այնպիսի ժամանակ երբ նա նրա մօտ որ-
պէս խնդրատու է գնում մեծխանի միջոցով վերցնելու
դաժան և խիստ հարկահանութիւնը: Այդ պայմանները
այնքան բնորոշ են թէ պատմագրի և թէ ժամանակի հա-
մար, որ մենք առաջ ենք բերում: Հայոց թագաւորը Ման-
գու մեծխանին խնդրում էր, առաջին որ նա իւր ընտա-
նիքով քրիստոնիայ դառնայ և մկրտուի: Երկրորդ, խաղա-
ղութիւն լինի և յաւիտենական բարեկամութիւն նրա և
մեծխանի միջև: Երրորդ, մեծխանը պէտք է թոյլ տար
նուաճած բոլոր երկրներում եկեղեցիներ շինելու և հայերը
ազատ պէտք է լինէին ամեն տեսակ հարկերից և ձրի
աշխատանքներից, չբռնորդ, մեծխանը պէտք է Սուրբ եր-
կիրը և Սուրբ գերեզմանը անհաւատներից առնէր և քրիս-
տոնեաներին տար: Կինգերորդ, նա պէտք է Բաղդադի
արաբական խալիֆայութեանը վերջ տար: Վեցերորդ, բո-
լոր թաթարները պէտք է պատրաստ լինէին Հայոց թա-
գաւորին ղէնքով և զօրքով օգնելու, երբ այդ կարևոր հա-
մարուէր Հայոց թագաւորի կողմից: և վերջապէս եօթեր-
որդ, հայկական աշխարհում թաթարների նուաճած բոլոր
գաւառները պէտք է յետ տրուէին Հայոց թագաւորին:
Մեծխանը ընդունում է այս պայմանները և Հայոց թա-
գաւորի հետ յարձակողական և պաշտպանողական մի դաշն
է կապում:

Բոլորովին պարզ է, ի հարկէ, որ մեր առաջ պալա-
տական մի պատմագիր ունենք, որի հազօրդած տեղեկու-
թիւնները հարկաւոր է մեծ գգուշութեամբ և վերապա-
հութեամբ ընդունել: Մեզ թւում է, թէ պատմական ճշ-
մարտութիւնը այստեղ այն է, որ Հեթում թագաւորը որ-
պէս աւատական մի իշխան ամեն տեղ հետևում էր թա-
թարներին, երբ սրանք նրա պետութեան սահմաններում
էին երևում, և որ նա որպէս տեղեակ և հաւատարիմ
հպատակ շատ անգամ օգնական է եղել թաթարներին այն
բազմաթիւ գծաւարութիւնների յաղթութեան մէջ, որ եր-
կիրը հանդէս էր բերում:

Ասորական Եգիպտոսի և Բաղդադի նուաճումից յետոյ

թաթարների ձեռքում գտնուում էին Հայաստանը, Վրաս-
տանը, Ադուանքը, Պարսկաստանը, Փոքր Ասիան, Միջա-
զեաքը, Ասորիքն ու Պաղեստինը — մի խօսքով ամբողջ
հարաւարեւմտեան Ասիան: Եւ այդ կողմերում Հուլաւու
խանը ամենագորաւոր իշխանն էր: Նրա զինուորական ձիր-
քերը, քաջութիւնն ու վճռականութիւնը, բայց ամենից
առաջ նրա արքայական ծագումը ամբողջ արեւմտեան
Ասիայում նրան ստեղծել էին բարձրագոյն դիրքը, որ կա-
րող էր լինել: Բայց հակառակութիւններն էլ պակաս չէին:
Մենակ նա չէր արքայական ծագումից: Նրա գորապետ-
ների մէջ շատերը կային, որոնք պարծենում էին նոյն-
պիսի ծագումով: Այժմ, երբ արդէն դադարել էր ռազմի
ազմուկը, սկսում են իրանց գլուխը բարձրացնել ներքին
երկպառակութիւններն ու իշխանական ձգտումները: Ինչ-
պէս արդէն յիշուեց, Հուլաւու խանի հետ վեց ար-
քայական իշխաններ էին եկել (Մաղաբ. 23): Նո-
ցանից իւրաքանչիւրը այժմ պահանջներ է յայտնում ու
յաւակնում իշխանաւոր դառնալ: Այդ անհանգիստ տար-
րերին օգնում էր հիւսիսից Բարկան (=Բերկա), Բաթուի
և Սարղախի նախորդը, հզօր հրամայողը բոլոր ուժերի,
որոնք գտնուում էին Կովկասեան սարերից այն կողմը,
Կասպից ծովի հիւսիսային ափին և Վոլգայի գետաբերանին:

Հուլաւու խանն սախաւած էր իւրայինների այս բոլոր
ոտնձգութիւնների ղէմ կռուել: Նա հրամայում է բոլոր
արքայազն իշխաններին սպանել, որոնք իր բանակում էին
գտնուում: Ապա մի մեծ ճակատամարտ է տեղի ունենում
Բարկայի հետ Վոլգայի ափին, որը սակայն վճռող նշա-
նակութիւն չի ունենում, որովհետեւ գետի սառույցը կո-
տրւում է և երկու կողմերից շատ ռազմիկներ ջուրն են
ընկնում ու խեղդւում: Հակառակորդ բանակների այս
թշնամական յարձակումները հինգ տարի են տևում մինչև
1260 թիւը, երբ Հուլաւուն արդէն մեռած էր:

Հարաւի և Հիւսիսի թշնամական գործողութիւնների
հիմքը ըստ մեր աղբիւրների կրօնական համակրութիւն-
ների տարբերութիւնն էր: Ինքը Հուլաւու խանը հետևեալ

կերպով է արտայայտուում մեր պատմաբան Վարդանի առաջ. «Մեր եղբայրները մեր դէմ կռիւ են վարում, որովհետեւ մենք քրիստոնեաներին սիրում ենք, որովհետեւ քրիստոնէութիւնը մուտք ունի մեր տներին մէջ: Իսկ մեր եղբայրները աւելի սիրով են մահմեդականների հետ և նրանց մէջ մահմեդական կրօնն է իշխում»⁶⁾: — Ի հարկէ, կրօնի տարբերութիւնը կարող էր դեր խաղացած լինել և անկասկած խաղացել է: Բայց հարկաւոր չէ անտես առնել, որ ծանրութեան գլխաւոր կենդրոնն անշուշտ քաղաքական մոմենտի վրայ է ընկնում: Հիւսիսային թաթարների տեսչանքն էր ամբողջ Հարաւը, Հուլաւու խանի բովանդակ պետութիւնը իրանց իշխանութեան տակ բերել: Դա է ճշմարիտ հիմքը, որն և արտայայտուած ենք տեսնում ժամանակի ամենանշանաւոր դիտողներից մէկի — Մարկո-Պոլոյի թանգագին վկայութեան մէջ: Նա ասում է. «1261 թուին երկու մեծ իշխանները կռուեցին իրար հետ, Արեւելեան թաթարների իշխան Հուլաւուն և Արեւմտեան թաթարների իշխան Բարկան: Վէճի պատճառը երկու իշխանների պետութիւնների սահմանակից նահանգների խնդիրն էր: Նոցանից իւրաքանչիւրը ցանկանում էր տիրել այդ նահանգներին և ոչ ոք չէր ուզում միւսին տեղի տալ: Երկուսն էլ համառութեւն պնդում էին իրանց ասածը»⁷⁾: Յայտնի է, որ այդ նահանգները Կովկասից Հարաւ ընկնող

6) Նոյն հիմքը բերում են նաև մահմեդական գրողները: Ռաշիդ-Էլդինը պատմում է, որ Բարկան (Բերեկէն) շատ բարկացել էր, որ Հուլաւուն մահմեդականների նկատմամբ այդպէս անխնայ էր: «Il a saccagé toutes les villes des musulmans, précipité du trône les familles de toutes les rois de l'Islamisme; il n'a mis aucune différence entre un ami et un ennemi. Se le Dieu éternel me seconde, je lui demanderai compte du sang d'un si grand nombre d'êtres innocents». I 395.

7) Marco-Polo, C. 221, S. 338: Այդ պատճառը շատ հեշտութեամբ կարելի է նաև Raschid-Eldin-ի մօտ գտնել, երբ նա նկատում է. «La puissance de Bérékaï lui (Հուլաւու խանին) devient importune». I, 391.

մասերն էին — Սրանն ու Ազրբէյջանը⁸⁾:

Այդ եղբայրասպան կռիւների և թշնամութիւնների մէջ Հուլաւու խանը չէր մոռանում իւր մասնաւոր կեանքը յարմարաւոր կազմակերպել: Նա իւր շրջաններում ամենագորեղ հրամայողն էր: Մաղաքիան նրան նկարագրում է որպէս մեղմ ու գլխաւոր, շնորհաւատ. «Շատ թագաւորներ ու սուլթաններ էին գալիս նրա մօտ հպատակութեան խոր գլխակցութեամբ, թանգագին գանձերով ու նուէրներով: Հուլաւու խանն այնքան մեծանում, հարստանում է, որ ոչ ոք չի կարողանում նրա զօրքը, նրա ձիերն ու գանձերը համարել: Թանգարժէք գոհարներն ու մարգարիտները նրա մօտ ծովի աւազի պէս էին. ես դեռ լուծմ եմ ոսկու, արծաթի, երկվարների և նախիրների բազմութեան մասին, որոնք ոչ չափ ունէին և ոչ թիւ» (31):

Այդ հարուստ ու զօրեղ Հուլաւուն ցանկանում է իւր համար մի ամառանոց շինել: Իբրև յարմարաւոր տեղ նա ընտրում է Հայոց Արշակունի թագաւորների ամառանոցների տեղը Դաւան գաղտի վրայ, որին թաթարները անուանում էին Ալատաղ⁹⁾:

1265 թուին Հայաստանի և շրջապատող երկիրների երկնակամարի վրայ մի տարօրինակ տեսիլ է երևում, մի հրաշալի աստղ, որը պատմիչների կողմից Հուլաւուի մահուան գուշակ է համարւում: Հուլաւու խանն այդ երևոյթից անմիջապէս յետոյ մեռնում է: ¹⁰⁾ Նրա յաջորդը լինում է

8) d'Ohsson III 379.

9) Մաղ. 32, Կիր. 233, Օրբելեան 304, Պատկանով — Մաղաքիայի թարգմանութիւնը 71—73 եր. Տես նաև d'Ohsson III 380, 396, H. Purgstall 401. S. Martin-ը սխալուում է, երբ նա գրում է. C'est la plaine de Moughan, au midi de l'Araxes et du Kour, qui est en effet appelée très souvent, dans Raschid-Eldin et dans les écrivains Arabes et persans Alatagh ou Aladagh». Memoires II 283. Մինչդեռ այդ երկու անունները բոլորովին տարբեր տեղերի համար են: Վրացիական գործը այդ Ալատաղը համարում է թաթարների ամառանոց, իսկ Ղարաբաղն ու Մուղանը ձմեռանոց. Brosset 557, 545, 554, 564. համեմատել նաև Raschid-Eldin I 401, 21—23.

10) Մաղ. 36 Կիրակոս 234. ըստ Հեթումի (50) և Օրբել-

նրա աւագ որդի Աբաղան՝ նոյն թուին (1265). սա իշխում է 18 տարի և մեռնում է 1283 թ.¹¹):

Հուլաու խանի ժամանակ վերջանում է արեմտեան Ասիայում մոնղոլների նուաճումների երրորդ և վերջին շրջանը: Այստեղ այլևս չկար մի երկիր, որին մոնղոլները զոնէ մի անգամ տիրած չլինէին: Յետագայ երկար ժամանակը—յատկապէս 13-րդ դարի երկրորդ կէսը և դրանից էլ յետոյ ներքին կռիւների մի շրջան է թաթար խաների և իշխանների մէջ: Գա մի շրջան էր, երբ նուաճում երկիրները ենթակայ էին տէրերի սխաեմատիկ ու խիստ հարկահանութեանը, շահագործմանը: Ժամանակակից աղբիւրների հաղորդակցութիւնների բովանդակ միտքն այդ էր: Հէնց դրա համար էլ այդ անցքերի պատմութիւնն ու շարադրութիւնն ընդհատում ենք մենք այստեղ, մանաւանդ որ մենք առանձին գլուխներով ընդարձակ խօսելու ենք մոնղոլների կրօնի, կառավարութեան, պատերազմական արուեստի մասին:

Խանի (307) Հուլաուն մեռել է 1264 թ. Գիսաուրի երևումն ու Հուլաուի մահը ըստ վրացիական աղբիւրի ընկնում է նոյնպէս 1265 (571). Այդպէս հաղորդում է նաև Raschid-Eldin-ը I 417.

11) Օրբելիան 307, Մաղ. 37. Հեթ. 50.



ՅԱԻԵԼՈՒԱԾ I.

Մոնղոլական խաների և մեծխաների ձեռնադրանակն աղիւսակը բաժնակական աղբիւրների.

Կիրակոս Գանձակեցու տեղեկութեան համաձայն մի թաթար բարձրատիճան անձնաւորութիւն շատ բան է պատմում մոնղոլների ծագման և բարքերի մասին հայ իշխան Գրիգոր Մամիկոնաներին: Ի միջի այլոց նա ասում է, որ Աստուած երկինքը իրան բնակարան է շինել և երկիրը Չինգիզխանին տուել ու նրա ժառանգներին: Ուրեմն տիրելու, իշխելու իրաւունքը գերագոյն, գերբնական աղբիւրներից էին ստանում մոնղոլները—ինչպէս և բոլոր իշխանները: Չինգիզխանը ըստ Կիրակոսի (122) երեք, ըստ Հեթումի (36) 12 որդի է ունեցել¹): Կիրակոսը միջակ որդուն չի անուանում, աւագը կոչւում էր Չաղատա և կրտսերը Հոգտա-խան: Չինգիզխանին նրա կրտսեր որդին է յաջորդում (Կիրակոս 122, Հեթում 37), իսկ Հոգտա խանին յաջորդում է Գուլիկ խանը—մէկը նրա չորս որդիներից (Հեթումը սրան անուանում է Ջնոն 37). Գուլիկի յաջորդը լինում է Մանգու խանը—Իմաստուն խանը, ինչպէս որ Օրբելիանը նրան անուանում է (206):

Մանգու խանն երեք եղբայր ունէր, որոնք բոլորն էլ պատմութեան մէջ մեծ դեր են խաղացել. Հուլաու, Արիք—Բուղա և Սուպիլա (Կիր. 221, 231, Marco-Polo I cap. 29, S. 86).


Մեծխաների կանոնաւոր յաջորդականութիւնը կարելի է մինչև այդտեղ հասցնել ըստ հայկական աղբիւրների, մեծխանութեան հէնց սկզբից ուրեմն հինգ մեծխաներ են յիշուում. Չինգիզ խան, Հոգտա խան, Գուլիկ, Մանգու և Սուպիլա (Արիք—Բուղա):

Բայց Չինգիզ խանը բացի այդ յիշուած որդիներից ուրիշ որդիներ էլ ունէր—Չուչի և ապա Տուլի: Այդ երկուսը չեն յիշուում հայ աղբիւրների մէջ: Չուչին մի որդի ունէր Բաթգա անունով, որ դարձաւ յետոյ արեւելեան Եւրոպայի հպարտ նուաճողը: Իւր բնակավայրը նա ընտրել էր Կասպից ծովի հիւսիսային ափերին և Վոլգայի վրայ: Նրա որդին ու յաջորդը Սարգախն էր: Ապա

1) Մոնղոլները, ինչպէս յայտնի է, բազմակին էին. միաժամանակ նրանք կարող էին շատ որդիք ունենալ. դրա համար դժուար է նրանց որդոց յաջորդութիւնը ճշտիւ նշանակել: Զատ տեղերում «եղբայր»—խօսքը աղգական պէտք է հասկանալ:

իշխանութեան գլուխ են անցնում նրա բարեկամները՝ Բարկա և Բարկաշա (Կիր. 217, Վարդան 199, Մաղ. 30): Իսկ Տուլիի որդիքն էին Մանգու խան, Հուլաուու, Արիք-Բուղա և Խուպիլա: Ըստ այդմ ուրեմն կարելի էր հետևեալ սխեման կազմել.

I Չինգիզ խան*)




Դառնանք այժմ մոնղոլական իշխանական տանը արևմտեան Ասիայում—Հայաստանում, Պարսկաստանում, Վրաստանում, Ասորիքում և Միջագետքում: Այս կողմերում առաջին խանն էր Հուլաուուն. նրա կինը հուլակաուր Տոխուս-խաթունն էր (Վարդան 138, Մաղ.-ն նրան Տաուու կամ Տուս է անւանում, իսկ Հեթումը՝ Դուկոսսորա 41). Հուլաուուն չորս որդի ունէր. նրա յաջորդը Արաղա-խանն էր. սրա գահ բարձրանալով վերջացնում են իրանց գործերը ժամանակի երկու մեծ պատմաբանները—Վարդան և Կիրակոս. իսկ Մաղաքիան դեռ բաւական բան է պատմում Արաղայի կառավարութեան և ժամանակի մասին: Արաղայի յաջորդ յիշւում է նրա եղբայր Թաղդուարը, որը պատմութեան մէջ յայտնի է Մահմեդ անունով (Հեթում 16, 57, Մաղ. 51, Օրբելեան 311): Հուլաուուի միւս որդիքն էին Իսմուդ, որին Հուլաուուն Մարտիրոսաց քաղաքի առումն յանձնեց (Վար. 199, 184. Կիրակոսը նրան անւանում է Զիասմուս). ապա Ղոնդրաթա (Օրբ. 311), որն իւր Մահմեդ=Ահմեդ եղբորից սպանւում է: Հուլաուուի հինգերորդ որդին Մանգուխանն էր (Հեթում 55, 56) որն իր եղբոր՝ Արաղայի հետ մի օրում մեռաւ, որովհետեւ պալատականները թունաւորեցին նրանց երկուսին (Հեթում 56, Օրբ. 311):

Արաղա խանի որդին Արդունն էր՝ Թաղուդար—Ահմեդի յաջորդը: Նրա Երուխ-խաթուն կնոջից ծնւում են երկու որդի՝ Ղազան և Ղարպաղանդ (Հեթ. 59): Արդունի յաջորդը լինում է նրա եղբայր Ռեղայիդը (Հեթ. 59, Օրբ. նրան անուանում է Քեղատու և էրնջի-Թուրքնջի. հմտ. Паткановъ I ծանօթ. 60, էր. 68): Ռեղայիդի սպանումից յետոյ խան է դառնում նրա ազգական Բայտունը, որի յաջորդները լինում են Արդունի երկու որդիքը—Ղազանն ու Ղարպաղանդը (Հեթ. 59, 67. Օրբ. 353):—Ըստ հայկական աղբիւրների արևմտեան Ասիայի խաների յաջորդականու-

*) Լատինական թուանշանները մեծիմաստով համար է, իսկ արաբականները՝ մսկէ չորդայի մէջ իշխող խաների:

թիւնը կարելի է հասցնել ուրեմն մինչև ութերորդ խանը: Խանութեան հիմնադիրը՝ Հուլաուուն և նրա յաջորդը կոչւում էին իշխան: Եթէ սխեմի վերածենք մեր ասածը՝ կըստանանք



ՅԱԼԵԼՈՒՄ II

Մոնղոլների զօրապետները Արևմուտքում.

Այս յաւելումով մէջ ուղում ենք այն բոլոր անունները համախմբել, որոնք 13-երդ դարի հայ պատմիչների մօտ պատահում են. բոլոր գենեոլներն ու զօրապետները, որոնք Հայաստանում, Վրաստանում, Աղուանքում և Միջագետքում գործել և նուաճումներ են արել: Այդ անձնաւորութիւնները մեծ մասամբ իշխաններ են, բայց նրանց ծագումը յաճախ անյայտ է մնում, ուստի և որոշ ծննդաբանութիւն տալ չի կարելի: Նրանց անունների համախմբումը աղբիւրների մէջ համապատասխան տեղերի ցուցման հետ միասին մի լաւ բանալի է ստուգելու և վերահաստատելու այն բոլոր անձնաւորութիւնների անունների համար, որոնք հարեան ազգերի պատմաբանների մօտ հանդէս են գալիս:

Մոնղոլական առաջին խուզարկու գնդի հրամանատարն Հայաստանում և Վրաստանում Սաբատա-Բահաուդին էր. (Բահաուդին խօսքը մոնղոլերէն է և 13-րդ դարում շատ յաճախ է պատահում: Մաղաքիան (32) պատմում է, որ Հուլաուուն հայ և վրացի զինուորներին նրանց քաջութեան և զեղեցկութեան պատճառով բահատուր էր անուանում: Պատկանեանի բացատրութեան համաձայն այդ խօսքը «քաջ մարդ» է նշանակում. դա պատահում է նաև բատուր կարճ ձևով: Հաւանական է, որ թաթարական բատուր խօսքը այդ բառից է: Ռուսական բոգատիր և բատիր այդ բառից են ծագում. հմտ. Պատկանեանի Մաղ.-ի թարգմանութեան ծանօթ. 62, 94 էրես. Raschid-Eldin 106):

Թաթարների առաջին հրամանատարն Արևմուտքում Չարմազանն էր (Վարդ. 171, Մաղ. 7, Օրբել. 295). նրա երկու որդիքը կոչւում էին Սիրամուն (Կիր. 232) և Բորա (Մաղ. 23) նրա շտաբը կազմուած էր հետևեալ կերպով.

Իսաւր-Նոին (Մաղ. նրան Ասրար է անուանում 10). Ղուբուն
Նոին (սա այն բարձրաստիճան մոնղոլն է, որ Հայոց Գրիգոր իշ-
խանին շատ բան է պատմել մոնղոլների մասին, սա էլ Կիրակո-
սին է ասել, իսկ Կիրակոսը գրել է իւր գրքի XXI-գլխի մէջ):
Խուբուն Նոին (Կիր. 150), Չաղատա (Կիր. 150):—Չարմաղանի
գենեալներն հետեւեալներն էին. Ղատաղան (Օրբ. 295, Վարդ. 171,
Կիր. 129). Ասլան, (Օրբ. 295, 348). Ասաւուր (Օրբ. 295. Վար-
դանը նրան անուանում է Իսաւուր 183) Դուխատա (Վարդ. 177).
Կիր.-Իսուխատա (136, 137): Բենալ (Մաղ. 7. Մխիթ. Անեցին
նրան անուանում է Թենալ 82). Մուլար Նուին (Վարդան 177, Կիր.
128, Մաղ. 7). Ղարա-Բուղա (Մաղ. 8, Կիր.-ը նրան անուանում է
Ղարա-Բահատուր 141). Ասուխուն (Մաղ. 8), Սոնիթա (Մաղ. 8)
Չաղաթա կրտսեր (Մաղ. 8). Օղոթա (Մաղ. 8), Խոջա-Նոին (Բաշուի
տեղապահը Կիր. 215, Մաղ. 11): Խուսումչի (Մաղ. 11, Օրբ. 348)
Խունուն (Մաղ. 11) Անգուն Նոին (Կիր. 174), Չոպան (Օրբ. 348)
Չոջ-Բուղա (Կիր. 143):—Չարմաղանի յաջորդը Բաշուն եղաւ
(Մաղ. 13, Վարդ. 180, Օրբ. 297, Կիր. 152):—Հարկահաններից
յայտնի են՝ Արղուն (Կիր. 175, Հեթում 22, Վարդան 182, Օրբ.
344). Նրա հետ յիշուում են Բուղա (Կիր. 175) Տոնդուս-Աղա (Կիր.
144) Թուրա-Աղա (Կիր. 209): Արղունի որդին կոչուում էր Նաւ-
րուդ կամ Նորուս (Օրբ. 344):

Եթէ յիշենք նաև Ուղուր-Նոինին (Կիր. 160), Դուկալ գըն-
դապետին (Օրբ. 343) մատնիչ իշխան Փարվանային (Հեթում 53)
և էլշիգաթա տեղապահին—դրանով կըսպառենք 13-րդ դարի մեր
գործածած հայ աղբիւրների մէջ առաջ եկած բոլոր թաթարական
անունները:



Մ Ո Ն Ղ Ո Ղ Ն Ե Ր Ը

1.

Մոնղոլների արտաքին տեսքը եւ սովորութիւնները.

Իրանց բարքերով ու սովորութիւններով, իրանց կրօ-
նական մտապատկերներով, բայց ամենից շատ իրանց ար-
տաքին տեսքով թաթարներն անսովոր ապաւորութիւն են
թողել այն ազգերի և ժողովուրդների վրայ, որոնց նրանք
նուաճել և տիրել են: Իւրաքանչիւր ժամանակակից պատ-
միչ սիրով կանգ է առնում ու երկարօրէն պատմում մոն-
ղոլների ներքին ու արտաքին առանձնայատկութիւնները:
«Նրանց տեսքը դժոխային էր — ասում է Կիրակոս, անտա-
նելի և սոսկալի: Շատերը մօրուք չունէին—միայն շատ
քչերն էին, որ ունէին, այն էլ կզակի և չրթունքների
վրայ: Նրանց աչքերը նեղ էին և փոքր, բայց սրատես,
նրանց ձայնը նուրբ էր, բարակ ու սուր. ամուր մարմ-
նակազմ ունէին և երկար ժամանակ ապրում էին առողջ
և առանց հիւանդութիւնների» (147): Մաղաքիան աւելի
մանրամասն է պատմում. «Մենք կամենում ենք այստեղ
նաև այն ասել, թէ ինչի նման էին առաջին թաթար-
ները. որովհետև նրանք մարդանման չէին: Նրանց
երևոյթն ու արտաքին տեսքն այնպէս սարսափելի էր,
որ երեւիլայել անգամ դժուար էր: Գլուխներն այնքան
մեծ էին, ինչպէս ցուլերինը, աչքերն այնքան նեղ, ինչ-
պէս վառեկներինը, քիթը այնքան կարճ, ինչպէս կառ-
ուինը, այտերը նման էին շան այտերին, մէջքը այնքան
բարակ, ինչպէս մրջիւններինը. ոտքերը այնքան կարճ,
ինչպէս խոզի ոտները¹⁾. մօրուք ամենևին չունէին.

1) Այստեղ ուրեմն խօսքը թաթարների մարմնական ա-
ռանձնայատկութիւնների համեմատութեան մասին է դանաղան
կենդանիների հետ: Պարսիկ պատմագիր Վասսֆը մի այդպիսի
զուգահեռական համեմատութիւն է տալիս թաթարների հոգեկան
յատկութիւնների և բնութագրի ու կենդանիների մէջ: Այնտեղ

նրանք ուժեղ էին առիւծների պէս. նրանց ձայնը աւելի հնչուն և սուր էր, քան արծիւների ձայնը. յանկարծակի յայտնուել գիտէին այնտեղ, որտեղ ամենեւին չէին սպասուում: Նրանց կանայք սրածայր, մեառքսածածկ գլխարկներ էին կրում. նրանք շարունակ էին իրանց երեսները և ծնում էին օձերի պէս ու կերակրում էին իրանց երեսներին գայլերի պէս: Մահն ամենեւին չէր նկատուում նրանց մէջ, որովհետև նրանք ապրում էին մինչև 300 տարի... Ահա այդպէս էին առաջին թաթարները, որոնք մեզ մօտ եկան: (6—7).

Այս երկու նկարագրութիւնները թաթարների արտաքին տեսքի մասին մի որոշ պատկեր են տալիս—այն էլ բաւականին տգեղ պատկեր: Բայց մի ուրիշ աղբիւր—Օրբելեանը այս նկարագրութեանը բոլորովին հակառակն է ասում. «Նրանք շատ գեղեցիկ դէմք ունէին և նրանց դէմքերը անմազ էին ինչպէս որ կանանցը» (234): Ուրեմն շատ գեղեցիկ տեսք! Եւ այս գրում է այնպիսի մի մարդ, որը շատ յաճախ մոնղոլների հետ գործ է ունեցել և մոնղոլ իշխանների մօտ հիւրասիրուել: Թէև տեքստի մէջ ոչ մի ակնարկ չկայ, բայց թերեւ կարելի լինէր Սեն Մարտենի հետ (II, 263) ենթադրել, որ Օրբելեանի այս տեղեկութիւնը գրելու առաջինը ազնուական և իշխանական թաթարներին է վերաբերում, որոնք անշուշտ զգալիօրէն այլ կերպարանք պէտք է ունեցած լինէին, քան հասարակ ժողովուրդը: Կամ թէ թաթարներն Օրբելեան եպիսկոպոսին թերեւ հէնց այն պատճառով են գեղեցիկ թուացել, որովհետև նրանք իրանց անմազ երեսներով կանանց են յիշեցրել²⁾.

Կարողում ենք. «Ասում են որ մարտիկը պարտաւոր է կենդանիների տասը կարեւոր յատկութիւններն ունենալ. աքաղաղի քաջութիւնը, հաւի մեղմութիւնը, առիւծի սիրտը, խոզի յարձակողական թափը, շան համբերատարութիւնը, արագիւլի զուշուրութիւնը, աղուիս խորամանկութիւնը, ագռաւի շրջահայեցողութիւնը, գայլի գիշատիչութիւնը և կատուի հանգստութիւնը».

Hammer-Purgstall, Geschichte d. Gold. Horde 39.

2) Վրացի տարեգրի մէջ ևս թաթարների մի նկարագրութիւն կայ, ... Ils avaient une belle stature, des membres forts et

Թաթարների կենցաղավարութեան և սովորութիւնների մասին ևս հայոց աղբիւրների մէջ բաւականաչափ տեղեկութիւններ ունենք: «Երբ կարողանում էին—նրանք շատ էին ուտում և խմում, իսկ երբ դրա համար ժամանակ չունէին, երկար ժամանակ առանց կերակրի էին մնում: Ամեն տեսակ կերակուր էլ ուտում էին, խտրութիւն չէին դնում սուրբ և անսուրբ մսի մէջ. սակայն ձիու միսը գերադասում էին միւս բոլորից: Միսը մանր կոտորում էին, եփում կամ տապակում էին առանց աղի, նորից կոտորում և ապա ուտում էին. շատերը ուտելու ժամանակ ուղտերի պէս չոքում էին. միւսները նստած էին ուտում. ծառաներն ու տէրերը միասին էին ուտում առանց աստիճանի խարուսեան: Խմում էին կումիս³⁾ և գինի: Խմելուց առաջ մէկը վերցնում էր մի տակառ ու մի փոքրիկ բաժակով նրա միջից խմիչքը ցանում էր դէպի երկինք, ապա դէպի երկրի չորս կողմերը և վերջը դէպի իր կողմը. ապա մի փոքր խմում էր ու բաժակը տալիս էր մեծամեծներին խմելու⁴⁾: Կին էին առնում որ-

robustes, de beaux pieds, la peau blanche. Brosset 485—86. Խիստ հետաքրքիր է Plano-Carpini վանականի հետեւալ նկարագրութիւնը. „Forma personarum ab omnibus hominibus aliis est remota. Inter oculus enim et inter genas sunt, plus quam alii homines lati: genae etiam satis prominent a maxillis; nasum habent planum et modicum; oculos habent parvos et palpebras usque ad supercilia elevatas, Graciles sunt generaliter in cingulo, exceptis quibusdam paucis. pene omnes mediocris sunt ctaturae. Barba fere omnibus minima crescit, aliqui tamen in superiori labio et in barba modicos habent crines, quos minime fondent. Pedes etiam modicos habent.“ 215, 216. Համարեա բոլորովին նոյն կերպ նկարագրում է թաթարներին նաև Monteuille-ը հմեռ. 203.

3) Rubruck-ը այս խմիչքն անուանում է cosmos և ասում է. «cette boisson est du lait de jument»—17. Նա պատմում է, որ իւրաքանչիւր տան մուտքի առաջ մի տակառ լիքը կումիս էր դրուած, որի մօտ կանգնած էր ջութակը ձեռին մի երաժիշտ և երբ տէրերը խմում էին, սա խփում էր լարերին (16).

4) Թաթարների ուտելու և խմելու մասին գրում է P. Carpini-ն. «Cibi eorum sunt omnia quae mandi possunt: comedunt enim

քան կամենային, տանել չէին կարող կանանց կողմից անհաւատարմութիւն, սակայն իրանք ինչքան կարող էին օտար կանանց հետ յարաբերութեան մէջ էին մտնում: Նրանք ատում էին գողութիւնը և գողերին անխնայ կերպով սպանում էին: (Կիրակոս 147—48).

Օրբելեանը թաթարների շատ առաքինութիւնների մասին խօսում է մեծ գովեստով: «Թէպէտև անաստուած և անօրէն, բայց բնութեան օրէնքներով լաւ զարգարուած էին: Նոքա ատում էին բոլոր կեղտոտ մոլորութիւններն ու զգուհիի գործերը, իրար նկատմամբ արգարախոհ էին, իրանց տէրերին հաւատարիմ և հնազանդ, իրաւարար և անկեղծ. պարզ բարքեր ունէին նրանք, բայց ընչասէր էին, կողոպտող և շահագործող» 235: Վարդանը մի քանի նոր գծեր է աւելացնում. «Զափաւոր էին ուտելու, խմելու և ամուսնական կեանքի մէջ: Ամուսնանում էին երբ քսան տարեկան էին լինում և երբ յիսուն տարեկան էին լինում՝ դադարում էին ամուսնական յարաբերութիւն ունենալ, բայց ով գիտէ, գուցէ և խաբում էին»—աւելացնում է սկեպտիկ վանականը (199):

Թաթարները շատ կապուած էին իրանց սովորութիւններով ու բարքերով իրանց նախահայրերի հետ: Նրանց համար աւանդութիւնը սուրբ էր: Թաթարների մէջ տարածուած էր ու յայտնի բարոյական նորմերի մի կողքից, որը սրբութեամբ պէտք է պահուէր: «Զգողանալ, չստել, օտար կանանց հետ յարաբերութեան մէջ չմտնել, մերձաւորներին սիրել, ինչպէս սեփական անձը, չհայհոյել և

canes, lupos, vulpes, equos; etiam in necessitate carnes humanas manducant... Vidimus etiam ipsos comedere mures. Panem non habent, nec olera, nec legumina, nec aliquid aliud nisi carnes; de quibus etiam tam paucas manducant, quod aliae nationes vix inde vivere possent»—242—43. «Lae jumentinum bibunt in maxima quantitate si habent: bibunt etiam ovinum, caprinum, vaccinum et camellorum. Vinum, cerisian, et medonem non habent, nisi ab aliis nationibus mittatur, vel donetur eisdem» 244. *Հմտ. նաև* Brosset 487, Marco-Polo I 49, cap 87—88.

հայհոյանք չսովորեցնել. տէրերին ազատօրէն հնազանդուել, աշխարհները խնայել, աստուածների տները, ինչ կրօնի էլ դրանք պատկանեն, ազատ թողնել, յարգել ու հարկի տակ չձգել»: Այս բոլոր բարոյական նորմաները յայտնի էին որպէս Մեծն Չինգիզ խանի օրէնքներ և բոլորը միասին կոչւում էին Եասագ (Օրէնք, հրաման, արգելք):

Մի այլ ժամանակակից պատմիչ թաթարների բարքերն ու սովորութիւններն այնպէս է նկարագրում, որ այնքան էլ չի համապատասխանում միւսների պատմածներին. «Ապա-նութիւնն ու ամուսնական անհաւատարմութիւնը մեղք չէր համարւում նրանց մէջ. բազմաթիւ կանայք էին առնում նրանք: Խորթ մայրը պէտք է իւր որդու հետ ամուսնանար և եղբայրը իւր եղբոր այրու հետ: Նրանք հիւրասէր են. ինչ որ ունեն, տալիս են իրանց հիւրին, միւսներից էլ նոյնն են պահանջում, և երբ մէկը չի տալիս, ուժով են առնում: Խոնարհ են, երբ թոյլ են, բայց երբ զօրեղ կամ բազմաթիւ են, այն ժամանակ անբարտաւան են. նրանք չեն ցանկանում, որ ուրիշները ստեն, սակայն իրանք շարունակ ստում են: Իրանց սխալներն ու մեղքերը խոստովանելիս—ոչինչ չեն պահում և միշտ ճշմարտութիւնն են ասում (չեթում Պատմիչ) 70, 434 6):

5) Համարեա նոյն խօսքերն ունի Եասագը նաև Մաղաբիայի մօտ (5): Աստուծոյ հրեշտակը թաթարներին հետեւալ օրէնքներն է սովորեցնում, որոնք բոլորը միասին Եասագ էին կոչւում. «Մերձաւորներին սիրել, ամուսնութեան մէջ անհաւատարմութիւն չանել, չգողանալ, սուտ վկայութիւն չտալ, ոչ որի չմատնել, ծերերին ու աղքատներին պատուել. և եթէ որ և է մէկն այս օրէնքներին հակառակ էր զնում—սպանւում էր»: Նաև 31. *Հմտ. P. Carpini* 267, Վրացի քրոնիկը—Brosset 486. Տես նաև Бартольдъ. Туркестанъ въ эпоху нашествія монголовъ 42.

6) Արևելեան այս հիւրասիրութիւնն ու առատաձեռնութիւնը նկատուած է և արդէ մոնղոլների մէջ. «Մոնղոլներն բնութանը առմամբ շատ բարեսիրտ են ու սիրալիր, վերին աստիճանի հիւրասէր և շիտակ: Նրանց բարքերը մեղմ են, յանցանքները չափազանց քիչ են նրանց մէջ»:—Iwanowski, die Mongolen. Leipziger Diss. *Հմտ. նաև* P. Carpini 336—37, Monteulle 201—3.

Թաթարների մահուան և յուզարկաւորման սովորութիւններն ևս տարօրինակ էին: «Ներք նրանցից որ և է մէկը մեռնում կամ սպանւում էր, մարմինը շարունակ այս ու այն կողմ էին քարշ տալիս, որովհետեւ սատանան դիակի միջով դեռ խօսում էր: Յաճախ այրում էին մեռելներին⁷⁾: Բայց թաղում էլ էին. այս դէպքում գերեզմանի փոսի մէջ ձգում էին մեռածի բոլոր զէնքերը, շորերը, ձիերը, ոսկին և աղախիններից ու ծառաններից մի քանիսին, որպէս զի սրանք նրան այնտեղ էլ շարունակեն ծառայել: Նրա երկփարն էլ մօտն էին դնում, որովհետեւ, ասում էին, նա այնտեղ էլ կարող է կռիւ վարել⁸⁾»:

2.

Մոնղոլների կրօնի եւ կրօնական հասկացողութիւնների մասին.

Այս շրջանի հայ պատմագիրները, որոնք ինչպէս միջնադարեան բոլոր հեղինակները, հոգեւոր դասին էին պատկանում, թաթարների կրօնական հասկացողութիւնների վերաբերեալ բաւականին մանրամասն են: Կենդանի հետաքրքրութեամբ նշանակում են նրանք ամենայն ինչ, ինչ որ թաթարների կրօնի, բարոյականութեան և կրօնական հասկացողութիւնների մասին լսում և իմանում են: Այդպիսով նրանք հանդէս են բերում շատ հետաքրքիր ու թանգագին տեղեկութիւններ: Նրանց տեղեկութիւններն ու պատմածքները բոլորն էլ արժանի են ուշադրութեան, որովհետեւ այդ պատմիչներն համարեաւ բոլորը հնարաւորութիւն ունէին թաթարների կեանքն իրանց մօտ անմի-

7) Les Tartares brûlent leurs morts d'après l'usage antique et en déposent les cendres au haut d'une pyramide». Rubruck 113, յետոյ 114, 138.

8) Կիրակոս 149. Այդ հաւատալիքների մասին տես նաև M. Polo, որն ի միջի այլոց ասում է. «Նրանք հոգին անմահ են համարում այն մտքով, որ մարդու մահից յետոյ նա անցնում է մի այլ մարմնի մէջ և նայած թէ մարդը լաւ է ապրել թէ վատ — ըստ այնմ էլ հոգին լաւից անցնում է լաւապէսին կամ վատից վատթարին, II, գլուխ 104, 156 երես.

ջական կերպով և նրանցից մի քանիսը նոյնիսկ ծանօթներ ու բարեկամներ ունէին մեծամեծ ու ազնուական թաթարների մէջ:

Ժամանակի հայ պատմիչների միաձայն ու ներդաշնակ հաղորդագրութեան համաձայն թաթարներն սկզբում մի որոշ պաշտամունք չունէին: Նրանք թափառականներ էին ու անասլատի աւազակներ, վայրի բարքերի տէր ու երկար ժամանակ շատ աղքատ էին: «Նրանք ոչ մի պաշտամունք չունէին, լոկ թաղեայ պատկերներ, որ այժմ էլ դեռ իրանց հետ ման են ածում: Նրանք հիանում էին արևով և համարում էին նրան աստուածային մի զօրութիւն» (Մաղաք. 3): «Սկզբում նրանք անաստուած էին ու անհաւատ» — կարճ կերպով ասում է Օրբելեանը (234). «Նրանք ընդունում են մի անտեսանելի աստուած, որին օգնութեան են կոչում, բայց ոչ պաշտամունք ունին, ոչ աղօթքներ և ոչ էլ պահք» (Հեթում, 70): «Նրանք պաշտամունք կամ աղօթք չունին, բայց գործ անելիս ու աշխատելիս շատ անգամ յիշում են Աստուծոյ անունը: Թէ արդեօք ճշմարիտ Աստուծոյ անունն են տալիս, թէ մի ուրիշինը — չգիտենք, նոյն իսկ իրանք էլ չգիտեն» — Կիրակոս (148):

Այս բոլոր քաղուածքները վկայում են, որ թաթարներն սկզբում զուտ բնակրօնին էին հետևում, առանց արամունքների, առանց ծիսակատարութիւնների, առանց պաշտամունքի. նրանք պաշտում էին բնութեան տեսարանները պարզ կերպով, կախարհութեան հաւատով էին և իրանք էլ գուշակութիւններով էին պարագում:

Պա բոլոր բնածոյովութիւնների սկզբնական կրօնն է, ոչ միայն Բարձր-Ասիայում, այլ և երկրագնդի միւս մասերում — բոլորովին պարզ մի միստիկ, որ դիմում էր բնութեան ուժերի օգնութեանը: Թաթարներն այս դրութեան մէջ էին իրանց հայրենիքում և ով գիտէ ինչքան երկար թափառել են նրանք իրանց հետ քաշ տալով նաև իրանց կրօնական ու հոգեկան հարստութիւնը¹⁾:

1) Helmolt, Weltgeschichte II, 161. Plano de Carpinii-ն հե-

Այս պրիմիալ մտապատկերները չէին կարող սակայն երկար ժամանակ թաթարների հոգեկան բովանդակութիւնը մնալ: Իրանց թաթառուների ժամանակ յաճախ նրանք շփման մէջ էին մտնում իրանցից կուլտուրապէս բարձր կանգնած ժողովուրդների հետ և մասաւոր-կրօնական հորիզոնը գնալով փոխւում էր հետզհետէ այն չափով, ինչ չափով որ մոնղոլները շրջապատող ազգերից մտապատկերներ էին առնում: Բնականօրէն առաջինները չինացիներն էին, որոնք բոլոր միւս ազգեցութիւնների հետ կրօնապէս էլ ազդեցին թաթարների վրայ: Բրահմայական-բուդդիստական մտապատկերներն հետզհետէ անցնում են թաթարներին և հարստացնում են թաթարի ազգատ, աղօս հոգին:

Հայ ազգիւրներն գլխի կերպով նկատել են տալիս մեզ այս կերպարանափոխումը: Հայոց Հեթում թաղաւորը իւր տպաւորութիւնները հետեւեալ կերպով է պատմում, որ նա ստացել էր մոնղոլների աշխարհում Մանգու մեծ-խանի հետ լինելու ժամանակ. «Մի աշխարհ կայ այնտեղ պատկերապաշտ ու կռապաշտներով լիքը. նրանք կաւէ շատ մեծ կուռքեր ունին Շակմոնիա աստուծոյ համար, որի մասին նրանք պատմում են, որ նա արդէն 3040 տարի իշխում է և դեռ 35 դուման էլ դեռ աստուած է մնալու (Իւրաքանչիւր դումանը 10,040 տարի է): Նրանք մի ուրիշ աստուած էլ ունին, Մադրին անուանով, որին իրանց դեղեցիկ տաճարների մէջ շատ մեծ կուռքեր են շինել: Այս երկրի բոլոր բնակիչները, իրանց կանանց և երեխաների հետ քրմեր են և կոչւում են տոխն-ներ: Գլխի և երեսի

տեղան է ասում թաթարների կրօնական հայեացքների մասին. Unum deum credunt, quem credunt esse factorem omnium visibilium et invisibilium—222. Solem insuper, lunam et ignem venerantur et adorant et aquam et terram, eis ciborum et potus primicias offerentes et mane pottissime antequam comedant et bibant—226. De vita aeterna et damnatione perpetua nihil sciunt, credunt tamen, quod post mortem in alio seculo vivant et greges multiplicent, comedant, bibant et alia faciant quae in hoc seculo a viventibus hominibus fiunt—230. Historia Mongolarum.

մազը սափրում են: Քրիստոնեայ հոգևորականների նման սրանք էլ գեղին փիլոններ ունին, բայց ոչ թէ մէջքով են ձգում, այլ առաջի մասում: Ուտելու մէջ և ամուսնական կեանքում չափաւոր են» (Կիրակոս 216—17): Նոյն Կիրակոսի մօտ (233, 234) Շակմոնիա և Մադրին աստուածների մասին գեռ ուրիշ յիշատակարաններ էլ կան: Նոյնպէս և Վարդանի մօտ (195, 196). Վերջինիս մօտ գեռ ուրիշ գծեր էլ են վրայ գալիս... Հուլաւու խանը հիւանդ է. Վարդանն ինքը Հուլաւու բանակումն է և ականատես է այն ամենին, ինչ որ պատմում է: Խանը շրջապատուած է քրմերով, որոնք տոխն էին կոչւում: «Սրանք պատմում էին, որ Շակմոնիա աստուածուն, որ արդէն 3040 տարի ապրում է և դեռ 10,000 տարի էլ պիտի ապրի միւս՝ Մադրին աստուածն է յաջորդելու: Հուլաւու խանն ամբողջովին անձնատուր էր այդ քրմերին և միայն նրանց խորհրդով էր պատերազմի գնում կամ հեռու մնում նրանից: Տոխնները հաւատացնում էին խանին, որ նա գեռ երկար մնալու է նոյն մարմնի մէջ, բայց երբ նա շատ ծերանայ, այն ժամանակ ուրիշ մարմնի մէջ կը տեղափոխուի» (Վարդան 195, 196²):

Քանի դեռ թաթարները իրանց բարձրասիական անապատներում և տափաստաններում քարացել մնացել էին,

2) Քրմերի մասին մանրամասն պատմում են նաև միւս ճանապարհորդներն ու ժամանակագիրները, օրինակ B. Rubruck-ը (147, 247, 254), Raschid-Eldin-ը (I, 417), բայց ամենից սիրով և մանրամասն պատմում է Վենետիկցի ճանապարհորդ Մարքո-Պոլոն, որը մոնղոլների սովորութիւնների, բարքերի և կրօնական հասկացողութիւնների մասին շատ հետաքրքիր ու զնահատելի տեղեկութիւններ է տալիս, որոնք բոլորն էլ հաստատում են հայ ազգիւրների հաղորդագրութիւնները: Marco-Polo-ից էլ լաւ երևում է և նկատելի է, որ թաթարները կրօնական ասպարիզում զանազան աստիճաններ են անցել: «Բարքերի ու կրօնի տեսակէտից թաթարներն այսօր փչացել են. Չինաստանում ապրում են նրանք որպէս կռապաշտներ և չինացիների պէս են ապրում, իրանց սկզբնական կրօնը թողել են, իսկ արեւելեան թաթարները սարակինոսների կրօնն են ընդունել»—Marco-Polo. I, c. 70. S. 91.

շրջապատուած համարեա նոյնպիսի կուլտուրայի տէր ցեղերով և միայն չինացիները հետ էին շփուում — կիսով չափ բուդդիստական էին և կիսով չափ էլ բնական կրօնին անձնատուր: Բայց յետագայ հոսանքներն, ու նոր շփումները շատ էլ չեն ուշանում:

Թաթարական ցեղերի անհանգիստ, ֆիզիքապէս և մտաւորապէս շարժուն մասսաները տեղից տեղ են թափառում: Իրանց ընդարձակ տափաստաններից միշտ դէպի արևմուտք են քշուում: Կերակրի պակասը, մարգագետինների և արօտատեղերի կարօտը ստիպում է նրանց նորանոր հողեր նուաճել, որպէս զի իրանց հորդանների և խմբերի համար նոր արօտի և բնակութեան տեղեր ստեղծեն: Այսպիսով գալիս են նրանք դէպի արևմուտք, դէպի Իրան և Թուրքեստան, որտեղ տիրող կրօնը Իսլամն էր: Ի հարկէ, այս մասսայական թափառումներից դեռ առաջ թուրքպարսկական առևտրական քարաւանները և վաճառականները մոնղոլների աշխարհն էին գալիս և իրանց կուլտուրայի սաղմերը բերում, հասցնում էին մոնղոլներին: Որովհետև պարզ է, որ վաճառականի հետքերով յաճախ կուլտուրան է ընթանում: Նոր կուլտուրայի թելերը հետզհետէ սկսում են իրար խաչաձև կտրել: Մահմեդականների կրօնը, որ թաթարական հոգուն այնպէս ըմբռնելի էր — սկսում է շուտով գերակշիռ դեր ու նշանակութիւն ստանալ այն բոլոր աղբիւրների շարքում, որոնք ներգործական դեր էին խաղում թաթարների հոգեկան կեանքում: Ինչպէս տեսնում ենք, այս անգամ ևս թաթարական հոգեկան կերպարանափոխութիւնը արգիւնք է նիւթական հորիզոնի նոր ընդլայնումների, նոր էթնոլոգիական շփումների:

Բուդդիստական ու մահմեդական կրօնների այս ազդեցութիւններից զատ միջնադարեան աղբիւրների մէջ շատ խօսք կայ նաև քրիստոնէութեան մասին: Այս աղբիւրների մէջ շատ տեղեր կարծել են տալիս, որ մոնղոլները բարեպաշտ ու շերմեռանդ քրիստոնեաներ են եղել, որ նրանք շատ եկեղեցիներ են շինել, որ քրիստոնեաների նկատմամբ նրանք շատ խնայող և մեղմ են եղել:

Յիրաւի, առանձին քրիստոնեաներ շատ վաղ են եղել մոնղոլների երկրում: Ասորիքի նեստորականները դեռ չորրորդ դարից սկսում են Հեռաւոր Արևելք անցնել: 334 թուին Մերվում մի քրիստոնեայ եպիսկոպոս ենք գտնում: Մի փոքր յետոյ քրիստոնեաները գալիս են մոնղոլների աշխարհը և ամբողջ միջին դարերում շարունակ խօսք կայ միսսիոնարների և այդ կողմերում մշտապէս ապրող քրիստոնեաների մասին:

Բայց մինչդեռ չինական և մահմեդական կրօնները ահագին ժողովրդական մասսաների վրայ էին ազդում և նրանց հոգուն ու մտքին տիրում, առանձին անհատ քրիստոնեաները երբէք այդ ուժը չեն ունեցել — ամենաշատը նրանք Կամբալայում (Պեկին) մի համայնք են հաստատում, որի համար Կղեմես V պապը 1307 թուին մի արքեպիսկոպոս է նշանակում: Կենդրոնական և Վերին Ասիայում քրիստոնէութիւնը երբէք մասսաների կրօն չէ դառել, ուստի և երբէք չէր կարող այն հսկայական ազդեցութիւնը ունենալ, որ ունէին յիշեալ կրօնները: Այնուամենայնիւ նեստորեաներին յաջողում է այս աշխարհի տէրերից դանազան արտօնութիւններ և առանձնաշնորհումներ ստանալ: Նոր կրօնը հետզհետէ յայտնի է դառնում իւր արտաքին ծիսակատարութիւններով ու արարողութիւններով, որ այնքան եռանդով առաջ էին մղում նեստորեանները, որպէս զի քրիստոնէութեան և միւս կրօնների տարբերութիւնը գոնէ արտաքուստ պարզ և յայտնի կացուցանէին⁵⁾:

3) Վերոյիշեալ արքեպիսկոպոսը կոչւում էր Յովհաննէս Դը Մոնտեքոուլինօ: Կղեմես պապը մոնղոլների աշխարհում վեց եպիսկոպոսութիւններ է հիմնում, որոնք բոլորն էլ Cambala-ի արքեպիսկոպոսութեանն էին ենթարկուելու: Արքեպիսկոպոս Յովհաննէսին ուղղած նամակների մէջ ևս կարելի է այդ եպիսկոպոսների անունները կարդալ. Տես Sbaralea-Eubel: Bullarium Fr. V., 37, 38, 39 նամակներ, երես 51. Ժամանակի պապական դիւանական թղթերի մէջ կարդում ենք. «Archiepiscopatus Cambaliensis in domino Tartarorum fuit creatus de novo per dominum Clementem papam V. Habet sex suffraganeos consecratos in curia de mandato domini pape quibus deputandi sunt episcopatus per archiepiscopum supradictum videlicet: Cambaliensem, Caphensem, Albicastroensem, Tariensem, Zaytanensem, Feraensem».

Քրիստոնեաներից նեստորականները չէին լուր Արևելքում: Բայց նրանք հռոմէական կաթողիկոսներից և միւս դաւանութիւններին պատկանող քրիստոնեաներից գերազանցում էին միշտ իրանց թուով և ազդեցութեամբ: XIII դարում Արևելք յաճախող ճանապարհորդներն ու վանականները այս կողմերում նեստորականների են պատահում, որոնք արդէն հին բնակիչներ էին այստեղ: Նրանք արդէն որոշ դիրքի և աստիճանի տէր էին և մեծխաների ու խաների արքունիքներն ազատ մուտք ունէին: Ուստի յաճախ գրգռում էին նրանք կաթողիկ վանականների նախանձը, որոնք հէնց յատկապէս հռոմէական եկեղեցու կողմից ուղարկուած էին մոնղոլներին դարձի բերելու և այժմ տեսնում էին, որ նեստորականներն իրանց ճանապարհը խանդարում են: Այդ է պատճառը, որ այս մուրացիկ վանականների տեղեկութիւնների մէջ նեստորեաններն այնքան էլ նպաստաւոր լոյսի մէջ չեն դուրս գալիս: Անկասկած, այստեղ ևս դաւանական հակամարտութիւնն է, որ աշխատել է ճշմարտութիւնը մթնաղնել: Ռուբրուկի վկայութեան համաձայն «նեստորեանները աւելի վատթար էին քան հեթանոսներն ու մահմեդականները: Նա խօսք չի գտնում նկարագրելու նեստորականների ազգութիւնը, վատու-

M. Tangl: Die päpstlichen Kanzleiordnungen (1200—1500), Seite 30.— Աշխարհի բոլոր կողմերում ցրուած եպիսկոպոսութիւնների և արքեպիսկոպոսութիւնների անվերջ ցուցակը Տանզլի և Օյբելի մօտ (3—32) շատ պարզ կերպով ցոյց է տալիս, թէ ինչ գաղափար ունէին միջնադարեան պապերն այս միաբնական երկիրների վրայ: Որտեղ որեւէ միաբնակար իւր ոտքը մի անգամ դրել էր—այն տեղն արդէն հռոմէական եկեղեցու թիւ էր համարւում և իսկոյն հիմնուած էր մի արքեպիսկոպոսութիւն բազմաթիւ եպիսկոպոսութիւններով: Շատ անգամ նոյն իսկ կասկածելի էր, թէ այդ եպիսկոպոսութիւններից իւրաքանչիւրը դոնէ մի քանի քրիստոնեաներ ունէր իւր թիւում: Հմտ. նաև Historisch-politische Blätter für das kath. Deutschland, Bd. 36—հետեալ յօդուածը. «Die Verdienste der Päpste zu Avignon um die Bekehrung des Morgenlandes», Seite 865—872. Նոյն սխալ հասկացողութիւնը և չափազանց դնահատութիւնը Արևելքում ունեցած կաթողիկ եկեղեցու յաջողութեան մասին:

թիւնը և ընկածութիւնը: Նրա հաղորդագրութեան համաձայն նեստորականները գինեմոլներ, վաշխառուներ և խաբբաներ էին, բազմակնութիւնը թոյլ էր արւում այստեղ. կատարում էին մահմեդական լուսացումները և ուրբաթը տօնում էին... Նրա ասելով, նեստորականները իրանց արատաւոր կենցաղավարութեամբ և անկշտում ազայութեան համար մոնղոլների մէջ նոյնիսկ զգուանք և հակակրօթիւն են ներշնչել դէպի քրիստոնէական հաւատը» (Schmidt, Forschungen, 159): Իւր երկու նամակներից մէկում հետեալ կերպով է գանգատւում Պեկինի արքեպիսկոպոսը. «Nestoriani tantum invaluerunt in partibus istis, quod non permittant quempiam Christianum alterius ritus habere quantumlibet parvum oratorium, nec aliam quam Nestorianam publicare doctrinam» 4).

Նեստորականները եռանդուն պոռպագանդա էին մղում քրիստոնէական կրօնի համար և այդ կողմերում եղած զանազան միասիրտարները այն աստիճան վատահ էին իրանց գործի նկատմամբ, որ ամբողջ Արևմուտքը յոյս էր տածում երկար ժամանակ, որ այս մեծ ժողովուրդը շատ շուտով կըթողնի իւր կրօնը ու կըգայ կաթողիկ եկեղեցու ծոցը: Նեստորեաններն էին, որ ամենուրէք տարածում էին, թէ մոնղոլներից հազարաւորներն արդէն քրիստոնեաներ են, որ իբր թէ մեծխանն ու մեծիշխաններն արդէն մկրտութիւն են ընդունել: Այս տեսակ սխալ և չափազանցած լուրերի դէմ է, որ Rubruck քարոզիչը զայրանում, ծառանում է: Նա մեզ պատմում է, որ նեստորեաններն են, որոնք «viennent de ces contrées, exagèrent tout, faisant grand bruit de rien». Նրանք պնդում էին, թէ Սարգախը, Մանգուն, Կենխանը և ուրիշ շատ խաներ ու մեծամեծներ քրիստոնեայ են իբր թէ. «et cependant la vérité est, qu'ils ne sont pas chrétiens» (76):

Իրանով մօտենում ենք այն հարցին, թէ արդեօք

4) Sku, Gieseler, Kirchengeschichte, II, 2, 659. Schmidt, Forschungen, 159, 160, 161.

քրիստոնէութիւնը մոնղոլներէ մէջ և նրանց աշխարհում տարածուած եղել է և թէ ինչ աստիճանի:

Քրիստոնէութիւնն երբէք ժողովրդական կրօն չէ եղել մոնղոլներէ համար XIII դարում և չէր էլ կարող լինել, որովհետեւ այդ կրօնի տարածման նախադրեալներ չկային այդ շրջանի մոնղոլներէ մէջ: Կասկած չկայ, որ պարզ, հեշտ հասկանալի մահմեդականութիւնը մոնղոլին աւելի դուրեկան ու զրաւիչ պէտք է երևար, քան քրիստոնէական կրօնը: Այդ քրիստոնեայ մեծխաների, խաների, իշխանների և զօրապետների երկար շարքը և դրանց քրիստոնեայ լինելու առասպելը անմիջապէս մեզ համար կը պարզուի, երբ մենք ինկատի առնենք նաև քաղաքական և զիւանագիտական մոմենտները:

Երբ Չինգիզխանն արդէն շրջապատի ժողովուրդներին տիրել ու իւր հայեացքն ուղղել էր դէպի Արևմուտք, անշուշտ շատ պարզ դադափար ունէր այն բոլոր ժողովուրդների մասին, որոնք հեռաւոր և մօտիկ Արևմուտք էին ընկած և որոնց նա դուրս էր գալու նուաճելու: Այդ տեղեկութիւնները նա կարող էր ստացած լինել քարոզիչներից, Եւրոպայի ճանապարհորդներից և յատկապէս արևմտեան վաճառականներից: Լուրեր տանել-բերելու գործը թաթարների մօտ չափազանց զարգացած էր: Մոնղոլներն այս տեղեկութիւնների վրայ հիմնուած միայն կարող էին իրանց արշաւանքները դէպի օտար երկիրներ ապահով և արդիւնաւէտ կերպով առաջ տանել և դժուարին խառնուածքներում անգամ միշտ յաղթող դուրս գալ: Չինգիզխանն ու նրա զենեւալները պէտք է միջոցներ ձեռք առնէին, որպէս զի Արևմուտքն ամբողջապէս իրանց դէմ չհանէին. չմոռանանք, որ խաչակիրների արշաւանքները գեռ չէին վերջացել: Այդ ամենն ինկատի առնելով կարող ենք ասել, որ թաթարների յարաբերական մեղմութիւնն ու պակաս վայրագութիւնը, որ նրանք քրիստոնեաների դիմաց ցոյց էին տալիս, կարելի է և պէտք է մեծ մասամբ զբանով բացատրել:

Ինչպէս ասացինք, այդպէս էր մոնղոլական մեծ նուա-

ճուսները սկզբին. սկիզբը դժուար էր, ուստի թաթարներն ստիպուած էին յաճախ ինկատի առնել և զգուշանալ, որ միւս կրօնների հանդէպ թշնամական զիրք չբռնեն. մանաւանդ նրանք պէտք է զգոյշ լինէին, որ բոլոր կրօններին միաժամանակ չթշնամացնէին իրանց հետ:—Դրա վրայ գալիս է մի ուրիշ մոմենտ ևս: Թաթարները ի բնէ կրօնական ազգ չեն, թաթար ժողովուրդը հէնց սկզբից օժտուած չի եղել կրօնական վառ երեւակայութեամբ և յակումներով: Թաթարներին չի կարելի արաքների հետ համեմատել: Չինգիզխանը մարգարէ չէր և կրօնական տեսակէտից փրկիչ չէր, ինչպէս Մահմեդն էր մահմեդականների համար: Կրօնը թաթարների համար իսկապէս անտարբեր մի բան էր: Այդ է պատճառը, որ մենք թաթարների մէջ գտնում ենք մեծ ու ընդարձակ չափերով հանդուրժողութիւն միւս կրօնների նկատմամբ: Նոյն այդ պատճառով է, որ քրիստոնեաները մոնղոլների աշխարհում եկեղեցիներ են շինում և պահում: Երբ մարդ այս տեսակէտից է նայում խնդրին, բոլորովին պարզ կը հասկանայ մի ճանապարհորդի հաղորդածը. «Մոնղոլների տէրութեան մէջ ամեն տեսակ ազգեր և ազանդներ կան և իւրաքանչիւրին ու բոլորին թոյլ է տրուած իւր ազանդի համեմատ ապրելու: Որովհետեւ մարդիկն այն կարծիքին են—աւելի շուտ այն մոլորութեանը (աւելացնում է նա), որ իւրաքանչիւրն իւր ազանդով կարող է երջանիկ լինել. մենք կարող ենք ազատ և անարգել քարոզել⁵⁾»:

Եթէ մենք առարկաներին իրանց իսկական անունը տալու լինենք, ապա պէտք է ասենք, որ դա ոչ թէ հանդուրժողութիւն է, այլ կատարեալ անտարբերութիւն դէպի միւս կրօնները: Հիմնովին սխալ և մոլորեցնող կը լինէր, եթէ մէկը կարծելու լինէր, թէ քրիստոնէութիւնը մոնղոլների մէջ երբևիցէ տարածուած, սիրուած և առանձնաշնորհուած կրօն է եղել: Մոնղոլ խաները իրանց ուշադրութիւնն աւելի դարձնում էին ոչ թէ քրիստոնէութեան

5) Marignola: Reise 40, 43. Նոյն բանը կարելի է գտնել նաև Monteuille-ի մօտ Reysen—189.

վրայ, այլ քրիստոնեայ և մահմեդական իշխանների հետ միանալու, քաղաքականապէս նրանց շահագործելու մասին էին մտածում նրանք: Հարկաւոր չէ անուշադիր թողնել այն հանգամանքը, որ սկզբնական աղբիւրների մէջ խօսք կայ լոկ մի քանի մեծխանների, խանների և իշխանների մասին, որոնք քրիստոնեաների նկատմամբ բարեացակամ էին, իրանք հակուած կամ նոյն իսկ քրիստոնեայ են եղել իբր թէ, բայց բուն մոնղոլական ժողովրդի մասին խօսք անգամ չկայ: Իսկ խանների հանդուրժողութեան կամ նոյն իսկ հակուածութեան մէջ պէտք է ամենամեծ չափով քաղաքականութեան դերը փնտրել: Այս բանը արժանի է մեծ ուշադրութեան: Քանի գեռ թաթարները զօրեղ հակառակորդների դէմ կռիւ էին մղում—հետևում էին միշտ այդ քաղաքականութեանը: Սկզբում, երբ նրանք բացառապէս մահմեդական տարրերի հետ գործ ունէին, քրիստոնեաների հանդէպ այնպէս թշնամական դիրք չէին բռնել և երբ մահմեդական ժողովուրդներին նուաճեցին ու դէպի քրիստոնեայ Արևմուտք դիմեցին, արդէն նուաճուած մահմեդականների հետ շատ բարեկամական և սիրալիր էին վարուում⁶):

6) Այստեղ յարմար է թուում մեզ միանգամ համախմբել այն բոլոր տեղեկութիւնները, որոնք գալիս են հայ աղբիւրներից մոնղոլական մեծխանների, խանների և իշխանների քրիստոնեայ լինելու մասին: Այդ տեղեկութիւններին ի հաստատութիւն և ի համեմատութիւն կրբերենք միւս աղբիւրի ժամանակակից պատմիչներից համապատասխան կտորներ: Նախ ցիտատենք այն մասին, որ քրիստոնէութիւնը հեռաւոր Արևելքում նեստորեաների միջոցով է տարածուել:—Ասորի Ռաբան-Աթանը (Հայր-ուսուցիչ) թաթարների մէջ մեծ քարոզիչ էր (Կիր. 150). Հուլաու խանի կին Դոխու-Խաթունը հետևում էր քրիստոնէական հաւատին, միայն նեստորական դաւանութեան (Վարդան 183). Հիւսիսային թաթարների իշխանի որդի Սարգաթը քրիստոնեայ էր և ասորիներից մկրտուել էր (Կիր. 207). Հուլաու խանի որդի Ապաղան ամուսնանում է մի յոյն իշխանուհու հետ, որը Արևելք է գալիս անադիւն շքախմբով, որի մէջ շատ ասորիներ կային, նաև ասորիների պատրիարքը (Կիր. 234). Բաղդադի պաշարման ժամանակ Դոխու-Խաթունը

Քրիստոնէութեան և մահմեդականութեան նկատմամբ թաթարներն իսկապէս ընտրութեան կարիք չունէին: Ինչպէս արդէն ակնարկուեցաւ, թաթարներն, սկզբից և եթ,

հրամայում է քաղաքում եղած նեստորականներին խնայել (223, Կիր.): Այս հարցի նկատմամբ ամենից մանրամասն և ամենից պարզ վկայութիւն է տալիս Rubruck քարոզիչը, որը մոնղոլների աշխարհում իւրաքանչիւր քաղաքի մէջ նեստորականներ է տեսել, թէ մեծխանների և իշխանների արքունիքներում, և թէ մասնաւոր մարդկանց մօտ (65, 70, 79, 128, 170). Մեծխան Մանգուս իւր արքունիքում նեստորական խորհրդականներ ունէր (Օրբելեան 300, 355, 356). Վերջապէս P. Carpini-ն գրում է. «Isti homines sunt christiani de secia nestorianorum (Historia Mongolarum)—254). Քրիստոնէական հաւատին հակուած էր նաև Հուլաուին: Հայկական բոլոր աղբիւրները նրա մասին մեծ գովասանքով են խօսում որպէս քրիստոնէի. նա հրամայում է նոյն իսկ շարժական եկեղեցիներ ունենալ իւր վրանում, որպէս զի իւրաքանչիւր ուղած անգամը կարողանայ ժամասացութիւն լսել: Հուլաուին մի լաւ, աստուածավախ և իրաւարար իշխան էր. քրիստոնեաներին նա յատկապէս սիրում էր և բարեհաճ էր (Օրբելեան 295, 307, Վարդան 183, 193, 194, Կիրակոս 150, 223, 224, 233, Մաղաքիա 35). Նրա կինն էլ՝ Դոխու Խաթունը (Տոխու Խ.) քրիստոնեայ էր (Մաղ. 30, 31, Վարդան 183, Կիրակոս 223. Վրացի պատմիչը նրան դարձնում է նոյն իսկ «une orthodoxe»—Brosset 562). Reschid-Eldin-ն ևս Հուլաուին և նրա կնոջը յիշում է որպէս քրիստոնեաներին և քրիստոնէութեանը շատ հակուած մարդկանց: «Dokous Khathoun s'attacha constamment à protéger les Chrétiens, qui, durant toute sa vie, furent dans une situation florissante. Hula-gou, pour faire plaisir à cette princesse, comblait les chrétiens de ses bienfaits et des témoignages de sa consideration; c'était au point que dans toute l'étendue de l'empire on élevait journellement de nouvelles églises et qu'à la port de l'ordou de Dokouz—Khathoun, une chapelle était constamment établie et qu'on y sonnait les cloches» (Raschid-Eldin, Histoire d. Mongols I 95): Հուլաուի որդի Ապաղա խանն էլ քրիստոնեաներին շատ բարեհաճ է (Օրբելեան 307, Վարդան 198, Կիրակոս 234). Աղբիւրները Մանգու մեծխանի մասին ևս մեծ գովասանքով են խօսում: Օրբելեանը պատմում է (299), որ Մանգուի արքունիքում ամեն օր քրիստոնէական ժամասացութիւն է եղել: Նա քրիստոնեայ խորհրդականներ էլ է ունեցել (Օրբ. 300, 301, Կիրակոս 213): Քրիստոնեայ էին նոյնպէս Հիւսիսում Բաթուն

կարելի էր մտածել, աւելի շուտ մահմեդական կրօնին կարող էին հետևել, քան քրիստոնէութեանը բաժին ընկնել: Շուտով Ասիայի ամբողջ Արեւմուտքը նուաճուած և խիստ կառավարական սխտեմի է ենթարկուած. և զրա հետ միասին շուտով մահմեդական ազդեցութիւնները գերիշխող տեղ են գրաւում թաթարների մէջ: Օրբելեանը նկատում է. «Թաթարները թողել են իրանց սկզբնական սովորութիւնները և ենթարկուել են մահմեդական կրօնին, ամեն տեսակ գարշիկի և մեղաւոր բաները սովորում են և փշացած կեանք են վարում» (294):

Մահմեդական ազդեցութիւնները հաւանօրէն գալիս էին Պարսկաստանից և Միջագետքից և պարարտ հող են դառնում ամենից շուտ Կիպչակի պետութեան մէջ, որտեղ իշխում էին Բաթուի և Սարգաթի յաջորդները, որոնք Պարսկաստանում Իսլամի աւանդութիւններով էին սնուել, մեծացել: Արդէն XIII-րդ դարի վերջերից սկսած շատ քիչ է լսում քրիստոնէայ թաթար խաների և իշխանների մասին, զրա հակառակը մահմեդական թաթար իշխանաւորները մասին — շատ յաճախ⁷⁾: Կէս դար յետոյ Իսլամը թաթարների նուաճած երկիրներում տիրապետող կրօն է արդէն:

XIV դարի առաջին քառորդից մի յիշատակազիր մեզ պատմում է, որ թաթարները խմբերով մահմեդական էին դառնում և քրիստոնէաներին սարսափելի տանջում էին⁸⁾:

(Վար. 183, Կիր. 207), նրա որդի Սարգաթը (Կիր. 207, 218, Մար. 21, Մք. Այրիվ. 82), Արդուն իշխանը (Կիր. 175), Չարմաղանի կնոջ երկու եղբայրները — Գորգոսը և Սադեխաղան (Կիր. 160):

7) Վարդան 199, Օրբելեան 344, 345, 46, 47. Կիրակոս 229. Բայց յատկապէս Հեթում Պատմիչը 56—60. Սաների մէջ առաջին իսկական մահմեդականը Ղաղան-խանն էր Իրանում (Raschid-Eldin, p II, Aboul-Ghâzi II, 174). Նա քրիստոնէութեանը մոլեռանդ թշնամի էր. «Il employa tous ses efforts pour la propager et l'infidélité rentra dans les ténèbres. Il fit brûler tous les temples d'idoles et ramena par ces mesures à la religion de l'islam tous les mongols qui se trouvaient dans l'Iran». Aboul-Ghâzi II 174.

8) Մանանդեան և Աճառեան. Հայոց նոր վկաները 121—122.

Նախքան այս գլուխը փակելը բերենք Մունեջիմ-Բաշի թուրք պատմաբանի հետևեալ նկատողութիւնները, որոնք միաժամանակ հակիրճ ու ճշմարիտ ամփոփումն են այն ամենի, ինչ որ մենք այս խնդրի նկատմամբ ասացինք: «Թաթարներից շատերը ոչ մի այլ աղանդի չեն հետևում, բացի իրանց տգիտութիւնից: Մի քանիսն են յետոյ մոգերի ծիսակատարութիւններին են թեքւում, միւսները ընդունում են քրիստոնէութիւն: Դրանից յետոյ նոցա իշխան Ղաղանը նրանց մահմեդական է դարձնում և նրա հրամանով թաթարների մեծամասնութիւնը անապատի մէջ մահմեդականութիւն է ընդունում: Մի քանիսն են միայն քրիստոնէայ մնում. Բայց հիւսիս-արեւելեան տափաստաններում ապրող թաթարները, որոնք Կալմիկ էին կոչւում, շարունակում են մնալ իրանց տգիտութեան մէջ և չեն յարւում որ և է աղանդի: Արժանահաւատ մարդիկ պատմում են, որ նրանք երկնային ուժեր և մարմիններ են պաշտում, այդ դէպքում նրանք ուրեմն սաբայացիներ կըլինէին: Չինական թաթարները մինչև այսօր մնացել են մոգական կրօնի և կոտորաշտութեան մէջ⁹⁾»:

3.

Մոնղոլների ռազմագիտութիւնն ու սակսիկան.

Երբ մոնղոլները Արեւմուտք էին գալիս, շատ ճակատամարտերի և կռիւների մէջ արդէն եփուել, փորձուել էին: Նոքա կարողացել էին շատ ամուր քաղաքներ և ամրոցներ առնել, աւերել: Մեծ ու վիթխարի տէրութիւնների վրայով էին գալիս նրանք, ասպատակելով ու աւերելով ամեն բան: Որպէս փորձուած, ռազմական արուես-

Այս շատ կարեւոր գործն ընդհանրապէս մի կարող և վճռակի ապացոյց է այն բանի համար, որ մոնղոլները արդէն XIII դարից բայց յատկապէս XIV դարից սկսած մոլեռանդ ու խելագար մահմեդականներ են:

9) Hammer-Purgstall: Geschichte der Uchane I-II 40-41.

տին տեղեակ մարդիկ էին մտնում նրանք Հայաստան, Վրաստան և Փոքր Ասիա:

Թաթարական զօրքն իսկապէս վերցրած հորդա էր. որովհետեւ թաթարներն իրանց հետ վերցնում էին ինչ որ ունէին, տուէն, տեղ, ստացուածք, իրանց պատերազմական գերիներին, որոնց տան ծառայի գեր էին տալիս, իրանց կանանցն ու որդոցը, իրանց տնային անասուններին—ուղտ, եղ, ջորի—մի խօսքով իրանց ամբողջ հարստութիւնը (Նիրակոս 122): Դաշաւում ու ճանապարհին նրանք վրանների տակ էին ապրում: Նրանց կռքերն ու սայլերը կրողները ձիերն ու եզներն էին (Նիրակոս 205, 206): Այդ հանգամանքն իսկապէս կարող էր մոնղոլների պատերազմական գործողութիւնները դանդաղացնել. բայց հակառակ դրան մենք տեսնում ենք, որ թաթարները զարմանալի արագ ու յանկարծակի, անսպասելի կերպով յարձակուել գիտեն և շնորհիւ իրանց ամուր ու հաստատուն վճռականութեան՝ ամենուրեք յաջողութեան դափնիներ են քաղում:

Թէպէտեւ նրանք հորդայի կեանք էին վարում, բայց նրանց հորդաները ռազմագիտական կազմ ունէին: Հեթում Պատմիչի մի տեղեկութիւնը կայ մէջ տեղը, որ այլ կողմերից էլ հաստատուում ու վկայւում է: Ըստ այդ տեղեկութեան, Չինգիզխանը կարգադրել է, որ իւրաքանչիւր տաս թաթարի վրայ մի տասնապետ լինի, իւրաքանչիւր հարիւր թաթարի վրայ մի հարիւրապետ, իւրաքանչիւր հազարի—մի հազարապետ և իւրաքանչիւր տասնհազարի վրայ—մի բիւրապետ կամ գլխաւոր վերակացու: Ուրեմն զօրամասի գլխաւոր չափ տասնհազարն է—բիւրը, իսկ փոքրագոյն միութիւնը՝ տասն էր: Ահա այս եղանակով առաջին մեծխանը իւր ժողովրդին պատերազմական խիստ կազմակերպութիւն է տալիս, որը ոչ պակաս նպաստել է մոնղոլների պատերազմական յաջողութիւններին¹⁾: Թա-

1) Նոյն բանը գտնում ենք նաև Plano-Carpini-ի մօտ, որն ասում է «Chingis-can ordinavit ut decem hominibus praeponeretur unus, et ille secundum nos appellatur decanus; decem autem decanis

թարական հորդաներն ու ցեղերը խաղաղ ժամանակ ևս պատերազմական այգալիսի կազմակերպութիւն ունէին: Նրանց համար գերագոյն առաքինութիւնը կրտսերի հնազանգութիւնն էր զէպի մեծը: Որդին պարտական էր իւր հօրից ակնածել և նրան յարգել ու հնազանգուել. կրտսեր եղբայրը՝ աւագ եղբօրը, կինը՝ մարդուն: Իւրաքանչիւր յաջողութեան առաջին պայմանը անպայման յաջողութիւնն էր համարւում: Նրանց զայն այնքան արագ էր ու այնքան յանկարծակի, որ տեղական ժողովուրդներն ու նրանց իշխանները երբէք ժամանակ չունեցան քիչ թէ շատ կարգին դիմադրութիւն կազմակերպելու. նրանց հարուածները շանթեր էին: «Սոսկալի մրրկի նման եկան նրանք մեր աշխարհը» — ասում է Օրբելեանը: Անխոնջ էին նրանք զործելու մէջ և ճարպիկ ու արագ ինչպէս եղեիկը (Նիրակոս 127):

Մարդիկ գլուխները կորցրած այս ահարկու թշնամիների երևալովը, խմբերով թողնում էին իրանց բնակավայրերը և փախչում էին երկրի ամուր բերդերն ու ամրոցները:

praeponeretur unus qui centenarius nominatur; decem vero centenariis praeponeretur unus qui millenarius appellatur; decem vero millenariis praeponeretur unus, et ille numerus vocatur tenebrae epud eos»—287. Plano-C. մոնղոլական թուման խօսքը չի հասկացել. կայ «դուման» և «թուման» բառեր. թուման նշանակում է 10,000, իսկ երկրորդաբար նշանակում է նաև շատ, անազին քանակութեամբ. իսկ դուման նշանակում է խաւար, teneber. Ակնյայտնի է, որ Pl. Carpini-ն երկու բառերի նշանակութիւնները իրար է խառնել: Ռուսերէն ТЕНА խօսքը այդ երկու նշանութիւնն էլ իւր մէջ ունի. Տես M. d'Avezac 182. Պատերազմական այս բաժանման մասին բոլորովին միատեսակ տեղեկութիւններ են տալիս նաև Aboul-Ghâzi 144, և Marco-Polo 70 c. 89—90. Բարտոլդը իւր արժէքաւոր գրքում ասում է. «Զօրքի մէջ գլխաւորներն էին—ինչպէս և իւրաքանչիւր թափառական մի ժողովրդի մէջ—տասնապետները, հարիւրապետները, հազարապետները և բիւրապետները» (415). Այգալիսի բաժանումն ուրեմն իրանց թաթարների գիւտը չէ. նա չինական ծագում էլ չունի, որովհետեւ չինացիք այդ մասին խօսում են որպէս մի բանի մասին, որ իրանց շատ անձանթ է. Տես Th. Schlegel, Russland, Polen u Livland I 153.

Մոնղոլները շատ յաջող նետաձիգներ էին. փոքր հասակից արդէն նրանք զբաղւում էին այդ գործով ու իրանց փորձառութեամբ ու ճարպիկութեամբ նուաճուած ազգերի գերագոյն գովեստին էին արժանացել: Ժամանակի հայ պատմիչները թաթարներին նոյն իսկ յատուկ նկատողանուն են տալիս և յաճախ բաւականանում են այդ անունով, երբ թաթարների մասին են խօսում: Մաղաքեա արեգան իւր գործը նոյն իսկ հետեւեալ կերպով է անուանում. «Պատմութիւն ազգին նետողաց»²⁾:

Թաթարներն սկզբում ազատ դաշտերին և գիւղերին են աէր դառնում: Առանց գոյնարութեան ու անարգել աւերում ու կողոպտում են երկիրը, յափշտակում են ամբողջ հարստութիւնը, կենդանիները, շարժական ամբողջ կարողութիւնը. բնակիչներին գերի են վերցնում և իրանց ծառաներ շինում: Այդ աշխատանքն ի հարկէ գոյնար չէր մոնղոլների համար, պատերազմական այնքան էլ մեծ արուեստի կարիք չունէին նրանք մի անպաշտպան ու անզէն ժողովրդի դիմաց: Երկրի տէրերը իրանց ռազմիկ մարդկանցով ու ստացուածքով քաշուել էին, ամուր վայրերում ապաստան գտել: Երկրի ամբողջ վիճակն այսպէս պէտք է պատկերացնել. մի շարք բերդեր ու հաստատուն, ապահով ամրոցներ, որոնց պատերի յետևում երկրի իշխաններն ու հարուստները, բնակչութեան մի մասն էլ—ապաստան գտած. մնացած մասը բաց էր, անզէն

2) Վրացի տարիգիրն ևս մոնղոլների ճարպիկ ու փորձուած նետաձիգ լինելու մասին տարբեր կարծիք չունի. Brosset 486.—Նոյնը և Plano-Carpini. Սա գրում է. «Viri nihil operantur omnino exceptis sagittis; et etiam aliquantulum de gregibus habent curam; sed venantur, et se exercent ad sagittandum: omnes enim a parvo usque ad magnum sagittarii sunt boni; et statim pueri eorum, quando sunt duorum vel trium annorum, incipiunt equitare, et equos regunt et currunt in eis; et dantur eis arcus secundum suam aetatem, et instruuntur ad sagittandum: agiles enim sunt valde necnon et audaces» 247.—Marco-Polo-ն ևս թաթարներին գովում է որպէս ճարպիկ աղեղնաւորների և անուանում է նրանց զէնքերը—աղեղ, նետ, թուր և լախտ. I cap. 70. 83.

ու անպաշտպան—ահեղ թշնամու կողոպուտների ու սրածուծեան աւար:

Ազատ դաշտերի ու տափաստանների զբաւումից յետոյ թաթարներն անցնում են բերդերի նուաճմանը: Ահա այստեղ է, որ նրանք հանգէս են բերում մի նուրբ և փորձուած արուեստ: Հաստ ու ամուր պարիսպները նրանց նետերի առաջ կանգնած էին անմխաս ու անվախ, ինչքան էլ այդ նետերը ուրիշ տեղ նպատակից չվրիպէին: Ուստի թաթարներն ստիպուած էին բերդերի ամուր պատերի դէմ պաշարողական մեքենաներով գործել—իսկ այդտեսակ մեքենաներ նրանք շատ ունէին: Կատապուլտ կոչուած այդ մեքենաները նրանք բարձրացնում էին մինչև պարիսպները և այնտեղից իրանց նետերի տարափը թափում էին պաշարուածների, զինւորների վրայ այնպիսի արագութեամբ և անվրիպութեամբ, որ ահագին աւերած էին գործում նրանց շարքերում³⁾: Եւ եթէ այդ մեքենաներն էլ երբեմն չէին հասնում իրանց նպատակին, այն ժամանակ թաթարները փորում էին պարիսպների տակը և այդ եղանակով փուլ էին բերում վիթխարի պարիսպները և բացուած ծակերով ներս էին խուժում դէպի ամրոցը: Բերդերից շատերը շրջապատուած էին արուեստական փոսերով: Թաթարները այս արգելքների առաջն էլ գիտէին ստնել. նրանք այդ փոսերը լցնում էին զանազան բաներով, փայտով, քարով, հողով և այդպէս մօտենում պարիսպներին:

Ինչպէս վերևում արդէն ակնարկեցինք, երկիրը բազ-

3) Կիրակոս 127, 24, 25, 36, 139. Մաղաքիա 15. Հեթում 47. Quatremère 134, 35, 36. Plano-Carpini-ն գրում է. Munitiones in hunc modum expugnant. Si talis est munitio ipsam circundant, imo aliquando ita sepiunt ut nullus possit ingredi vel exire et pugnant fortissime machinis et sagittis et nec die nec nocte cessant a praelio ut illi, qui sunt in munitionibus non qui escant.—Եւ մի փոքր յետոյ. Haec arma debent habere: arcus bonos et fortes et balistas quas multum timent»—Plano-Carpini 325. Պլանո-Կարպինիի—տուած տեղեկութիւններն այս մասում ևս շատ մանրամասն և ճշմարտագրաւորում են:

մաթիւ լեռնաշղթաներով և խոր ձորերով բնական գաւառ-
ների էր բաժանուում, այնպէս որ միացեալ ուժերով մի
ընդհանուր միահամուռ պատերազմական գործողութիւն
կատարելն անհնարին էր համարեայ: Բայց թաթարներն
իրանց շրջահայեցողութեամբ այս բնական դժուարութեան
առաջն էլ են առնում: Նրանք հետեւում են երկրի բնական
դիրքին և ըստ այնմ յարմարեցնում իրանց կարգադրու-
թիւնները: Իրանց ուժերը նրանք բաժանում էին գանա-
զան զօրամասերի և իւրաքանչիւր զօրամաս մի փորձուած
զօրապետի ղեկավարութեամբ դուրս էր գալիս իրան բաժին
ընկած երկրի մէջ եղած բերդերն ու ամրոցներն առնե-
լու: Բաժանման դէպքում զլիսաւոր հիմքը վիճակ ձգելն
էր: Վճիռներ կայացնելու այս ձևը — ամեն բան պատահ-
մունքին թողնել — թաթարների մօտ շատ սովորական էր:
Թերևս հէնց այս երևոյթին պիտի վերագրել մասամբ նաև
այն, որ թաթարների — գոնէ նրանց յայտնուելու առաջին
ժամանակը — անմիաբանութիւնն ու երկպառակութիւնը
շատ քիչ է նկատուում:

Քաղաքների ու բերդերի պաշարման և առման ժա-
մանակ թաթարները գործ էին դնում մի տակտիկա, որ
համարեա ամեն նման դէպքում հանդէս է գալիս: Պաշա-
րումից առաջ նրանք միշտ իրանց ղեկավարներն են զրկում
այդ քաղաքն ու պահանջում հնազանդութիւն, զինաթա-
փութիւն և լիակատար հպատակութիւն: Խոստանում են
խնայել և մեղմ վարուել քաղաքացոց հետ, նրանց կեանքը
և շատ անգամ նաև ստացուածքը պահել անփնտռ: Այս
տակտիկայի հիմքն այն էր, որ թաթարները այդ երկիր-
ները գալիս էին ոչ իբրև լոկ կողոպտիչներ, այլ տևական
նուաճողներ և տէրութիւն հիմնողներ: Այս նոր երկիրների
մէջ նրանք բնական, հաւատարիմ և վստահելի օգնական-
ների, յենարանների կարիք ունէին, որպէս զի դրանց մի-
ջոցով երկրին աւելի հեշտ և աւելի շուտ տէր լինել կա-
րողանային: Այս նկատմամբ շատ նշանակալից են մի թա-
թար գեներալի հետեւեալ խօսքերը. «Մեծխանից մենք
հրաման չունենք սպանելու նրանց, որոնք մեզ կամովին

հնազանդում են»⁴⁾: Սա նրանց զլիսաւոր սկզբունքն էր
նուաճողական գործողութիւնների ժամանակ: Էականը
հնազանդութիւնն էր, անպայման հպատակութիւնը և կա-
մովին հարկատուութիւնը. միայն այն ժամանակ կարելի
էր յուսալ, որ թաթարները նրանց կեանքին փնտա չեն
տայ⁵⁾:

Օտար աշխարհներում թաթարները գործում էին շատ
յաճախ տեղային պատերազմիկ ուժերի օգնութեամբ. քիչ
չի պատահում, որ օտար իշխանները թաթար զնդերի զօ-
րապետներ էին կարգում: Թաթարներն ամենուրեք աւա-
տական պետութիւններ էին հիմնում և իրանց ու օտար
տէրերի մէջ աւատական յարաբերութիւն էին ստեղծում:
Նուաճուած իշխաններն ու մեծամեծներն ամենից առաջ
պարտական էին իրանց մարդկանցով պատերազմական ծա-
ռայութիւն մատուցանել իրանց նոր տէրերին: Թաթար-

4) Կիրակոս 180. Չինգիզխանը Չարմազանին և նրա ըն-
կերներին հետեւալ հրամանն է տալիս. «Partout, ou ils iraient
d'épargner et de traiter doucement quiconque demanderait grace, mais
d'exterminer tous leurs ennemis» — Brosset 511.

5) Այդ պատճառով է, որ թաթարները մեղմ ու խնայող են
Սերաստիայի (Կիր. 155. Մաղ. 16) Տիւրիկէի (Կիր. 155), Դա-
մասկոսի (Կիր. 149) նկատմամբ. նոյն այդ պատճառով Փոքր
Հայոց Հիթում թաղաւորի տէրութիւնն անփնտռ ու անխախտ
է մնում: Բայց որտեղ թաթարներին կամաւոր հնազանդութիւն
չեն յայտնում, թաթարները նրանց նկատմամբ վայրագօրէն և
անխնայ են վարում. հմտ. հետեւեալ քաղաքները — Անի (Կիրա-
կոս 139), Բաղդատ (Կիրակոս 222) կարին (Մաղ. 13, Կիր. 152)
Կեսարիա, Երզնկա (Մաղ. 14) Մարտիրոսաց քաղաք (Կիր. 125-26)
Հալեպ (Կիր. 149) և քչին: Մահմեդական աղբիւրներն ևս հաս-
տատում են մոնղոլների այս տակտիկը: Մանգոլխանը իւր Հու-
լաու եղբօրն ասում է, երբ սա ճանապարհ է ընկնում դէպի
Պարսկաստան ու Միջագետք... Si le khalife de Bagdad s'empresse
de se rendre hommage et de se soumettre, garte-toi de le molester en
rien, mais s'il montre de l'orgueil, et si ses paroles comme ses sen-
timents paraissent peu sincères, traite-le comme tu auras traité les
autres ennemis». Raschid-Eldin, I, 143. Նոյն մասին համեմատել
նաև Aboul-Ghâzi-ի մօտ II, 125.

✓ ների համար այդ շատ կարևոր էր, որովհետև նրանք օտար երկրների տեղական հանգամանքներն ամեն անգամ չէին իմանում հարկաւոր մանրամասնութեամբ: Այդ իշխաններն այժմ պարտական էին թաթարական բանակը առաջնորդել, մի բերդից միւսը տանել և ամրոցների առման և աւերման ժամանակ եռանդուն աջակցութիւն ցոյց տալ: Այդպէս էլ Հայաստանի, Վրաստանի և Աղուանքի նուաճման ժամանակ տեղական իշխանները թաթարներին շատ են օգնել: Դրանով կարելի է բացատրել թաթար զօրապետների չափազանց մեղմութիւնը մի քանի հայ և վրացի մեծամեծների նկատմամբ: Այդպիսի ուժերից օգտուել է մեծ մասամբ Բաշու զօրապետը: Նախ քան Փոքր-Ասիա շարժուելը նա հրամայում է հայ և վրացի իշխաններին հաւաքուել ու միասին Արևմուտք անցնել: «Նա յաջողում է շատ ճակատամարտեր. բայց նրա յաղթութեան պատճառները հայ և վրացի իշխաններն էին, որոնք ճակատամարտի առաջին շարքերումն էին կանգնած և միշտ առաջիններն էին, որոնք թշնամու վրայ էին յարձակում. նրանցից յետոյ էր միայն, որ գալիս էին թաթարները իրանց նետ-աղեղներով» (Մաղաթ. 14): Այս գիծն ևս յատուկ է մոնղոլների պատերազմական տակտիկային: Օտար իշխաններն ամենքը պարտաւոր էին միշտ առաջուց դնալ ու գտնուել էին շարունակ երկու կրակի մէջ—մի կողմից թաթարների, միւս կողմից թշնամու: Այդպիսով անկարելի էր նրանց համար այլևս փախուստ, դաւաճանութիւն կամ անհաւատարմութիւն: Նրանք պէտք է քաջաբար կռուէին—այն ժամանակ կարժանանային մեծ պատիւների և գովասանքի—և կամ երկու թշնամիների մէջ բռնուած՝ ոչնչանային:

Հետևում Պատմիչը մի շատ արժէքաւոր բնութագիր է տալիս թաթարների ամբողջ ռազմագիտական արուեստին և տակտիկային վերաբերեալ: «Որպէս հեծեալներ—նրանք գերազանց են, ինչպէս և շատ լաւ աղեղնաւորներ են, բայց իրանց կարճ ազդրների պատճառով վատ ու թույլ հետևակներ են: Պատերազմի խառնուածքում նրանք այն-

քան վարժ են, որ նրանցից իւրաքանչիւրն առանց նոյն իսկ առաջնորդի իր անելիքը շատ լաւ գիտի և յաջողութեամբ զլուխ է բերում: Ամուր վայրերի և ամրոցների պաշարման ժամանակ նրանք չափազանց խելօք, զգոյշ և սրամիտ են: Գլխաւորապէս նրանք աշխատում են թըշնամուն յանկարծակիի բերել և շրջապատել: Նրանց համար փախուստը ամօթ է, եթէ դա օգտակար է: Նրանք կարողանում են կռիւը այնպէս նախապատրաստել, որ դա երբ որ նրանք կամենան, միայն այն ժամանակ է սկսւում և ոչ թէ այն ժամանակ, երբ թշնամին է կամենում: Եթէ նրանք ճակատամարտից խուսափել են ուզում, հակառակորդը երբէք չի կարողանում նրանց ստիպել կռիւն ընդունելու: Նրանց հետ կռուի բռնուելը շատ վտանգաւոր է, որովհետև նոյնիսկ ամենափոքր ճակատամարտերի մէջ նրանք շատ աւելի մարդ են սպանում և վիրաւորում, քան թէ ուրիշ ազգեր աւելի մեծ կռիւների մէջ: Դա անշուշտ ճարպիկ նետաձիգ լինելու արդիւնքն է. որովհետև նրանց նետերը թափանցում են համարեա զրահների բոլոր տեսակները. իսկ իրանք և իրանց ձիերը կրում են միայն կաշեայ զրահներ: Կռիւների ժամանակ, հէնց որ յաղթուելու եղանկազմ ու կարգով յետ են քաշւում ու նահանջում. բայց նրանց հալածելը չափազանց վտանգաւոր է, որովհետև նրանք փախչելիս էլ յետ դառնալով շատ լաւ նետել գիտեն և այդ եղանակով վիրաւորում են թշնամուն: Բայց հէնց որ տեսնում են, որ հալածող թշնամու շարքերը խախտւում են, իսկոյն նորից յետ են դառնում արագութեամբ և շատ անգամ այդ կերպ յաղթութիւն տանում: Թաթարական զօրամասերը կամ գնդերը այնքան էլ մեծ չեն երևում արտաքուստ, որովհետև պինդ և խիտ շարքերով են առաջ շարժւում, այնպէս որ թաթարական 1000 մարդանոց մի գունդ հազիւ թէ այնքան մեծ թուայ, որքան 500-անոց մի օտար գունդ»⁶⁾:

6) *Տես նաև* Th. Schieman, Russland, Polen u. Livland 153
—154.

Բերենք նաև մի այլ ժամանակակիցի—այս անգամ Արևմուտքի հեղինակի ընդհանուր նկարագրութիւնից մի քանի համապատասխան կտորներ: XIII-րդ դարի պատմիչ Թոմաս Սպալատոցին գրում է իւր հայրենի քաղաքի պատմութիւնը մինչև 1266: Այդ պատմութեան մէջ նա մի ընդհանուր բնութագիր է տալիս մոնղոլների ռազմագիտական արուեստի և պատերազմական գործի մասին: Այդ բնութագրից մենք վերցնում ենք հետևեալ տողերը, որոնք միևնույն ժամանակ արժէքաւոր լրացումն ու հաստատումն են մեր աղբիւրների համար: Նա գրում է. «Նրանց զրահները պատրաստուած են անասունների կաշիներից, որոնք մի քանի շերտով իրար վրայ են դարսւում, այնպէս որ այդ զրահը բոլորովին անթափանց է դառնում: Սաղաւարդները շինում են երկաթից և կաշուից. սրերը կեռ են... Դրօշակները փոքր են, սպիտակ ու սև գոյներով, ծայրին մի փունջ բրդով: Նրանց ձիերը մեծ չեն բայց դիմացկուն են և տանող. ժայռերի, քարերի ու քարափների վրայով մագլցում են նրանք առանց պայտերի—այծերի պէս... Թաղիքից ու կաշուից են պատրաստում իրանց վրանները. նրանց ձիերը այնպէս են վարժուած, որ մարդը ուր էլ որ դառնայ, ձին շան նման հետևում է նրան: Մարդիկ ինչքան էլ որ բազմաթիւ լինեն—ազմուկ չեն հանում, այլ լուռ ու մունջ առաջ են շարժւում և լուռ ու մունջ էլ կռւում են... Թաթարների ահարկու նետերը անվրէպ թափ են անցնում ու անկասկած մահ հասցնում պատահողին. չկայ ոչ մի զրահ, ոչ մի վահան կամ ընդհանրապէս զրահաւորութիւն, որ չծակուի թաթարի ձեռքից ուղարկուած նետի թափից... Աշխարհիս երեսին չկայ ոչ մի ժողովուրդ, որ հասկանայ թշնամուն այդպէս հարուածել, մանաւանդ բաց ճակատամարտի մէջ—լինի դա յանդուգն քաջութեամբ թէ խորամանկ խելօքութեամբ»⁷⁾:

7) Strakosch-Grossmann: Der Einfall der Mongolen, Seite 28 — 29. H. Delbrück-ը իւր բազմահատոր գործի մէջ «Geschichte der Kriegskunst»—անտես է առնում մոնղոլական ամբողջ շրջանը. որովհետև իբր թէ «Չինգիզխանի և Թիմուրի գլուխ բերածները

Կարգի վերահաստատմն և հարկահանութիւն.

Հայկական աղբիւրների մէջ տեղեր կան, ուր որոշ չափով կարելի տեսնել, որ թաթարները խաղաղասիրական հակումներ կամ ցանկութիւններ էլ են ունեցել: Ամենից լաւ կարելի է այդ տրամադրութիւնը Մաղաքիայի մօտ տեսնել: Համաձայն նրա պատմութեան—մոնղոլները նուաճողական գործողութիւնների ժամանակ և դրանից անմիջապէս յետոյ իրանց նուաճած երկիրների մասին դանազան կարծիքների են եղել, յատկապէս այդ երկիրների կառավարութեան և տիրապետութեան ձևի նկատմամբ: Շատ լաւ հասկանալի էլ է այդ: Առաջին վայրագ ու արինախում թաթարները մի գաղափար ունէին միայն—աւեր ու կողոպուտ, խաղաղ բնակչութեան անխնայ կոտորում ու ստացուածքի իւրացում: Այդպէս էին եղել նրանք ամբողջ ճանապարհին մինչև Կովկաս—այդպէս էին սկզբում և այստեղ:

Բայց շատ շուտով մոնղոլ գեներալների մէջ այդ մասին կարծիքները բաժանւում են: Չարմաղանը տիրապետական առողջ և ապահով բնագոյից մղուած հակառակորդ է դուրս գալիս այն բարբարոս արիւնարբու հակումներին: Նա խելօք և հեռատես մարդ էր և շատ լաւ տեսնում էր, որ նորահաստատ մոնղոլական պետութեան գանձաբանը միշտ դատարկ կը մնայ, եթէ երկրի նոր տէրերը խաղաղութիւն չբերեն իրանց հետ: «Երկիրն առանց այն

վերջի վերջոյ ոչ այլ ինչ են, եթէ ոչ նոմադներին յատուկ»—III, 487. Դրա հետ միաժամանակ Դելբրուքը շատ բան է վերագրում Օսմանցիներին որպէս նրանց բոլորովին յատուկ, մինչդեռ այդ շատ բանը դեռ մոնղոլների մէջ տեղական ու բնական էր ու նրանց մէջ բազմիցս կիրառութիւն գտած: Չարմաղալի էլ չէ, թուրք-թաթարական զնդերը բոլորն էլ Բարձր ու Խորին Ասիայից էին գալիս և ներքուստ բոլորն էլ ազգակից էին:

ու դուրեկան դարձնէին: Բայց ամենից շատ նոքա պարտաւոր էին պետութեան գանձարանը լցնել: Այս նպատակի համար երկիրը ենթարկուած են հարկային խիստ սխառմի:

Վարակորումից Մանգու մեծխանը և Վոլգայի ափերից Բաթու մեծ գօրապետը 1254—55 թուերին մի խելօք և ճարպիկ հարկահան են ուղարկում դէպի Հայաստան, Վրաստան և Աղուանք — ժողովուրդը համարելու և վրան հարկ դնելու համար: Նրա անունը Արդուն էր, մի քանի ընկերներով սա գալիս է և եռանգուն կերպով իւր գործին անցնում: Բնակչութիւնը խիստ տանջուած էր հարկահանների երկաթէ ծանրութեան տակ: Նրանք հարկ էին դնում հարստութեան և եկամուտի բոլոր աղբիւրների վրայ: «Իրանով էլ անբաւական — հարկ էին դնում կրկնակի կերպով քաղաքներում և գիւղերում եղած բոլոր գործաւորների վրայ, ձկնարանների վրայ, որոնք լճերում և գետերում ձուկն էին բռնում — հարկի տակ էին դնում բոլոր հանքերն ու երկաթանոցները, նաև ներկարարանոցները» (Կիր. 210): Համարում էին բոլորին, որոնք տաս տարեկանից բարձր էին, համարում և հարկի տակ էին դնում. միայն կանայք էին ազատ մնում (Կիր. 210): Նշանակուած է զլխահարկ և «իւրաքանչիւր գլուխ պարտաւորուած է վճարել հարկը լիար գարի, յիսուն լիար զինի, երկու լիար բրինձ, երկու պարդ յարդ, պարան, մի սպիտակ (արծաթէ զրամ), մի պայտ: Այդ հարկը Հուլաուն էր դրել և կոչւում էր թաղար: Թաղարը յետոյ փոփ է վերածւում և իւրաքանչիւր գլուխ պարտական էր այնուհետև տարեկան կամ 7—8 դահեկան վճարել կամ անկարողութեան դէպքում պարտական էր մահմեդականութիւն ընդունել: Այս դէպքում հարկը կոչւում էր խարամ, կամ խարճ: Բացի այդ կային և այլ հարկեր. մալ — տաւարի հարկ էր սա, իւրաքանչիւր քսան ընտանի անասուններից մի կենդանի և քսան սպիտակ. խապչուկ — դա էլ տաւարի հարկի մի տեսակն էր³⁾: Ընտանի կենդանիներից ձին ամենից շատ էր

գնահատուած թաթարների կողմից, որովհետև ամենից շատ էին գործածում նրանք: Նրանց ճանապարհորդութիւնը միշտ ձիով էր — խաղաղութեան միջոցին նոյն իսկ իրանց ժամանակի մեծ մասը նրանք ձիերի վրայ էին անցկացնում: Հայկական երկվարները — արագոտն և փոքր — պէտք է որ թաթարների յատուկ ուշադրութեան առարկայ եղած լինէին և իսկապէս եղել էլ են: «Թաթարները դատարկում են երկիրը ձիերից և ջորիներից. ոչ ոք չէր կարող ձի պահել ուրիշ նպատակների համար, բացի պատերազմի ծառայութիւնից» (Կիրակոս 143):

Հարկատուութեան ենթարկուած է ամենայն ինչ և ամեն ոք. բացառութիւն են կազմում միայն եկեղեցիները, վանքերն ու հոգեւորականները:

Բացի նուաճուած երկիրներից թաթարական զնդերն ևս պարտական էին իրանց ունեցածի մի տասներորդը մեծխանին տալ, որպէս հարկ (Կիր. 135): Նուաճողական կռիւների ժամանակ թաթարական բանակը սկսած գեներալներից մինչև ամենահասարակ զինւորը մեծ հարստութիւն են դիզում: Ամեն անգամ, երբ որ և է քաղաք էին առնում, լաւ կողոպտում և յափշտակում էին նրա մէջ եղածը և թաթար զինւորը գնալով հարստութեան տէր էր դառնում: Ամենայն թանգագին ու արժէքաւոր բան իրան էր իւրացնում թաթար զինւորականը և այդպիսով պետական գանձարանը զրկւում էր իւր կարեւորագոյն աղբիւրից: Այժմ հրաման է գալիս պետութեան կենդրոնից, որ թաթարական բանակն ևս պարտական է իւր հարստութեան համեմատ մասնակցել պետութեան գանձարանի լցուելուն: Դա Գուլուկ մեծխանի հրամանն էր և համապատասխան էր անշուշտ իրերի բնական պայմաններին:

Մասամբ զրանով էլ բացատրելի է, որ թաթարների ընչասիրութիւնն ու ազահութիւնն աւելի մեծանում է: Թաթարական զինւորականն աշխատում է այժմ այդ եղանակով կրած իւր կորուստներն հատուցանել աւելի մեծ կողոպուտով և աւելի անպատկառ շահագործումով: Միւս կողմից հարկահաններն աւելի անկուշտ և խիստ են դառ-

3) Կիրակոս 210. Մաղ. 22. Վարդան 182. Մանանդեան 121—122. Վրացի տարեգիրը մի ուրիշ հարկ էլ է յիշում: Թիֆլիզ քաղաքում մի հարկահան կար «qu'il levait l'impôt sur chaque agneau ou mouton acheté pour la cuisine même du roi: c'est ce qu'on appelait thaghma» — Brosset 556. Թաթարների հարկերի բոլոր տեսակները հաւաքուած են պրֆ. Շիմանի գրքի մէջ. Russland Polen n. Livland I, 315.

նում: Ժողովուրդն ու նրա իշխանները տալիս էին ամեն բան, ինչ որ ունեին, բայց և այնպէս օտարները չէին կշտանում: Շատ իշխաններ ծախում էին իրանց ստացուածքը, բերդերն ու ամրոցները կամ գրաւ էին դնում, որպէս զի կարողանան անյուր հարկերը վճարել: Բայց թաթարները միշտ մնում էին դեռ անբաւական և անկշտում: Ժողովուրդը թողնում է տափաստանները և սարերն է քաշւում, որպէս զի, թէև քաղցած և կարիքաւոր, կարողանար գոնէ կեանքի ապահովութիւն ունենալ: Իշխանները խմբերով հեռաւոր ճանապարհ են ընկնում դէպի Կարակորում մեծխանի մօտ—գանգատ տալու ազա հարկահանների վրայ և գինւորների անսանձ ոտնձգութիւնների դէմ բողոքելու⁴): Մեծխաները, որոնք իրանց նուաճած երկիրներէց անագին տարածութիւններով էին բաժանուած և այդ երկիրների ներքին վիճակի մասին այնքան էլ ճշգրիտ տեղեկութիւններ չունէին միշտ, շատ անգամ բարեհաճ ունկնգրութիւն էին շնորհում այդ տեսակ գանգատաւոր իշխաններին ու թագաւորներին և զգալի կերպով մեղմացնում էին ստորագրեալ ժողովուրդների վիճակը:

4) Օրբելեան 299. Կիր. 146, 208, 217, 229—30. Մաղաք. 22—23. Արդունի դէմ բողոքողներ կային նաև նրա քաղաքական թշնամիների միջից, որոնք նրա տակը փորում էին նրա պաշտօնը ձեռք բերելու համար: Արդունը մեծխանի արքունիք է հրապարակում հաշիւ տալու: Հայոց թագաւորի Սմբատ եղբայրն էլ մեծխանի պալատումն էր այդ ժամանակ և Արդունին անձամբ շատ լաւ ճանաչում էր, ուստի և յօգուտ նրա վկայութիւն է տալիս և այդպիսով փրկում է Արդունի կեանքը: յետոյ նրա հետ միասին դառնում է Հայաստան և Վրաստան: Արդունի շնորհակալութիւնն այնուհետև արտայայտւում է նրանով, որ հարկահանական սխառմը Հայաստանում համեմատաբար մեղմանում է և հողերոսկան ու եկեղեցական կալուածքները ազատւում են հարկից:—Արդունը մեծ ազդեցութիւն է ձեռք բերում նաև Հայաստանում և Վրաստանում: Հուլիսու խանի որդու ժամանակ ևս նա անտեսական կառավարութեան գլուխ էր: Նրա մահը տեղի է ունեցել 1275 թ.: Տես S. Martin I, 281—282.

Գ Ր Ս Կ Ս Ն Ո Ի Թ Ի Ի Ն.

Մասենագրական—կենսագրական համառօտ ակնարկ
գործածած հայ աղբիւրների.

ԺԳ. դարը հայոց քաղաքական և մտաւոր կեանքի մէջ նշանակալից է նրանով, որ այդ ժամանակներից սկսւում է աւելի խիստ արտայայտուել ազգային կեանքի բոլոր շրջաններում քայքայման, տարրալուծման պրոցեսը: Մեծ Հայաստանում այդ օրերին մարում են Հայկական անկախ հարստութիւնների վերջին նշոյլները: Երկրի մեծ մասը ընկնում է մինչև այսօր տեղ մահմեդական լծի տակ ու աւար է լինում երբեք չյագեցող նոր տէրերի: Խանգարւում, ջլատւում է հոգեւոր կեանքի զարգացումը. կեանքի և ստացուածքի անապահովութիւնը, անձի անազատ, մշտապէս վտանգաւոր դրութիւնը, երկրի շարունակաբար դատարկումը և բնակիչների անընդհատ աղքատացումը ոչ մի հնարաւորութիւն չեն թողնում այլ ևս կուլտուրական աշխատանքով պարապելու:

Մոնղոլների արշաւանքը վերջին մեծ հոսանքն էր, որ Հայաստանի վրայով անցաւ: Եւ ԺԳ. դարն ևս մեր պատմութեան մէջ վերջին շրջանն է, երբ պատմագրութիւնը—որ միշտ հետևում է մեծ եղելութիւնների, և ծագկում միայն այն ժամանակ, երբ ընդհանուր երկրի բախտը շոշափող իրողութիւններ են կատարւում—մի անգամ ևս աչքի ընկնող պտուղներ է տալիս: Հանդէս են գալիս մի քանի պատմագիրներ, որոնք նպատակ են դնում յաջորդ սերունդներին հաղորդել իրանց նոր տէրերի՝ մոնղոլ—թաթարների մասին, մի նպատակ, որ նոքա շատ հեշտութեամբ կարող էին իրագործել, որովհետև հնարաւորութիւն ունեին անձամբ տեղն ու տեղը ուսումնասիրել եկւորներին: Շնորհիւ այս պատմագիրների է, որ ԺԳ. դարը

հայոց պատմագրութիւնը հարուստ է բազմաթիւ արժէքաւոր ու կարեւոր տեղեկութիւններով մոնղոլների քաղաքական զինւորական գործողութիւնների և նուաճումների, ինչպէս նաև նրանց զինւորական գործելակերպի, նրանց սովորութիւնների ու կրօնական հասկացողութիւնների, այլ և նրանց արտաքին ու ներքին նկարագրի մասին, տեղեկութիւններ, որոնք ոչ միայն հաստատուում են հարեան և արեւմտեան երկրների ժամանակակից պատմագրերի և ճանապարհորդների կողմից, այլ և այս վերջիններէ լրացմանն ու ստուգմանն են ծառայում: Եւրոպացի գիտնականները վաղուց է, որ հասկացել են հայկական այս աղբիւրների արժանիքը. դրան ապացոյց կարող է ծառայել այն հանգամանքը, որ Եւրոպական զանազան լեզուներով բազմաթիւ թարգմանութիւններ, քաղուածքներ ու ուսումնասիրութիւններ կան այդ աղբիւրների վերաբերեալ: Յետագայում յիշեալ պատմագրերի մասին կենսագրական շատ համառօտ տեղեկութիւններ կըտանք, աշխատելով միկնոյն ժամանակ նրանց պատմական երկերի հրատարակութիւնների ու թարգմանութիւնների ամփոփ պատկերը ներկայացնել:

1. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ.

Կ. Գանձակեցու կենսագրութեան միակ աղբիւրը նրա պատմական երկասիրութիւնն է: Ծնուել է Գանձակում 1201 թուին: (Կիր. 152 եր.) Ուսել է ժամանակի նշանաւոր ուսուցչի՝ Վանական Վարդապետի մօտ: Նրա հետ էլ թաթարների ձեռքն է ընկել. յետոյ Վանական Վարդապետին փրկանքով ազատել են, իսկ Կիրակոս ծածուկ փախել է գերութիւնից: Նրա «Հայոց Պատմութիւնը» սկսում է ս. Գրիգոր Լուսաւորչից և ընդհանուր, խոշոր գծերով գալիս հասնում է իւր ժամանակները, երբ նրա գործը դառնում է աւելի մանրամասն և հէնց դրա համար առաջնահարգ աղբիւր Հայաստանի և նրա հարեան երկրների պատմութեան համար: Հանգամանօրէն պատմում է նա մեզ թաթարների ծագման, նոցա չառաջխաղացման, զինւորական յաջողութիւնների ու նուաճումների մասին. այլ և նրանից իմանում ենք թաթարների արտաքին, նրանց զինւորական հմտութեան, կրօնական ըմբռնումները

մասին: Իբրեւ աղբիւր նրան ծառայում են այն բերանացի պատմութիւններն ու տեղեկութիւնները, որ նա լսել է թաթարական բարձրաստիճան անձնաւորութիւններից: Կիրակոսի մեզ հայորդած վերջին պատմական տեղեկութիւնը Հուլաու խանի մասին է 1265 թուին. այստեղ համարեա անսպասելի կերպով ընդհատում է նրա պատմութիւնը: Աշխատանքի առաջին մասը նա գրել է 1241 թուին իսկ վերջինը—իւր վերջին տարիներում: Նա մեռած պէտք է լինի 1272 թուին, ուրեմն 71 տարեկան:

Նրա «Պատմութիւնը» առաջին անգամ լոյս է տեսել Մոսկվայում, Ոսկան Տէր Գէորգեան Յովհաննիսեանցի Չանքիրով 1858 թ. երկրորդ հայերէն հրատարակութիւնը Վենետիկում՝ Միքիթարեան միաբանութեան մէջ 1865 թ. 8^o, X+265. [Մեր ձեռքի տակ այդ հրատարակութիւնն է եղել]: Ֆրանսերէն լիակատար թարգմանութիւն M. Brosset-ի «Deux Historiens Arméniens Kirakos de Gantzag, Oukthanès d'Ourha» Պետերբուրգ 1870—71, 4^o, 1—194: Հրատարակուել են նաև քաղուածքներ. M. Brosset: Additios et éclaircissements à l'histoire de la Georgie. St. Pétersbourg 1851, 412—437. E. Dulaurier, Extrait de l'histoire de Guiragos (Recueil des hist. des Croisades-ի մէջ, I 411—30): F. Dulaurier, Les mongols d'après les historiens arméniens I. Extrait de Kirakos (Journal Asiatique XV 1833, երես 193—214, 273—305). К. П. Паткановъ: Исторія монголовъ по армянскимъ источникамъ, Петербургъ 1974, I—II (Պատմական հայ մատենագրութիւններից արած քաղուածքների): Այդ քաղուածքները ինչպէս և Պատկանեանի բոլոր թարգմանութիւնները ընթացակցում են բանասիրական, պատմական, աշխարհագրական նկատողութիւններ, որոնք շատ խնամքով կադմուած են): M. Petermann, Traduction latine de quelque passage de Kirakos.

2. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.

Վարդան վարդապետը, որ Մեծ անունն է վաստակել յետնորդներից, 13-րդ դարի հռչակաւոր դէմքերից է: Վանական Վարդապետի մօտ Կիրակոսի հետ ամբարած իւր բազմաշատ գիտութիւններով, Սիցիլիայում, Պաղեստինում, Հայաստանի բոլոր մասերում կատարած յաճախակի ճանապարհորդութիւնների միջոցին ձեռք բերած իւր կենցաղագիտութեամբ ու փորձառութեամբ Վարդանը իրան նման շատ քիչ ժամանակակիցներ ունէր 13-րդ դարում: Դժբախտաբար քիչ են կենսագրական տեղեկութիւնները այս մարդու մասին: Յայտնի է, որ նա Կիլիկիայում է ծնուել:

հայոց պատմագրութիւնը հարուստ է բազմաթիւ արժէքաւոր ու կարեւոր տեղեկութիւններով մոնղոլների քաղաքական զինւորական գործողութիւնների և նուաճումների, ինչպէս նաև նրանց զինւորական գործելակերպի, նրանց սովորութիւնների ու կրօնական հասկացողութիւնների, այլ և նրանց արտաքին ու ներքին նկարագրի մասին, տեղեկութիւններ, որոնք ոչ միայն հաստատուում են հարևան և արևմտեան երկրների ժամանակակից պատմագրերի և ճանապարհորդների կողմից, այլ և այս վերջինների լրացմանն ու ստուգմանն են ծառայում: Եւրոպացի գիտնականները վաղուց է, որ հասկացել են հայկական այս աղբիւրների արժանիքը. դրան ապացոյց կարող է ծառայել այն հանգամանքը, որ Եւրոպական զանազան լեզուներով բազմաթիւ թարգմանութիւններ, քաղուածքներ ու ուսումնասիրութիւններ կան այդ աղբիւրների վերաբերեալ: Յետագայում յիշեալ պատմագրերի մասին կենսագրական շատ համառօտ տեղեկութիւններ կըտանք, աշխատելով միևնույն ժամանակ նրանց պատմական երկերի հրատարակութիւնների ու թարգմանութիւնների ամփոփ պատկերը ներկայացնել:

1. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ.

Կ. Գանձակեցու կենսագրութեան միակ աղբիւրը նրա պատմական երկասիրութիւնն է: Ծնուել է Գանձակում 1201 թուին: (Կիր. 152 եր.) Ուսել է ժամանակի նշանաւոր ուսուցչի՝ Վանական Վարդապետի մօտ: Նրա հետ էլ թաթարների ձեռքն է ընկել. յետոյ Վանական Վարդապետին փրկանքով ազատել են, իսկ Կիրակոս ծածուկ փախել է գերութիւնից: Նրա «Հայոց Պատմութիւնը» սկսում է ս. Գրիգոր Լուսաւորչից և ընդհանուր, խոշոր գծերով գալիս համում է իւր ժամանակները, երբ նրա գործը դառնում է աւելի մանրամասն և հէնց դրա համար առաջնակարգ աղբիւր Հայաստանի և նրա հարևան երկրների պատմութեան համար: Հանգամանօրէն պատմում է նա մեզ թաթարների ծագման, նոցա յառաջնադարման, զինւորական յաջողութիւնների ու նուաճումների մասին. այլ և նրանից իմանում ենք թաթարների արտաքին, նրանց զինւորական հմտութեան, կրօնական ըմբռնումները

մասին: Իբրև աղբիւր նրան ծառայում են այն բերանացի պատմութիւններն ու տեղեկութիւնները, որ նա լսել է թաթարական բարձրաստիճան անձնաւորութիւններից: Կիրակոսի մեզ հաղորդած վերջին պատմական տեղեկութիւնը Հուլաու խանի մասին է 1265 թուին. այստեղ համարեա անսպասելի կերպով ընդհատուում է նրա պատմութիւնը: Աշխատանքի առաջին մասը նա դրել է 1241 թուին իսկ վերջինը—իւր վերջին տարիներում: Նա մեռած պէտք է լինի 1272 թուին, ուրիմ 71 տարեկան:

Նրա «Պատմութիւնը» առաջին անգամ լոյս է տեսել Մոսկվայում, Ոսկան Տէր Գէորգեան Յովհաննիսեանցի ջանքերով 1858 թ: Երկրորդ հայերէն հրատարակութիւնը Վենետիկում՝ Միքիթարեան միաբանութեան մէջ 1865 թ. 8^o, X+265. [Մեր ձեռքի տակ այդ հրատարակութիւնն է եղել]: Ֆրանսերէն լիակատար թարգմանութիւն M. Brosset-ի «Deux Historiens Arméniens Kirakos de Gantzag, Oukthanès d'Ourha» Պետերբուրգ 1870—71, 4^o, 1—194: Հրատարակուել են նաև քաղուածքներ. M. Brosset: Additios et éclaircissements à l'histoire de la Georgie. St. Pétersbourg 1851, 412—437. E. Dulaurier, Extrait de l'histoire de Guiragos (Recueil des hist. des Croisades-ի մէջ, I 411—30): F. Dulaurier, Les mongols d'après les historiens arméniens I. Extrait de Kirakos (Journal Asiatique XV 1833, երես 193—214, 273—305). К. П. Паткановъ: Исторія монголовъ по армянекимъ источникамъ, Петербургъ 1974, I—II (Պատկանեանի այս աշխատութիւնը մի հաւաքածու է մոնղոլների մասին խօսող հայ մատենագրութիւններից արած քաղուածքների: Այդ քաղուածքները ինչպէս և Պատկանեանի բոլոր թարգմանութիւնները ընթացակցում են բանասիրական, պատմական, աշխարհագրական նկատողութիւններ, որոնք շատ խնամքով կադմուած են): M. Petermann, Traduction latine de quelque passage de Kirakos.

2. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.

Վարդան վարդապետը, որ Մեծ անունն է վաստակել յետնորդներից, 13-րդ դարի հռչակաւոր դէմքերից է: Վանական Վարդապետի մօտ Կիրակոսի հետ ամբարած իւր լրագրաշատ դիտութիւններով, Սիցիլիայում, Պաղեստինում, Հայաստանի բոլոր մասերում կատարած յաճախակի ճանապարհորդութիւնների միջոցին ձեռք բերած իւր կենցաղագիտութեամբ ու փորձառութեամբ Վարդանը իրան նման շատ քիչ ժամանակակիցներ ունէր 13-րդ դարում: Դժբախտաբար քիչ են կենսագրական տեղեկութիւնները այս մարդու մասին: Յայտնի է, որ նա Կիլիկիայում է ծնուել:

1238 թուին ուխտի է գնացել Երուսաղէմ, վերադարձին հինգ տարի մնացել է Հայոց Կոստանդին կաթողիկոսի պալատում: Կենդանի մասնակցութիւն է ունեցել Սսի ազգային ժողովին 1243 թուին և յանձնարարութիւն է ստանում կաթողիկոսից, ժողովի որոշումները արեւելեան Հայաստան տանել—ազգի միւս մեծամեծներին ու վարդապետներին հաղորդելու: Իւր առաքելութիւնը կատարելուց յետոյ նա անցնում է Երկրի գանազան վանքերը—վարդապետելու և ուսուցանելու: Ինչպէս Մաղաքիա արեւման գրում է, Վարդանը մեռնում է խորին ծերութեան մէջ—1271 թուին:

Վարդանի անունով բազմաթիւ և բազմազան գրուածքներ են մնացել, որոնցից մէջ համար կարեւոր է նրա «Տիեզերական Պատմութիւնը»: Իզուր չէ այդպէս կոչւում այս գործը. կարճ ու մեղմ կերպով Վարդան 6000 տարիների պատմութիւն է անում աշխարհի սիզբից մինչև իւր ժամանակները: Բնականօրէն վերջին տարիները նա աւելի մանրամասն է դառնում և աւելի հետաքրքիր: Առանձնապէս հետաքրքրութիւն է ստանում նրա ճանապարհորդութիւնը գէպի Արևելք—Հուլաու խանի մօտ, նրա երկար ու մանրապատում հարց-պատասխանները այդ մեծ խանի հետ: Կիրակոսի պէս, իւր գործը Վարդան վերջացնում է Հուլաուի մահով:

Վարդանը թէև մեր միջնադարեան ազգային գրականութեան մէջ սովորական—աւանդական ըմբռնողութեան համաձայն Կիրակոսի հետ համեմատած աւելի բարձր ու արտօնեալ գիրք ունի, սակայն մենք կուզէինք առանձնապէս շեշտած լինել, որ Կիրակոս Գանձակեցին իւր պարզ ու անպաճոյճ ձևերով, իւր տեսածի ու լսածի ճշմարտապատում և ժողովրդական վերաբրտադրութեամբ ժամանակի կուլտուրապատմական լուսաբանութեան համար մեղ աւելի ապահով յենարաններ ու հափանիշներ է տալիս, քան նրա մեծ ժամանակակիցը՝ Վարդան Վարդապետը, որն անշուշտ իւր գիտնականութեամբ, կենսական իմաստութեամբ, զրական ճաշակով ու ընտիր ոճով անկասկած շատ գերազանց էր Կիրակոսից:

Հայերէն առաջին հրատարակութիւնը լոյս է տեսել Մոսկվայում Մ. Էմինի աշխատութեամբ 1861 թուին. «Տիեզերական Պատմութիւն Վարդանայ Բարձրաբերդեցւոյ».—Ապա Վենետիկում 1862 թ. 8^o IX+184.—Էմինի թարգմանութեամբ նաև ռուսերէն. Всеобщая История Вардана Великого 1861. М. Brosset: Analyse critique de la Всеобщ. Ист. de Vartan. St. Pétersbourg 1862 6^o 30 էրես:—E. Dulaurier տալիս է մի քաղուածք Recueil des historiens des Croisades. Documents arméniens, publiés par l'Académie des Inscriptions et Belles-Lettres 1869 I 431—43:—Մի այլ քաղ-

ուածք E. Dulaurier—Les Mongoles d'après les historiens arméniens fragments traduits sur les textes originaux (Journal Asiatique 1838 V, 192—255, 426—473, 481—508). Այլ և Պատկանեանի վերոյիշեալ ռուսերէն թարգմանութիւնը:

3. ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ ՀԱՅՈՅ.

Կիրիկիայի Հայոց Հեթում Ա. Թագաւորի եղբայրն էր սա և Կոստանդին աղանաւոր իշխանի որդին: Ծնուել է 1208 թ. և իւր ամբողջ կեանքն անց է կացրել Կիրիկիայում ի բաց առեալ Արևելքում կատարած նրա ճանապարհորդութիւնը: Իւր եղբորից ու հօրից քաղաքական բնաւորութեամբ յանձնարարութիւն է ստանում գնալ Գուելի խանի մօտ: Որպէս սպարապետ նա կոռուել է շատ ճակատամարտներում և մեռել է 1276 թուին: Սմբատ պատկանում է մեր այն միջնադարեան սակաւաթիւ գրողներին, որոնք հոգեւորական չեն: Նրա անունով մեղ հասել է այսպէս կոչուած «Տարեգրութիւնք»ը, որ համառօտակի պատմում է 951—1336 թ.թ. անցքերը. վերջին մասը ուրիշների յաւելում է: Սմբատի տարեգրութիւնները թէև աւելի տեղական բնաւորութիւն ունեն, բայց լոյս են սփռում նաև շրջակայ ազգերի և տեղերի պատմութեան վրայ:—Առաջին տպագրութիւնը լոյս է տեսել Մոսկուայում 1856 թ. Ոսկան Գ. Յովհաննիսեանի ջանքերով «Սմբատայ Սպարապետի եղբոր Հեթմոյ Առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս և Հայոց Մեծաց՝ ըստ կարգի ժամանակաց»։ Բ. հրատարակութիւնը Փարիզում Կ. Վ. Շահնազարեանի միջոցով «Տարեգրք»... վերնագրով: V. Langlois: «Extrait de la Chronique de Sempad... traduite pour la premiere fois de l'arménien» S. Pétersbourg 1862.—E. Dulaurier. Observations sur une traduction d'un Extrait de la Chronique de connétable Sempad (Revue de l'Orient-ի մէջ 1867, 1868.—E. Dulaurier: Chronique du Royaume de la Petite-Arménie, par le connétable Sempad)Recueil des historiens des Croisades; Documents arméniens 610—680).

4. ՄԱՂԱՔԻԱ ԱՐԵՂԱՅ.

Մաղաքիայի մասին կենսագրական ոչ մի տեղեկութիւն չունենք: Նրա գոյութեան և աշխատանքի միակ վկան նրա գործն է, որ հետեւեալ վերնագիրն ունի «Պատմութիւն ազգին նետոգաց»։ Մաղաքիան իրան անուանում է Վանական Վարդապետի աշակերտ և Վարդանի ու Կիրակոսի դասընկեր. ըստ այդմ նա պիտի ամբողջած ու գործած լինի 13-րդ դարի վերջին տասնամիակներում:—

Նրա գործը ընդգրկում է 44 տարի—մինչև 1275 թուականը և իւր ժամանակի անցքերի ու եղելութիւնների անմիջական, կենդանի մի պատմութիւն է: Կուղէինը շեշտած լինել, որ այս պարզ արեղայի պատմութիւնը յաճախ կուլտուրապատմական տեսակէտից աւելի արժէք ունին, քան միջնադարեան աստուածաբանների նուրբ տրակատները: Նրա հաղորդած քաղաքական դէպքերի պատմական ճշմարտութիւնն համարեա երբէք չի դաւաճանում իրականութեանը: Դժբախտաբար նա այդքան քիչ է զրեւ ու աւելի քիչ յայտնի է:—Մագաքիան համեմատաբար աւելի երկար ժամանակ է մոռացութեան մէջ մնացել: Միայն 1870 թ. Պատկանեանը լոյս է ընծայում հայերէնը Մոսկուայում և հետեւալ տարին նոյն գիտնականի հրատարակութեամբ երեան է գալիս նաև նրա ռուսերէն թարգմանութիւնը:

5. ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆ.

Ամենայն հաւանութեամբ սա ծնուած պէտք է լինի 1250—1260 թուերի մէջ (համա M. Brosset, Histoire de la Siounie par Stéphanos Orbélian II, 170): Սիւնիքի տէր Տարսաթ Նշանաւոր իշխանի որդին էր սա: Իւր տուած տեղեկութեան համաձայն 1280 թուին քահանայ է ձեռնադրուել և մնացել է Նորավանքում: Ապա հինգ տարի յետոյ երկրի մեծամեծների կողմից Կիլիկիա է ուղարկուած Հայոց կաթողիկոսից Եպիսկոպոս ձեռնադրուելու: Սակայն Յակոբ Ա. կաթողիկոսը մեռել էր մինչ այդ և Ստեփաննոս ստիպուած էր բաւական սպասել, մինչև որ Կոստանդին Ա-ը նրան Սիւնեաց աշխարհի համար եպիսկոպոս է ձեռնադրում: Վերադառնալով հայրենիք սկիզբ է դնում բազմակողմանի ու եռանդուն մի գործունէութեան: Յաճախ քաղաքական առաքելութիւններ է կատարել ու մեծ պատիւ ու յարգանք վայելել թաթար խաների ու իշխանների մօտ: Մեռել է 1304 թուին:—Իւր գլխաւոր գործն է «Պատմութիւնն Տանն Սիւսական»—որ նա գրել է Նորավանքում 1299 թուին: Օրբելեան տոհմի մասնաւոր մանրամասն պատմութիւնն է, որի 65-րդ գլուխը մեզ համար պատմական բարձր արժանիք է ստանում, որովհետև այդտեղ Ստեփաննոս եպիսկոպոսը պատմում է թաթար խաների և իշխանների կատարած գործերը Հայոց և մասնաւորապէս Սիւնեաց աշխարհում:

Առաջին հրատարակութիւնը լոյս է տեսել Պարիզում 1859 թ. Կարապետ Շահնազարեանի աշխատութեամբ: Բ. հրատկ. Մոսկուայում 1861 թ. Մ. Էմինի կողմից—«Պատմութիւն Տանն Սիւսական» վերնագրով (մեր ձեռքն եղել է այդ հրատարակութիւնը)* Ֆրանսերէն լիակատար հրատարակութիւնը լոյս է ընծայել M.

Brosset: Histoire de la Siounie par Stéphanos Orbélian, St. Pétersbourg, 1864 4^o, Ա. մաս 300 էրես, Բ. մաս 1866, էջ 186—306:— M. Brosset, Listes chronologiques des princes et métropolités de la Siounie, 1861:—Մի քանի անգամ յիշուած Պատկանեանի ռուսերէն քաղութաբ. մէջ 65, 69, 70 գլուխները (հայերէն բնագրի): 65-րդ գլխի առանձին հրատարակութիւնները յաճախ լոյս են տեսել Մագրասում 1775, Մոսկուայում 1858 և այլն:

6. ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻԶ.

Սա իւր «Պատմութիւն թաթարաց»—գործը գրել է 14-րդ դարի առաջին տարիներում: Օշինի իշխանի որդին էր Հեթումը, որ Հայոց Լեոն թագաւորի կողմից Հայկական բանակի հրամանատար է կարգուած: Սակայն շուտով Կիպրոս կղզին է քաշուած և 1305 թուին Պրեմոնստրատեանների վանքը մտնում և նուիրուած գրականութեանը: Հետեւալ տարին Հոռմ է գնում, ապա Աւինյոն՝ Կղեմէս V պապի մօտ, որը նրան մեծ պատուով ընդունում է և յանձնարարում Արեւելքի պատմութիւնը գրել, կանգ առնելով յատկապէս մոնղոլների, սաորիների, Կիլիկիայի և Պաղեստին վրայ: Հեթում ընդունում է յանձնարական և ոմն Նիկ. Ֆալկոն վանականին թելադրում է իւր գործը միջնադարեան Ֆրանսերէնում 1307 թուին:—Այս գործի գլխաւոր արժանիքը նրա աշխարհագրական, պատմական և կուլտուրապատմական նկարագրութիւններն են. իսկ նրա տեղեկութիւնները, որ նա պատմում է Հայոց թագաւորների և իշխանների, առանձնապէս Հեթում թագաւորի մասին, մեծ զգուշութեամբ պէտք է գործածել, որովհետև մոռանալու չէ, որ Հեթումը ամենից առաջ պալատական պատմիչ է: Յաճախ առանց գիտնորութեան, բնազդաբար իրողութիւններն այլ լուսարանութիւն են ստանում նրա մօտ:—Ինչպէս ասուեցաւ, նրա գործը գրուել է նախ Ֆրանսերէն, ապա Կղեմէս V պապի յանձնարարութեամբ նոյն Ֆալկոն վանականը լատիներէն է թարգմանել (1307), որից յետոյ լոյս են տեսել բազմաթիւ հրատարակութիւններ և թարգմանութիւններ, որոնցից յիշենք. Liber historierum partium Orientis Haythono auctore—1532, 1555 Բագէլում (այս հրատարակութիւնն ենք ունեցել մենք ձեռքի տակ): Մի այլ հրատարակութիւն 1585, մի ուրիշը Քիոլոնում՝ 1671 թուին. Historia orientalis quae de Tariaris inscribitur. Այս հրատարակութիւնից թարգմանուած է յետոյ Ֆրանսերէն, որից բազմաթիւ այլ ապագրութիւններ են լոյս ընծայուել:—1664-ին լոյս է տեսնում հոլլանդերէն իսկ 1635-ին իտալերէն թարգմանութիւնները: Հեթումի գործը անգլիերէն էլ մի քանի

անգամ լոյս է տեսնում: Զարմանալի է, որ նրա հայերէն հրատարակութիւնը շատ ուշ է լոյս տեսնում — 1842 թ. «Պատմութիւն թաթարաց» — թարգմ. Հ. Մ. Աւգերեան: — V. Langlois: Chronologie de Hethoum (Revue de l'Orient-ի մէջ 1863 եր. 103—114). E. Du-laurier-ի Փրանսերէն թարգմանութեան հետ հայերէն տեքստն էլ է տալիս — տես Recueil des hist. des Croisades I 471—490.

Դ. ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՅԻ.

Սրա անունով մեզ յայտնի է մի ժամանակագրութիւն, որ աշխարհի սկզբից մինչև 1289 թիւն է համարում: Մեզ համար կարևոր է նրա գործի վերջին երեսներում տուած այն տեղեկութիւնները, որոնք վերաբերում են թաթարների պատմութեանը: Առաջին հայերէն հրատարակութիւնը լոյս է տեսել Մոսկուայում 1860 թուին Մ. Էմինի ջանքերով 8⁰ 69 երես: 7 տարի յետոյ լոյս է տեսնում Պատկանեանի հրատարակութեամբ Բ. հայերէն տպագրութիւնը Պետերբուրգում, 1867 թ., որից յետոյ 1869 թ. երևում է նաև ռուսերէն հրատարակութիւնը: Լիակատար Փրանսերէն հրատարակութիւնը կատարել է M. Brosset: Histoire Chronologique par Mekhithar d'Aïrivank. St. Pétersbourg 1869, 8⁰ XXIII+110. M. Brosset: Etude sur l'histoire arm. Mekhithar («Mélanges asiatiques» 1864 V 315—30 և IV 1863 714—15).

8. M. Brosset: Analyse critique. St. Pétersbourg 1862.
9. Малакий инокъ. Исторія монголовъ, перев. Патканова 1871, Петербургъ.
10. V. Langlois: Extrait de la Chronique de Sempat, traduit de l'arménien, St. Pétersbourg 1862.
11. M. Brosset: Histoire chronologique par Mekhithar d'Aïrivank XIII S. trad. de l'arm. St. Pétersbourg 1869.
12. К. П. Паткановъ: Исторія монголовъ по арм. Источникамъ I—II 1873.
13. Raschid-Eldin: Histoire de mongols de la Perse, écrite en perse, trad. en français, accompagnée de notes par M. Quatremère I Paris 1836 (Թաշիզ Էլդինը Ղաղանխան սուլթանի վեզիրն էր և իւր նշանաւոր գործը գրել է 1294—1305 թուերին: Մեռել է 1320 թուին):
14. Aboul-Ghâzi: Histoire des mongols et des Tartares, publiée, traduite et annotée par le Baron Desmaisons II St. Pétersbourg 1874.

15. M. Brosset: Histoire de la Géorgie, depuis l'antiquité jus qu'au XXI^e siècle, trad. de Géorgien I jusqu'en 1469, Pétersbourg 1849.
17. Guillaume de Rubruquis: Récit de son voyage, traduit de l'original latin et annoté par Louis de Backer, Paris 1877. (Rubruquis-ը, որ յայտնի է նաև Robrouck կամ Ruysbroeck. ծնունդ է Բրարանդում 1220 թուին և մեռել է 1290-ին: Փրանսացոյ Լուդվիկ IX-ի յանձնարարութեամբ 1252 թուին նա ճանապարհորդում է Արևելքի շատ երկրներ, լինում է Կարակորումի մեծխանի մօտ, աշխատելով թաթարներին քրիստոնեայ դարձնել: Ինչ կասկած, որ յաջողութիւն չի ունենում: Նրա այդ ճանապարհորդութեան տպաւորութիւններն են ահա, որ նա պատմում է մեզ յիշեալ գրքում):
17. Marci Paule Veneti-de regionibus orientalibus, in Basileae 1532, 33.
18. И. П. Минаевъ: Путешествіе Марка Поло, переводъ съ древн. франц. Петербургъ 1902.
19. Johannis de Plano Carpini, antivariensis archiepiscopi, Historia Mongolarum, quos nos Tartaros apellamus. հրատարակութիւն M. d'Avezac, Paris 1838 (Plano Carpini-ն ծնունդ է շուրջ 1200 թ. Սա աշակերտ և օժանդակ էր Ասիայիցի Փրանցին և պապի կողմից զլխաւոր է կարգւում այն ղեկապանութեան, որ 1245 թ. Արևելեան զանազան թաթար խաների մօտ է գնում ապահով ու ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքելու համար):
20. Полное Собрание русскихъ лѣтописей, Петербургъ 1488.
21. Johannes Schiltberger: Reisen in Europa, Asien u Afrika von 1394—1427. հրատարակութիւն Karl Fr. Neumann-ի, Մինխէն, 1859:
22. Johannes de Monteille: Reysen und Wanderschaften im J. 1320. Գերմ. թարգմ. Otto von Demeringen Thumbherrn zu Metz, Cölln, 1600.
23. Johannes von Marignola: Reise in das Morgenland in Jahren 1339—1353, Լատիններէնից Գերմ. թարգմ. Fr. G. Meinert, Prag 1820 (Սա որպէս Bysinia-ի եպիսկոպոս սկզբում Բուլղարիայում պրոֆեսոր էր, ապա 1339 թուին որպէս պապական լիզատ Ասիա է գնում, Զինաստան, Հնդկաստան և թաթարստան: Նա վերջին նշանաւոր միսիոնարն է այս կողմերում: Եւրոպա վերադառնալիս նա անցնում է Պարսկաստանի Միջագետքի, Պաղեստինի և Կիպրոսի վրայով 1353):
24. Jean Baptiste Tavernier: Les six voyages en Turquie, en Perse et aux Indes Paris, 1676 I—II.

25. J. Pitton de Tournafort: Relation d'un voyage du Levant fait par ordre du Roy 1700—02 (*Յոճնաստան, Հայաստան, Վրաստան և Փոքր Ասիա*) Lyon 1717, *Երեք հատոր*:
26. J. Klaproth: Reise in Kaukasus und nach Georgien in den Jahren 1807—08 I 1812, II 1814 Halle u. Berlin.
27. Georg Bachfeld: Die Mongolen in Polen, Schlesien, Böhmen u. Mähren. Jnnsbruck 1889.
28. Gustav Strakosch-Grossmann: Der Einfall der Mongolen in Mitteleuropa in den Jahren 1241 u. 1242 Jnnsbruck 1893.
29. J. Jacob Schmidt: Forschungen im Gebiete der älteren, relig. polit. und liter. Bildungsgeschichte der... Mongolen, Petersburg, 1824.
30. W. Barthold: Zur Geschichte des Christentums im Mittelasien, *հրատարակութիւն* D. Rudolf Stube, Tübingen u. Leipzig, 1991.
31. В. Бартольдъ: Туркестанъ въ эпоху монгол. нашествія, часть II, Петербургъ, 1900.
32. A. Iwanovski: Die Mongolei, Leipziger Dissertation 1895.
33. Georg Huth: Geschichte des Buddhismus in der Mongolei (*Այս գրքի մէջ մեզ համար յատկապէս կարևոր էր նրա ներածութիւնը. «մոնղոլներէ քաղաքական պատմութիւնը»*) II *Շարասրուրդ 1896*.
34. M. Tangl: Die päpstlichen Kanzleiordnungen 1200—1500, Jnnsbruck, 1894 LXXXI+460 I 8°.
35. Sbaralea-Eubel: Bullarium Franciscanum, V.
36. Conrad Eubel: Hierarchia catholica medii aevi, ab anno 1198 usque ad annum 1431 perducta.
37. Joh. C. L. Gieseler: Lehrbuch der Kirchengeschichte Bonn, 1848 I—V.
38. Th. Schiemann: Russland, Polen, Livland—*մինչև 17-րդ դար, Բերլին, 1886*.
39. M. J. Saint-Martin: Mémoires historiques et géographiques sur l'Arménie I—II 1818, 19.
40. Abel-Rémusat: Mémoires sur les relations politiques... avec les empereurs mongols. Paris 1822.
41. Յ. Մանանդեան և Հր. Աճառեան. Հայոց նոր վիճակը, (1155—1843) *Վաղարշապատ 1903*.
42. Klaproth: Aperçu des entreprises des mongols en Géorgie et en Arménie, Paris 1833.
43. *Չամչեան, Հայոց Պատմութիւն, Վենետիկ 1786, I—III*.
44. Ս. Պալասանեան, Հայոց Պատմութիւն, Թիֆլիս, 1890.
45. Царевичъ Давидъ: Краткая Ист. Грузии, Петербургъ, 1805.
46. O. Wolff: Geschichte des Mongolen... Breslau 1872.

47. Hammer-Purgstall: Geschichte der Goldenen Horde in Kiptschak. Pesth. 1840.
 48. Geschichte der Ilchane, I—II, Darmstadt, 1842.
 49. d'Ohisson: Histoire des Mongols depuis Tschinguizkham jusqu'à Timour-Lang avec une carte de l'Asie XIII siècle I—II Paris 1824.
 50. M. Petis de la Creix: Histoire du Grand Genghizcan, Paris 1710.
 51. Пыпинъ: Исторія русск. литературы I—IV,
 52. Н. Delbrück: Kriegskunst im Rahmen der pol. Gesch. III 1907, 2 Aufl.
 53. Հ. Յ. Տաշեան. Յուշակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վիճակ. *Վիեննա 1895*.
 54. G. Zarbanalian: Les études armenienes en Europe, XIV—XIX, Venedig, 1895.
 55. Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ—ԺԳ դար) Գ. տիպ. *Վենետիկ 1897*.
 56. Հայկական նոր դպրութեան պատմութիւն. *Վենետիկ 1878* (Այս վերջին չորս աշխատութիւնները մեզ պէտք են եկել յատկապէս մատենագրական տեղեկութիւններէ համար):
 57. Ritters Geogr.-Statistisches Lexikon, 8 Aufl. I—II Leipzig 1895.
 58. A. Müller: Der Islam im Morgen u. Abendlande, 2 Bnde, Berlin 1886—87.
 59. G. Droysen: Allgemeiner historischer Handatlas, Leipzig, 1886.
 60. Helmolt: Weltgeschichte.
- Գործիս վերջում քաղցր պարտականութիւնս եմ համարում Բերլինի համալսարանի երկու պրոֆեսորներին՝ գաղտնի խորհրդական Թ. Շիմանին և Տանգլին խորին շնորհակալութիւնս յայտնելու իմ աշխատանքիս ընթացքում նոցա ցոյց տուած վերին աստիճանի սիրալիք վերաբերմունքի համար. այլ և պ. պ. Սիրական Տիգրանեանին ու Ստեփան Կանայեանին, որոնք սիրով ուղարկեցին գրական-մատենախօսական մի քանի տեղեկութիւններ: Կարևոր եմ համարում յայտնել նաև այն, որ ներկայ աշխատութիւնս ըստ կարելոյն բառացի թարգմանութիւն է գերմաներէն բնագրից:

ՅԱՆԱ



Երես

Առաջաբան 5

I Թարգմանի աղբաւանք

1. Ընդհ. հայեացք արեւելեան պատմութեան վրայ
միջին դարում 7
2. Թաթարական առաջապահը Հայաստանում և վրաս-
տանում 13
3. Մոնղոլները մինչև Չարմազանի գալը 21
4. Չարմազան և Հայաստանի ու վրաստանի նուաճումը 24
5. Բաշու և Փոքր-Ասիայի նուաճումը 33
6. Հուլաու խանը և Բաղդադի խալիֆ. բարձումը . 38
7. Յուելուած I 47
8. Յուելուած II 49

II Մոնղոլները

1. Մոնղոլների արտաքին տեսքը և սովորութիւնները 51
2. Մոնղոլների կրօնը 56
3. Մոնղոլների ռազմագիտութիւնը 69
4. Կարգի վերահաստատումն և հարկահանութիւն . 79
5. Գրականութիւն 85



ՀՀ Ազգային գրադարան



NL0412774

5125

